

ՄԱՐԴՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ
ԱՊԱՀՐՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ
/ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



European
Social
Charter

Charte
sociale
européenne



ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ՄԱՐԴՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԾՐԱԳԻՐ/ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Պրոֆեսոր Փոդրիկ Զեննա,
Գոլվեյի համալսարան, Իռլանդիա

Եվրոպայի խորհուրդ

Սույն աշխատության
մեջ արտահայտված
կարծիքները հեղինակ(ներ)ի
պատասխանատվությունն են և կարող
են չարտացոլել Եվրոպայի խորհրդի
պաշտոնական քաղաքականությունը:

Այս հրապարակումը մշակվել է
Եվրոպայի խորհրդի «Մարդու
սոցիալական իրավունքների
ամրապնդումը Հայաստանում»
ծրագրի շրջանակներում,
որն իրականացվում է Եվրոպայի
խորհրդի «Հայաստանի համար
իրականացվող գործողությունների
2023-2026թթ ծրագրի» ներքո

Սույն փաստաթղթի ամբողջական
կամ մի մասի վերարտադրման կամ
թարգմանության հետ կապված բոլոր
հարցումները պետք է ուղղվեն
Հաղորդակցության հարցերով
տնօրինությանը (F-67075 Ստրասբուրգ
Սեդեքս կամ publishing@coe.int):

Սույն փաստաթղթի հետ կապված
ցանկացած այլ նամակագրություն
պետք է ուղարկվեն Եվրոպական
սոցիալական խարտիայի վարչություն,
DGI, Եվրոպայի խորհուրդ, F-67075
Ստրասբուրգ:
Սեդեքս կամ social.charter@coe.int.

Այս հրապարակումը չի խմբագրվել
SPDP խմբագրական բաժնի կողմից
տպագրական և քերականական
սխալները շտկելու համար:

Կազմը և էջադրումը՝
BRANDBOOK LLC

Լուսանկարները՝
Shutterstock

www.coe.int

Այս գեկույցի պատրաստումը հանձնարարվել է Եվրոպայի խորհրդի կողմից «Մարդու սոցիալական իրավունքների ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում՝ Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության, Սոցիալական իրավունքների, առողջապահության և շրջակա միջավայրի գլխավոր տնօրինության, Համագործակցության բաժնի, Սոցիալական իրավունքների դեպարտամենտի առաջարկով:

Զեկույցը նպաստում է Շրջանակային փաստաթղթի նախագծի կազմմանը, որն անդրադառնում է ՍԻԵԿ-ի և այլ համապատասխան միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում գտնվող՝ բնակարանի իրավունքին և բնակարանային ապահովման համակարգերին առնչվող վեց ոլորտների: Շրջանակային փաստաթղթի նախագիծը կոչված է օգնելու Հայաստանում բնակարանային ապահովման ընդհանուր ռազմավարության շրջանակներում սոցիալական բնակարանային ապահովման ռազմավարություն մշակողներին:

Հայաստանը վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան վավերացրել է 2004 թվականի հունվարի 21-ին և ընդունել է դրա 98 կետերից 67-ը: Դրանք ինքնաշխատ եղանակով ինկորպորացվում են ներպետական իրավունքում¹:

Բնակարանային ապահովման իրավունքը հիմնականում կարգավորվում է Եվրոպական սոցիալական խարտիայի և վերանայված խարտիայի 16-րդ, 19(4), 30-րդ և 31-րդ հոդվածներով: Թեև Հայաստանը չի ընդունել խարտիայի 16-րդ, 30-րդ և 31-րդ հոդվածները,² սույն Շրջանակային փաստաթուղթը նախատեսում է, որ այդ հոդվածները կարող են ընդունվել բնակարանային ապահովման ռազմավարության իրականացման ընթացքում, և հետևաբար հղում է արվում այդ հոդվածներին:

Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը որպես ակնկալվող արդյունքներից մեկը դիտարկում է վերանայված Եվրոպական սոցիալական խարտիային համահունչ Հայաստանում սոցիալական իրավունքների պահպանման ապահովումը³: Այս ակնկալվող արդյունքները ներառում են Հայաստանի կողմից առաջանցիկ քայլեր՝ կոլեկտիվ բողոքների ընթացակարգի և Եվրոպական սոցիալական խարտիայի լրացուցիչ դրույթների ընդունման ուղղությամբ: Գործողությունների ծրագրի ցուցիչներից են՝ սոցիալական իրավունքների վերաբերյալ Եվրոպական չափանիշներին համահունչ օրենսդրության առկայությունը և Սոցիալական իրավունքների Եվրոպական կոմիտեի (ՍԻԵԿ) մոնիթորինգի գործընթացի շրջանակներում տրամադրվող տվյալների որակը⁴:

Հայաստանը նաև ընդունել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով պարտավորությունները, այդ թվում՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան, «Երեխաների իրավունքների մասին»

1 <https://rm.coe.int/armenia-september2023-en-2774-7972-2248-1/1680ad3991>

2 <https://rm.coe.int/second-report-on-the-non-accepted-provisions-of-the-european-social-ch/16809661b1>

3 <https://rm.coe.int/ap-armenia-2023-2026/1680a977bf>, էջ 24:

4 <https://rm.coe.int/ap-armenia-2023-2026/1680a977bf>, էջ 47:

կոնվենցիան, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, որոնք բոլորն էլ ներառում են բնակարանային ապահովման իրավունքների վերաբերելի հայեցակետեր⁵:

Զեկույցը ներկայացնում է ՍԻԵԿ-ի նախադեպային իրավունքը պլանավորված սոցիալական բնակարանային ապահովման ռազմավարության հիմնական ոլորտներում: Դրանք են՝ բնակարանի իրավունքն ու մատչելիությունը, բնակարանի՝ ընդհանուր և նվազագույն չափանիշները, նվազագույն սոցիալական բնակարանային չափանիշների համար հիմնականում օգտագործվող ցուցիչների սահմանումը (վերանայումը), լավագույն գործելակերպերը՝ ներառյալ սպասարկման ստանդարտ գործելակերպերը և գործունեության ստանդարտ ընթացակարգերը (ԳՍԸ) սոցիալական բնակարանային ապահովման, պլանավորման, շահագործման, հատկացման և սոցիալական բնակարանային ֆոնդի կառավարման ու պահպանման ոլորտներում, համապատասխանությունն ու մատչելիությունը, ինչպես նաև այլ հայեցակետեր, որոնք անհրաժեշտ են սոցիալական բնակարանային ապահովման ռազմավարությունը ոլորտի միջազգային պահանջներին համապատասխանեցնելու համար: Զեկույցը նաև հիմնվում է բնակարանային ապահովման ավելի լայն ժամանակակից հետազոտությունների վրա՝ առաջարկելով մոդելներ, որոնք թույլ կտան սոցիալական բնակարանային ապահովման ռազմավարությունը դարձնել երկրի ընդհանուր բնակարանային ապահովման ռազմավարության մի մասը: Այն անդրադառնում է փաստաթղթում դիտարկվող՝ փախստականների և խոցելի համայնքների վերաբերյալ հարցերին, այդ թվում՝ կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցներին: Զեկույցը նաև ուսումնասիրում է շահույթ չհետապնդող սոցիալական բնակարանային ապահովման հայեցակարգն ու նպատակները՝ կրկին հիմնվելով բնակարանային ապահովման քաղաքականության ավելի լայն ուսումնասիրությունների վրա: Ներկայացված են նաև սոցիալական բնակարանային ֆոնդը կառավարող կազմակերպությունների կառուցվածքի և գործառնությունների մասով լավագույն գործելակերպերը, կառավարման մոդելները և միջազգային լավագույն գործելակերպի մոդելները: Զեկույցը նաև անդրադառնում է զբաղվածության հնարավորություններին, կրթությանը, առողջապահությանը և սոցիալական ենթակառուցվածքներին՝ սոցիալական բնակարանային ապահովման նախաձեռնությունների համատեքստում:

Պրոֆեսոր Փոդրիկ Զեննա
Իրավունքի դպրոց,
Գոլվեյի համալսարան,
Իռլանդիա:

Padraic.kenna@universityofgalway.ie

7 հունիսի, 2024թ.

5 «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն ողջունում է Հայաստանի կողմից գործադրվի իրավունքի վերաբերյալ նորմերի վերանայումը, հարցեր է բարձրացնում աղքատության դեմ պայքարի միջոցների և սոցիալապես անապահով անձանց ու փախստականների համար բնակարանային ապահովման ծրագրերի վերաբերյալ»՝ <https://www.ohchr.org/en/news/2023/10/committee-economic-social-and-cultural-rights-commends-armenia-revising-rules-right>, ՄԱԿ-ի պայմանագրային հարցերով մարմնի տվյալների բազա՝ https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/Treaty.aspx?CountryID=8&Lang=EN:

[illegible]

[illegible]

1. Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի (ՍԻԵԿ) Նախադեպային իրավունքը

Բնակարանի իրավունքը և մատչելիությունը

Բնակարանի իրավունքը կարգավորվում է Եվրոպական սոցիալական խարտիայի և վերանայված խարտիայի 16-րդ, 19(4), 30-րդ և 31-րդ հոդվածներով: Այս բաժնում դիտարկվում է այդ հոդվածներից յուրաքանչյուրի վերաբերյալ ՍԻԵԿ-ի Նախադեպային իրավունքը:

Չորված 16. Ընտանիքը, որպես հասարակության հիմնական միավոր, ունի պատշաճ սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանվածության իրավունք՝ ապահովելու դրա լիարժեք զարգացումը:

Ընտանիքի՝ որպես հասարակության հիմնական միավորի լիարժեք զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են խթանել ընտանեկան կյանքի տնտեսական, իրավական և սոցիալական պաշտպանվածությունն այնպիսի միջոցներով, ինչպիսիք են սոցիալական և ընտանեկան նպաստները, ֆիսկալ միջոցառումները, ընտանիքին բնակարանով ապահովումը, նորապսակներին նպաստների հատկացումը և այլ համապատասխան միջոցներ:

16-րդ հոդվածի շրջանակը չի սահմանափակվում միայն ամուսնության հիմքով ընտանիքի դիտարկմամբ: Քանի որ «ընտանիք» հասկացությունը տարբեր երկրներում և տարբեր ժամանակներում տարբեր է, ՍԻԵԿ-ը հղում է կատարում յուրաքանչյուր Կողմ պետության ներպետական իրավունքով նախատեսված սահմանումներին⁶: Ընտանիք նշանակում է երեխա ունեցող ծնողների տնային տնտեսություն՝ ներառյալ միայնակ ծնողները և երիտասարդ զույգերը, որոնք կարող են երեխա ունենալ⁷: Ընտանիքի այն անդամները, որոնք 19Տ6 հոդվածով երաշխավորված՝ ընտանիքի վերամիավորման իրավունքին համապատասխան գտնվում են Կողմ պետության տարածքում, ընտանիքի պաշտպանվածությանը վերաբերող բոլոր հարցերում արժանանում են տվյալ երկրի քաղաքացիներին հավասար նույն վերաբերմունքին⁸: Կողմ պետությունները կարող են ընտրել տարբեր տեսակի ընտանիքների սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանվածությունն արդյունավետորեն ապահովելու միջոցները՝ ներառյալ միայնակ ծնողով ընտանիքներն ու խոցելի ընտանիքները, ինչպես, օրինակ, գնչուների ընտանիքները⁹:

16-րդ հոդվածը երաշխավորում է ընտանիքների համար համապատասխան ստանդարտի բնակարան ունենալու իրավունքը: Իրականում, այն փաստը, որ բնակարանի իրավունքն ամրագրված է Նախ խարտիայի 31-րդ հոդվածում, չի խոչընդոտում ընտանիքների սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանվածության իրավունքի ապահովման համատեքստում 16-րդ

6 Եզրակացություններ 2011թ., Ադրբեջան: Այնուամենայնիվ, ներպետական իրավունքով չպետք է նախատեսվի անհարկի սահմանափակող սահմանում:

7 Եզրակացություններ XVII-1 (2005), Թուրքիա:

8 Եզրակացություններ XVI-1 (2002), 12Տ4 և 16-րդ հոդվածների վերաբերյալ մեկնաբանություն:

9 Եզրակացություններ 2006թ., 16-րդ հոդվածի վերաբերյալ մեկնաբանություն:

հողվածից բխող՝ բնակարանային ապահովման համապատասխան խնդիրների դիտարկումը¹⁰: «Համապատասխան ստանդարտի» բնակարանի սահմանում երկու հողվածներում նույնն է: Որպեսզի բավարարվեն 16-րդ հողվածի պայմանները, Կողմ պետությունները պետք է խթանեն ընտանիքների համար համապատասխան ստանդարտի բնակարանով ապահովումը, բնակարանային ապահովման քաղաքականություններում հաշվի առնեն ընտանիքների կարիքները և ապահովեն, որ առկա բնակարանները լինեն համապատասխան ստանդարտի: Դրանք պետք է ներառեն նաև հիմնական ծառայությունները (ինչպիսիք են ջեռուցումը և էլեկտրամատակարարումը):

Բնակարանի իրավունքը թույլ է տալիս բազմաթիվ այլ իրավունքների իրացումը՝ ինչպես քաղաքացիական, այնպես էլ քաղաքական, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և մշակութային: Այն նաև առաջնային նշանակություն ունի ընտանիքի համար: Կոմիտեն վկայակոչում է իր նախկին նախադեպային իրավունքը՝ ընդգծելով, որ 16-րդ հողվածի պայմանները բավարարելու համար պետությունները պետք է խթանեն ընտանիքների համար համապատասխան բնակարանային ապահովումը, բնակարանային ապահովման քաղաքականություններում հաշվի առնեն ընտանիքների կարիքները, ապահովեն, որ հասանելի բնակարանները լինեն համապատասխան ստանդարտի և ներառեն հիմնական ծառայությունները (ինչպիսիք են ջեռուցումը և էլեկտրամատակարարումը): Կոմիտեն արձանագրել է, որ համապատասխան ստանդարտի բնակարան ոչ միայն նշանակում է, որ բնակարանը պետք է ստանդարտից ցածր չլինի և ունենա հիմնական հարմարություններ, այլև լինի համապատասխան չափերի՝ հաշվի առնելով բնակվող ընտանիքի կազմը: Ավելին, բնակարանի կարիքը բավարարելու և այն տրամադրելու պարտավորությունը տարածվում է անհիմն վտարումից պաշտպանության վրա¹¹:

Կողմ պետությունները պարտավոր են ձեռնարկել իրավական և գործնական միջոցներ, որոնք անհրաժեշտ և համարժեք են 16-րդ հողվածի իմաստով համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքի արդյունավետ պաշտպանության նպատակին: Այս նպատակին պետք է հասնել ողջամիտ ժամկետում, չափելի առաջընթացով և առկա ռեսուրսների առավելագույն օգտագործմամբ¹²:

Ընտանիքներին նաև պետք է հասանելի լինեն հատուկ բնակարանային նպաստներ (օրինակ՝ դրամաշնորհներ կամ սուբսիդիաներ տան ձեռքբերման կամ կառուցման համար, հիփոթեքի մարումների հարկային արտոնություններ, առաջին անգամ տուն ձեռք բերելու դեպքում վարկի սուբսիդավորում, վարձավճարի սուբսիդավորում, բնակարանի նպաստ և այլն)¹³: Բնակարանային ապահովման սուբսիդիաներ հատկացնելու հարցում մյուս Կողմ պետությունների քաղաքացիների և փախստականների ընտանիքների նկատմամբ պետք է ապահովվի հավասար մոտեցում¹⁴: 16-րդ հողվածի այն մասը, որը սահմանում

10 Գնչուների իրավունքների եվրոպական կենտրոնը (ERRC) ընդդեմ Բուլղարիայի, բողոք թիվ 31/2005, 2005 թվականի հոկտեմբերի 10-ի ընդունելիության մասին որոշում, §9:

11 Գնչուների իրավունքների եվրոպական կենտրոնը (ERRC) ընդդեմ Հունաստանի, բողոք թիվ 15/2003, 2004 թվականի դեկտեմբերի 8-ի ըստ էության որոշում, §24:

12 Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH) ընդդեմ Բելգիայի, բողոք թիվ 62/2010, 2013 թվականի մարտի 21-ի որոշում, §113:

13 Եզրակացություններ XVII-1 (2005), Թուրքիա:

14 <http://hudoc.esc.coe.int/eng?i=2019/def/AUT/16/EN>

է ընտանիքների՝ համապատասխան ստանդարտի բնակարան ունենալու և կացարանից չզրկվելու իրավունքը, վերաբերում է նաև տվյալ երկրում անօրինական ձևով գտնվող օտարերկրյա ընտանիքներին¹⁵:

Խարտիայի 16-րդ հոդվածով նախատեսված՝ ընտանիքի բնակարանի իրավունքի կիրառումն ապահովելու համար պետք է բավարարվեն նույն պահանջները, որոնք սահմանված են 31-րդ հոդվածում՝ համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքի համար¹⁶: Կողմ պետությունները պարտավոր են՝

- ա ընդունել անհրաժեշտ իրավական, ֆինանսական և գործառական միջոցներ՝ խարտիայով սահմանված նպատակներին հասնելու ուղղությամբ կայուն առաջընթաց ապահովելու համար.
- բ վարել կարիքների, ռեսուրսների և արդյունքների վերաբերյալ բովանդակալից վիճակագրություն.
- գ ձեռնարկել ընդունված ռազմավարությունների ազդեցության կանոնավոր գնահատումներ.
- դ սահմանել ժամանակացույց և անորոշ ժամանակով չհետաձգել յուրաքանչյուր փուլի նպատակներին հասնելու վերջնաժամկետը.
- ե ուշադրություն դարձնել որդեգրված քաղաքականության ազդեցությանը յուրաքանչյուր կատեգորիայի շահագրգիռ անձանց, մասնավորապես՝ առավել խոցելի խմբերի վրա¹⁷:

Այնուամենայնիվ, Խարտիայի 16-րդ հոդվածի համաձայն՝ վերը նշված պահանջներից յուրաքանչյուրը և բոլորը միասին չբավարարելը *per se* (ինքնին) չի հանգեցնում ընտանիքի բնակարանի իրավունքի խախտման: Նաև բոլոր պահանջների կամ դրանց մեծամասնության բավարարումը չի բացառում, որ տվյալ իրավիճակում ընտանիքի բնակարանի իրավունքն ապահովելու պետության պարտավորությունը կարող է պատշաճորեն չկատարվել: ՍԻԵԿ-ը յուրաքանչյուր իրավիճակ ուսումնասիրում է ըստ դրա էության և առանձնահատկությունների, դեպք առ դեպք վերլուծության հիման վրա՝ հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները¹⁸:

Համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքի արդյունավետությունը 16-րդ հոդվածի իմաստով պահանջում է իրավական պաշտպանություն՝ վտարման դեմ համապատասխան ընթացակարգային երաշխիքների միջոցով¹⁹: Նման դեպքերում բնակիչները և վարձակալները պետք է իրավունք ունենան օգտվելու մատչելի և անկողմնակալ դատական կամ այլ պաշտպանության միջոցներից՝ բողոքարկման արդյունավետ ընթացակարգով: Վտարման վտանգի տակ գտնվող անձանց իրավական պաշտպանությունը պետք է սահմանված լինի օրենքով և ներառի հետևյալը. վտարման այլընտրանքային լուծումներ

15 Երեխաների պաշտպանության միջազգային կազմակերպությունը (DCI) ընդդեմ Բելգիայի, բողոք թիվ 69/2011, 2012 թվականի հոկտեմբերի 20-ի ըստ էության որոշում, §136:

16 Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH) ընդդեմ Իռլանդիայի, բողոք թիվ 110/2014, ըստ էության որոշում, 2017 թվականի մայիսի 12, §25-26:

17 Անօթևանների հետ աշխատող ազգային կազմակերպությունների եվրոպական ֆեդերացիան (FEANTSA) ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 39/2006, 2007 թվականի դեկտեմբերի 5-ի ըստ էության որոշում, §56:

18 Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH) ընդդեմ Իռլանդիայի, բողոք թիվ 110/2014, 2017 թվականի մայիսի 12-ի ըստ էության որոշում, §110:

19 Եզրակացություններ 2015թ., Ավստրիա:

գտնելու նպատակով տուժողների հետ խորհրդակցելու պարտավորություն,²⁰ վտարման վերջնաժամկետի մասին ողջամիտ ծանուցման ժամկետ սահմանելու պարտավորություն, գիշերային ժամերին կամ ձմռանը վտարում իրականացնելու արգելք, իրավական պաշտպանության միջոցների մատչելիություն, իրավաբանական օգնության մատչելիություն, փոխհատուցում ապօրինի վտարման դեպքում: Նույնիսկ այն դեպքում, երբ վտարումը տեղի է ունենում, այն պետք է իրականացվի շահագրգիռ անձանց արժանապատվության նկատմամբ հարգանք ապահովող պայմաններով, կարգավորվի մարդու իրավունքները պաշտպանող նորմերով և ուղեկցվի այլընտրանքային կացարանի տրամադրման առաջարկներով²¹: Անօրինական բնակության դեպքում Կողմ պետությունների կողմից կիրառվող վտարման չափորոշիչները չպետք է անհիմն խստացվեն, և ցանկացած վտարում պետք է կատարվի գործող ընթացակարգային կանոններին համապատասխան, ընդ որում պետք է բավարար չափով պաշտպանվեն ազդակիր անձանց իրավունքները²²:

Այն դեպքում, երբ ընտանիքները տեղահանվում են ռազմական հակամարտությունների գոտուց, Կողմ պետությունները 16-րդ հոդվածի համաձայն պատշաճ քայլեր ձեռնարկելու պոզիտիվ պարտավորություն ունեն՝ բնակարան տրամադրելու և երաշխավորելու զբաղեցված բնակարանում կացությունը տեղահանված ընտանիքների համար, որոնք կորցրել են բնակարանի իրավունքը և ցանկանում են վերադառնալ իրենց երկիր, կամ հուսալքվել են, որ կվերադառնան՝ բնակարանի կորստի և պաշտպանության հնարավորությունների բացակայության պատճառով²³:

Ինչ վերաբերում է խոցելի խմբերին, ապա ծանր հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված խնամքի լուծումներ և սոցիալական ծառայություններ չապահովելը, որի պատճառով շատ ընտանիքներ ստիպված են ապրել վատ պայմաններում և իրենց այլևս համայնքի մաս չեն համարում, հավասարազոր է ընտանիքի՝ որպես հասարակության միավորի պաշտպանության բացակայության, ինչը խախտում է Խարտիայի 16-րդ հոդվածը²⁴: Դա վերաբերում է նաև գնչուներին, որոնք իրենց ողջ պատմության ընթացքում, որպես փոքրամասնություն, դարձել են սոցիալական անապահովության և խոցելիության վառ օրինակ²⁵: Օրենքով սահմանված բնակարանի իրավունքից բխող բոլոր իրավունքներն ու պարտականությունները պետք է տարածվեն բնակարանային ապահովման բոլոր ձևերի նկատմամբ՝ ներառյալ այլընտրանքային ձևերը, ինչպիսին են, օրինակ, վագոն-տնակները²⁶:

20 Եզրակացություններ 2011թ., Ադրբեյջան:

21 Գնչուների իրավունքների եվրոպական կենտրոնը (ERRC) ընդդեմ Իտալիայի, բողոք թիվ 27/2004, 2005 թվականի դեկտեմբերի 7-ի ըստ էության որոշում, §41:

22 Գնչուների իրավունքների եվրոպական կենտրոնը (ERRC) ընդդեմ Հունաստանի, բողոք թիվ 15/2003, 2004 թվականի դեկտեմբերի 8-ի ըստ էության որոշում, §51:

23 Բնակարանի իրավունքի և վտարումների կենտրոնը (COHRE) ընդդեմ Խորվաթիայի, բողոք թիվ 52/2008, 2010 թվականի հունիսի 22-ի ըստ էության որոշում, §63:

24 Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH) ընդդեմ Բելգիայի, բողոք թիվ 75/2011, 2013 թվականի մարտի 18-ի ըստ էության որոշում, §187:

25 Բնակարանի իրավունքի և վտարումների կենտրոնը (COHRE) ընդդեմ Իտալիայի, բողոք թիվ 58/2009, 2010 թվականի հունիսի 25-ի ըստ էության որոշում, §§ 39-40:

26 Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH) ընդդեմ Բելգիայի, բողոք թիվ 62/2010, 2013 թվականի մարտի 21-ի որոշում, §74:

Հոդված 19(4)-ը սահմանում է.

Ցանկացած մյուս Կողմի տարածքում միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների պաշտպանվածության և օգնություն ստանալու իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝ ... իրենց տարածքներում օրինականորեն գտնվող այդպիսի աշխատողների համար ապահովել ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք, քան իրենց քաղաքացիների նկատմամբ կիրառվող վերաբերմունքն է հետևյալ հարցերի կապակցությամբ՝ այնքանով, որքանով այդ հարցերը կարգավորվում են օրենքով կամ կանոնակարգերով կամ ենթակա են վարչական մարմինների վերահսկողությանը... գ. բնակատեղը:

Այս ենթավերնագրի ներքո Կողմ պետությունների պարտավորությունն է վերացնել պետական և մասնավոր բնակարանների մատչելիության հարցում ցանկացած իրավական և փաստացի խտրականություն²⁷: Անկանոն միգրանտները, սակայն, 19Տ4(գ) հոդվածի կարգավորման շրջանակում չեն²⁸: Սակայն, եթե անձինք 19(4) հոդվածի պաշտպանության ներքո են, ապա չպետք է լինեն բնակարանի գնման²⁹, սուբսիդավորվող բնակարանի կամ բնակարանի գնման համար օգնության, այդ թվում՝ վարկերի կամ այլ նպաստների մատչելիության իրավական կամ փաստացի սահմանափակումներ³⁰: 19Տ4(գ) հոդվածով նախատեսված հավասար վերաբերմունքի իրավունքը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ առկա է համապատասխան վարչական որոշումներն անկախ մարմնի բողոքարկելու իրավունք³¹:

Հոդված 30. Աղքատությունից և սոցիալական բացառումից պաշտպանվածության իրավունքը

Յուրաքանչյուր ոք ունի աղքատությունից և սոցիալական բացառումից պաշտպանվածության իրավունք:

Աղքատությունից և սոցիալական բացառումից պաշտպանվածության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝

- ա համընդհանուր և համակարգված մոտեցման շրջանակներում միջոցներ ձեռնարկել՝ աջակցելու սոցիալական բացառման կամ աղքատության վիճակում ապրող կամ այդ ռիսկի տակ գտնվող անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքներին, մասնավորապես՝ աշխատանքի տեղավորման, բնակարանի, ուսուցման, կրթության, մշակութային, սոցիալական և բժշկական օգնության արդյունավետ մատչելիության նպատակով,

27 Գնչուների իրավունքների եվրոպական կենտրոնը (ERRC) ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 51/2008, 2009 թվականի հոկտեմբերի 19-ի ըստ էության որոշում, §§ 111-113, Բնակարանի իրավունքի և վտարումների կենտրոնը (COHRE) ընդդեմ Իտալիայի, բողոք թիվ 58/2009, 2010 թվականի հունիսի 25-ի ըստ էության որոշում, §§ 145-147 («Ե» հոդվածի խախտում՝ 19Տ4(գ) հոդվածի հետ համակցությամբ):

28 Գնչուների իրավունքների եվրոպական կենտրոնը (ERRC) ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 51/2008, 2009 թվականի հոկտեմբերի 19-ի ըստ էության որոշում, §§ 111-113, Բնակարանի իրավունքի և վտարումների կենտրոնը (COHRE) ընդդեմ Իտալիայի, բողոք թիվ 58/2009, 2010 թվականի հունիսի 25-ի ըստ էության որոշում, §§ 145-147:

29 Եզրակացություններ IV (1975), Նորվեգիա, Եզրակացություններ 2019թ., Ալբանիա:

30 Եզրակացություններ III (1973), Իտալիա, Եզրակացություններ 2019թ., Ալբանիա:

31 Անօթևանների հետ աշխատող ազգային կազմակերպությունների եվրոպական ֆեդերացիան (FEANSA) ընդդեմ Նիդերլանդների, բողոք թիվ 86/2012, 2014 թվականի հուլիսի 2-ի ըստ էության որոշում, §204, վկայակոչելով՝ Եզրակացություններ XV-1 (2000), Ֆինլանդիա:

բ անհրաժեշտության դեպքում վերանայել այդ միջոցները՝ դրանք հարմարեցնելու նպատակով:

Հոդված 30-ով Կողմ պետություններից պահանջվում է որդեգրել ընդհանուր և համակարգված մոտեցում, այդ թվում՝ մշակել վերլուծական շրջանակ, առաջնահերթությունների շարք և սոցիալական իրավունքների՝ ներառյալ բնակարանային ապահովման մատչելիության խոչընդոտները կանխելու և վերացնելու համապատասխան միջոցներ³²: Սոցիալապես բացառված կամ անբարենպաստ վիճակում գտնվող այն խմբերի, այդ թվում՝ խնամքի և տեղավորման կենտրոններից օգտվելու հնարավորությունից զրկված՝ հաշմանդամություն ունեցող չափահասների վերաբերյալ հավաստի տվյալների և վիճակագրության բացակայությունը խոչընդոտում է այդ անձանց սոցիալական պաշտպանության նկատմամբ «ընդհանուր և համակարգված մոտեցումը» և նրանց համար նպատակային քաղաքականության մշակումը³³: 30-րդ հոդվածին համապատասխանությունը գնահատելիս ՍԻԵԿ-ը հաշվի է առնում մոնիթորինգի երկու համակարգերին համապատասխան (զեկուցման ընթացակարգ և կոլեկտիվ բողոքարկման ընթացակարգ) խարտիայի այլ նյութաիրավական դրույթներով նախատեսված ներպետական միջոցները կամ գործելակերպերը³⁴:

Հոդված 31. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի իրավունք

Այս դրույթը Սոցիալական խարտիայի ամենաընդգրկուն հոդվածն է բնակարանի իրավունքի վերաբերյալ և ներառում է երեք տարր՝ խթանել համապատասխան ստանդարտի բնակարանի մատչելիությունը, կանխել և նվազեցնել անօթևանությունը՝ աստիճանաբար վերացնելու նպատակով, և մատչելի դարձնել բնակարանի գինը նրանց համար, ովքեր չունեն բավարար միջոցներ: Այս հոդվածի շրջանակում ընդգրկված են նաև փախստականները, որոնց նկատմամբ պետք է հնարավորինս բարենպաստ վերաբերմունք դրսևորվի³⁵: Ապաստարանի իրավունքը պետք է երաշխավորվի անկանոն միգրանտների՝ ներառյալ երեխաների համար, քանի դեռ նրանք գտնվում են պետության իրավագործության ներքո³⁶:

Համապատասխան ստանդարտի բնակարանի մատչելիությունը **Հոդված 31§1-ը սահմանում է.**

Բնակարանի իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել՝ խթանելու պատշաճ չափանիշների համապատասխանող բնակարանի մատչելիությունը:

32 Եզրակացություններ 2013թ., 30-րդ հոդվածի վերաբերյալ մեկնաբանություն:

33 Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH) ընդդեմ Բելգիայի, բողոք թիվ 75/2011, 2013 թվականի մարտի 18-ի որոշում, §§ 193, 197:

34 Եզրակացություններ 2013թ., 30-րդ հոդվածի վերաբերյալ մեկնաբանություն:

35 Եզրակացություններ 2015թ., փախստականների իրավունքների վերաբերյալ մեկնաբանություն:

36 Անօթևանների հետ աշխատող ազգային կազմակերպությունների եվրոպական ֆեդերացիան (FEANTSA) ընդդեմ Նիդեռլանդների, բողոք թիվ 86/2012, 2014 թվականի հուլիսի 2-ի ըստ էության որոշում, §61:

Կողմ պետությունները պետք է յուրաքանչյուրի համար երաշխավորեն համապատասխան ստանդարտի բնակարան ունենալու իրավունքը³⁷: Դա ներառում է իրավական և գործնական միջոցների ձեռնարկում, որոնք անհրաժեշտ և համարժեք են այդ իրավունքի արդյունավետ պաշտպանության համար³⁸: Այն նաև պահանջում է համապատասխան ընթացակարգային երաշխիքներ և մատչելի ու անաչառ դատական կամ այլ իրավական պաշտպանության և բողոքարկման միջոցների մատչելիություն³⁹:

Կողմ պետությունները պետք է խթանեն բնակարանի մատչելիությունը, մասնավորապես՝ խոցելի անձանց տարբեր խմբերի համար, ինչպիսիք են ցածր եկամուտ ունեցող անձինք, գործազուրկները, միայնակ ծնողները, երիտասարդները, հաշմանդամություն ունեցող անձինք՝ ներառյալ հոգեկան առողջության խնդիրներ ունեցողները⁴⁰:

ՍԻԵԿ-ը պարզաբանել է, որ «համապատասխան ստանդարտի բնակարանը» պետք է սահմանվի օրենքով և վերաբերում է ոչ միայն նոր բնակարանաշինությանը, այլև առկա բնակարանային ֆոնդին⁴¹, ինչպես նաև վարձակալված և սեփականություն հանդիսացող բնակարաններին⁴²: «Համապատասխան ստանդարտի բնակարան» նշանակում է՝

1. բնակատեղ, որը սանիտարահիգիենիկ և առողջապահական տեսանկյունից անվտանգ է, այսինքն՝ ապահովված է բոլոր հիմնական հարմարություններով, ինչպիսիք են ջուրը, ջեռուցումը, թափոնների հեռացումը, սանիտարական սարքավորումները, էլեկտրականությունը և այլն, և որտեղ վերահսկվում են հատուկ վտանգները, ինչպիսիք են կապարի կամ ասբեստի առկայությունը.
2. բնակատեղ, որը չափազանց մարդաշատ չէ, որի չափը պետք է համապատասխանի մարդկանց թվին և բնակվող տնային տնտեսության կազմին.
3. բնակատեղ՝ վտարումից պաշտպանությամբ, որը երաշխավորված է օրենքով: Այս հարցը դիտարկվում է 31§2 հոդվածում⁴³:

ՍԻԵԿ-ը նաև նշել է, որ որոշ փախստական և ապաստան հայցող՝ առանց ուղեկցության երեխաներին ժամանակավոր կացարաններում (արտակարգ իրավիճակների համար նախատեսված հյուրանոցներում և անվտանգ գոտիներում) երկար ժամանակ պահելը չի համապատասխանում նրանց հատուկ հանգամանքներին, կարիքներին և ծայրահեղ խոցելիությամբ պայմանավորված երկարաժամկետ կացարան տրամադրելու պահանջին, և խախտում է 31§1 հոդվածը⁴⁴:

37 Եզրակացություններ 2003թ., Ֆրանսիա:

38 Գնչուների և ճանապարհորդների եվրոպական ֆորումը (ERTF) ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 64/2011, 2012 թվականի հունվարի 24-ի ըստ էության որոշում, §95:

39 Եզրակացություններ 2003թ., Ֆրանսիա:

40 Եզրակացություններ 2003թ., Իտալիա:

41 Եզրակացություններ 2003թ., Ֆրանսիա:

42 Նույն տեղում:

43 Նույն տեղում:

44 Իրավաբանների միջազգային հանձնաժողովը (ICJ) և Փախստականների և վտարանդիների հարցերով եվրոպական խորհուրդը (ECRE) ընդդեմ Հունաստանի, բողոք թիվ 173/2018, 2021 թվականի հունվարի 26-ի ըստ էության որոշում, §14:

ՍԻԵԿ-ը նաև հիմնվել է ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական իրավունքների կոմիտեի (ՄԱԿ ՏՍԻԿ) օրենսդրության «համապատասխանություն» գաղափարի վրա, որը բնակարանի համապատասխանությունը որոշելու համար առանձնացնում է յոթ չափորոշիչ:⁴⁵

- ա կացարանի ապահովություն՝ ներառյալ անհիմն վտարումից պաշտպանությունը, անկախ գույքի և կացության տեսակից (տան սեփականություն, վարձակալություն, ոչ ֆորմալ բնակեցում և այլն)։
- բ ծառայությունների, նյութերի, հարմարությունների և ենթակառուցվածքների հասանելիություն՝ ներառյալ բնական և ընդհանուր ռեսուրսների մատչելիությունը, որոնք բոլորն էլ կարևոր են առողջության, անվտանգության, հարմարավետության և սնուցման համար։
- գ մատչելիություն՝ ներառյալ պաշտպանությունը վարձավճարների անհիմն բարձր մակարդակից և հետագա բարձրացումից, որպեսզի չվտանգվի կամ չխոչընդոտվի այլ կենսական կարիքների և իրավունքների ձեռքբերումը և բավարարումը։
- դ բնակելիություն՝ պաշտպանվածություն ցրտից, խոնավությունից, շոգից, անձրևից, քամուց և առողջությանն ու անվտանգությանն սպառնացող այլ վտանգներից։
- ե հասանելիություն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով վնասվելու, անբարենպաստության և խտրականության մեծ ռիսկի տակ գտնվող խմբերի և անհատների կարիքներին։
- զ աշխատանքի, բուժհաստատությունների, դպրոցների, տրանսպորտի և այլ հարմարությունների հասանելիությունն ապահովող տեղադրություն՝ հաշվի առնելով բնապահպանական նկատառումները։
- է մշակութային համարժեքություն՝ նյութերի և գործիքների օգտագործում, որոնք համարժեք կերպով ճանաչում և արտահայտում են բնակչության մշակութային ինքնությունն ու բազմազանությունը։

ՍԻԵԿ-ը բազմիցս հայտարարել է, որ ընտանիքների համար բնակարանի իրավունքը ներառում է համապատասխան ստանդարտի բնակարան և հիմնական ծառայություններից օգտվելու հնարավորություն։

Այս առումով Կոմիտեն հաշվի է առնում ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 4-րդ ընդհանուր մեկնաբանությունը, որը սահմանում է, որ «Համապատասխան ստանդարտի բնակարանը պետք է բնակելի լինի՝ բնակիչներին համապատասխան տարածքով ապահովելու և նրանց ցրտից, խոնավությունից, շոգից, անձրևից, քամուց կամ առողջության այլ սպառնալիքներից, կառուցվածքային վտանգներից և հիվանդություններ փոխանցող կենդանիներից պաշտպանելու համար։ Բնակիչների ֆիզիկական անվտանգությունը նույնպես պետք է երաշխավորված լինի» և որ «համապատասխան ստանդարտի բնակատեղը պետք է ունենա որոշակի հարմարություններ, որոնք էական նշանակություն ունեն առողջության, անվտանգության, հարմարավետության և սնվելու համար։ Համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքի բոլոր շահառուների համար մշտապես պետք է հասանելի լինեն բնական և ընդհանուր ռեսուրսները, խմելու անվտանգ ջուրը, մնդի պատրաստման, ջեռուցման և լուսավորության համար էներգիան, սանիտարահիգիենիկ և լվացքի միջոցները, մնդի պահեստավորման, աղբի հեռացման, տարածքի ջրահեռացման և արտակարգ իրավիճակների ծառայությունները»:⁴⁶

45 Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH) ընդդեմ Իռլանդիայի, բողոք թիվ 110/2014, 2017 թվականի մայիսի 12-ի ըստ էության որոշում, §118:

46 Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH) ընդդեմ Իռլանդիայի, բողոք թիվ 110/2014, 2017 թվականի մայիսի 12-ի ըստ էության որոշում, §118:

ՍԻԵԿ-ը պարզաբանել է, որ պետական մարմինները պարտավոր են բնակարաններին՝ համապատասխան ստանդարտի լինելն ապահովել տարբեր միջոցառումներով, ինչպիսիք են բնակարանային ֆոնդի գույքագրումը, պարտավորություններն անտեսող սեփականատերերի նկատմամբ դատական ակտերը, կառուցապատման կանոնները և բնակատեղի պահպանումն ապահովելու տանտերերի պարտավորությունները⁴⁷։ Կողմ պետությունները պետք է ցույց տան, թե ինչպես է ստուգվում առկա բնակարանային ֆոնդի (վարձակալված, մասնավոր կամ պետական սեփականություն հանդիսացող) համապատասխանությունը, արդյոք կանոնավոր ստուգումներ իրականացվում են և ինչ հետագա քայլեր են ձեռնարկվում, երբ որոշվում է, որ բնակատեղը չի համապատասխանում վերաբերելի կարգավորումներին⁴⁸։ Պետությունն այս հարցերում չի կարող շրջանցել պատասխանատվությունը։ Նույնիսկ եթե ներպետական իրավունքի համաձայն տեղական կամ տարածքային իշխանությունները, արհմիությունները կամ մասնագիտական կազմակերպությունները պատասխանատու են որոշակի գործառնության իրականացման համար, հարտիայի Կողմ պետություններն իրենց միջազգային պարտավորությունների շրջանակում պարտավոր են ապահովել, որ այդ պարտականությունները պատշաճորեն կատարվեն⁴⁹։

Անօթևանություն-Հոդված 31§2-ը սահմանում է.

Բնակարանի իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել՝ կանխելու և կրճատելու անօթևանությունը՝ նպատակ ունենալով հասնելու դրա աստիճանական վերացմանը։

Անօթևան անձինք այն անձինք են, ովքեր իրենց տրամադրության տակ չունեն օրինական բնակատեղ կամ այլ համապատասխան բնակարան⁵⁰։ Անօթևանության կրճատումը ենթադրում է այնպիսի միջոցների ներդրում, ինչպիսիք են անօթևաններին անհապաղ ապաստարանի և խնամքի տրամադրումը, ինչպես նաև միջոցառումներ՝ նրանց օգնելու հաղթահարել իրենց դժվարությունները և կանխելու վերադարձն անօթևանության⁵¹։

Կողմ պետությունները պարտավոր են միջոցներ ձեռնարկել՝ կանխելու խոցելի խմբերի անօթևանությունը։ Դա պահանջում է, որ Կողմ պետություններն իրականացնեն բնակարանային ապահովման քաղաքականություն բոլոր անապահով խմբերի համար՝ ապահովելու սոցիալական բնակարաններին և բնակարանային նպաստներին մատչելիությունը⁵²։

Հոդված 31§2-ը նաև պարտավորեցնում է Կողմ պետություններին սահմանել ընթացակարգային երաշխիքներ՝ սահմանափակելու վտարման վտանգը, նույնիսկ

47 Եզրակացություններ 2003թ., Ֆրանսիա։

48 Եզրակացություններ 2019թ., Թուրքիա, Ուկրաինա։

49 Գնչուների իրավունքների եվրոպական կենտրոնը (ERRC) ընդդեմ Հունաստանի, բողոք թիվ 15/2003, 2004 թվականի դեկտեմբերի 8-ի ըստ էության որոշում, §29։

50 Եզրակացություններ 2003թ., Իտալիա։

51 Եզրակացություններ 2003թ., Շվեդիա։

52 Եզրակացություններ 2003թ., Շվեդիա, Եզրակացություններ 2005թ., Լիտվա, Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսը (CEC) ընդդեմ Նիդեռլանդների, բողոք թիվ 90/2013, 2014 թվականի հուլիսի 1-ի ըստ էության որոշում, §136։

անօրինական բնակության դեպքում⁵³: Վտարման վտանգի ենթարկված անձանց իրավական պաշտպանությունը պետք է ներառի վտարմանն այլընտրանքային լուծումներ գտնելու նպատակով տուժողների հետ խորհրդակցելու և վտարումից առաջ ծանուցման ողջամիտ ժամկետ սահմանելու պարտավորություն: Մնանկության կամ ապօրինի բնակության պատճառով վտարվելու դեպքում մեկամսյա ծանուցման ժամկետը ողջամիտ չէ⁵⁴: Երբ տեղի է ունենում վտարում, այն պետք է իրականացվի ազդակիր անձանց արժանապատվության նկատմամբ հարգանքի պայմաններում, չպետք է կատարվի գիշերային ժամերին կամ ձմռանը, և այն դեպքում, երբ դա արդարացվում է հանրային շահով, իշխանությունները պետք է միջոցներ ձեռնարկեն վերաբնակեցման համար կամ ֆինանսական աջակցություն տրամադրեն ազդակիր անձանց⁵⁵: Անօրինական վտարման դեպքում նաև պետք է տրամադրվի փոխհատուցում⁵⁶:

Ապաստարանի իրավունքը

Համաձայն 31§2 հոդվածի՝ որպես արտակարգ լուծում անօթևաններին տրամադրվում է ապաստարան⁵⁷: Ապաստարանում գտնվող անձանց արժանապատվության նկատմամբ հարգանքն ապահովելու համար ապաստարանները պետք է համապատասխանեն առողջապահության, անվտանգության և հիգիենայի չափանիշներին և, մասնավորապես, հագեցած լինեն տարրական հարմարություններով, ինչպիսիք են մաքուր ջրի և ջեռուցման հասանելիությունը և բավարար լուսավորությունը⁵⁸: Սակայն, ժամանակավոր կացարանը պարտադիր չէ, որ համապատասխանի մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության պաշտպանության և հարմարավետության նույն պահանջներին, որոնք սահմանվում են համապատասխան ստանդարտի բնակարանների ավելի մշտական ձևերի դեպքում, եթե դրանց նվազագույն պահանջները բավարարված են⁵⁹: Ապաստարաններում պայմանները պետք է լինեն այնպիսին, որ հնարավորություն ընձեռեն ապրել արժանապատիվ պայմաններում, իսկ անօթևան մարդիկ ողջամիտ ժամկետում պետք է ապահովվեն համապատասխան բնակարաններով⁶⁰: ՍԻԵԿ-ը գտնում է, որ ապաստարանից վտարումը՝ առանց այլընտրանքային կացարանի տրամադրման, պետք է արգելվի⁶¹:

Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել օգնելու անօթևաններին հաղթահարել իրենց դժվարությունները և կանխելու կրկին անօթևանության վիճակում նրանց հայտնվելը:

53 Եզրակացություններ 2003թ., Շվեդիա, Եզրակացություններ 2005թ., Լիտվա, Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսը (CEC) ընդդեմ Նիդեռլանդների, բողոք թիվ 90/2013, 2014 թվականի հուլիսի 1-ի ըստ էության որոշում, §136:

54 Եզրակացություններ 2019թ., Ուկրաինա:

55 Եզրակացություններ 2003թ., Շվեդիա:

56 Եզրակացություններ 2003թ., Շվեդիա:

57 Երեխաների պաշտպանության միջազգային կազմակերպությունը (DCI) ընդդեմ Նիդեռլանդների, բողոք թիվ 47/2008, 2009 թվականի հոկտեմբերի 20-ի ըստ էության որոշում, §46:

58 Նույն տեղում, §62:

59 Նույն տեղում, §62:

60 Անօթևանների հետ աշխատող ազգային կազմակերպությունների եվրոպական ֆեդերացիան (FEANTSA) ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 39/2006, 2007 թվականի դեկտեմբերի 5-ի ըստ էության որոշում, §106:

61 Եզրակացություններ 2015թ., 31§2 հոդվածի վերաբերյալ մեկնաբանություն:

ՍԻԵԿ-ը նաև պարզաբանել է, որ ապաստարանի իրավունքը պետք է պատշաճ կերպով երաշխավորվի միգրանտների՝ ներառյալ առանց ուղեկցության միգրանտ երեխաների և ապաստան հայցողների համար⁶²: Միգրանտների և փախստականների աճող ներհոսքի հետևանքով առաջացած իրավիճակի բացառիկ բնույթը և պետության՝ իր երկրի սահմաններում իրավիճակը կառավարելու դժվարությունները չեն կարող ազատել Նրան Խարտիայի 31§2 հոդվածով սահմանված՝ միգրանտ և փախստական երեխաներին կացարան տրամադրելու պարտավորություններից՝ հաշվի առնել Նրանց հատուկ կարիքները և ծայրահեղ խոցելիությունը, կամ այլ կերպ սահմանափակել կամ թեթևացնել Խարտիայի համաձայն Նրա պատասխանատվությունը⁶³: Միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալության մասին Եվրոպայի խորհրդի առաջարկության նախաբանում նշվում է, որ այն ...՝⁶⁴

Խորապես մտահոգված է, որ առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաները միգրացիոն համատեքստում առավել խոցելի են և, հետևաբար, Նրանց հիմնարար իրավունքների և ազատությունների ոտնահարման մեծ ռիսկի տակ են, մասնավորապես՝ կյանքի, գոյատևման և զարգացման իրավունքի, խտրականության բացառման, մասնավոր և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի, քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքի, ապաստան հայցելու իրավունքի, առողջապահության առավելագույն հասանելի չափանիշների և առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքի, կրթության իրավունքի, բնակարան ունենալու իրավունքի, արդարադատության մատչելիության և բռնության բոլոր ձևերից պաշտպանված լինելու իրավունքի մասով:

Բնակարանի իրավունքի իրականացման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի առաջարկության մեջ (2009 թվականի հունիսի 30) նշվում է.

... Ժամանակավոր կացարանի մասով հիմնական պահանջները ներառում են նաև անմիջական շրջակա միջավայրի անվտանգությունը: ՍԻԵԿ-ը [Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե] նաև ընդգծել է ժամանակավոր կացարաններում մարդու արժանապատվությունը և «անկախության առավելագույն աստիճանը» ապահովելու կարևորությունը⁶⁵: Մարդկանց բնակեցումն ընդունելության ճամբարներում և ժամանակավոր կացարաններում, որոնք չեն բավարարում մարդկային արժանապատվության չափանիշներին, խախտում է վերը նշված պահանջները⁶⁶:

Անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտներին 31§1 հոդվածի իմաստով

62 Եզրակացություններ 2019թ., Հունաստան, առանց ուղեկցության օտարերկրյա անչափահասների ապաստարանի իրավունքի հարցում 31§2 և 17-րդ հոդվածները համընկնում են:

63 Իրավաբանների միջազգային հանձնաժողովը (ICJ) և Փախստականների և վտարանդիների հարցերով եվրոպական խորհուրդը (ECRE) ընդդեմ Հունաստանի, բողոք թիվ 173/2018, 2021 թվականի հունվարի 26-ի ըստ էության որոշում, §133:

64 Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտեի CM/Rec(2019)11 առաջարկություն և Բացատրական հուշագիր, <https://rm.coe.int/cm-rec-2019-11-guardianship-en/16809ccfe2>:

65 Անթուսանների հետ աշխատող ազգային կազմակերպությունների եվրոպական ֆեդերացիան (FEANTSA) ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 39/2006, 2007 թվականի դեկտեմբերի 5-ի ըստ էության որոշում, §108:

66 Եվրոպայի խորհուրդ (2009թ.) CommDH(2009)5, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/16806da713>:

մշտական կացարան տրամադրելու՝ Կողմ պետությունների պարտավորության առնչությամբ, ՍԻԵԿ-ը FEANTSA-ն ընդդեմ Նիդեռլանդների գործով նշել է⁶⁷:

58. Կոմիտեն, մի կողմից, հիշեցնում է, որ Հավելվածում ներառված՝ Խարտիայի ըստ անձանց շրջանակի սահմանափակումը չպետք է մեկնաբանվի այնպես, որ անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտները զրկվեն Խարտիայում ամրագրված հիմնարար իրավունքների պաշտպանությունից, կամ խախտվեն նրանց հիմնարար իրավունքները, ինչպես օրինակ կյանքի կամ ֆիզիկական անձեռնմխելիության կամ մարդկային արժանապատվության իրավունքը: Մյուս կողմից, անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտների նկատմամբ դրա կիրառումն արդարացված է միայն այն դեպքում, երբ Խարտիայով նախատեսված պաշտպանությունից նրանց բացառելը լուրջ վնասակար հետևանքներ կունենա նրանց հիմնարար իրավունքների համար, ինչի արդյունքում, այդ իրավունքներից օգտվելու տեսանկյունից, ազդակիր օտարերկրացիները քաղաքացիների կամ սովորական կարգավիճակում գտնվող օտարերկրացիների կարգավիճակի համեմատ կհայտնվեն անթույլատրելի վատ կարգավիճակում (Երեխաների պաշտպանության միջազգային կազմակերպությունը (DCI) ընդդեմ Բելգիայի, բողոք թիվ 69/2012, 2012 թվականի հոկտեմբերի 23-ի ըստ էության որոշում, §§28, 35):

59. Այն կրկնում է, որ որոշ դեպքերում և որոշակի հանգամանքներում Խարտիայի դրույթները կարող են կիրառվել անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտների նկատմամբ (տե՛ս DCI-ն ընդդեմ Բելգիայի, վերնում հիշատակված, §35): Երեխաների վերաբերյալ բողոքների առնչությամբ Կոմիտեն գտնում է, որ դա վերաբերում է բժշկական օգնությանը (Մարդու իրավունքների լիգաների միջազգային ֆեդերացիան (FIDH) ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 14/2003, 2004 թվականի սեպտեմբերի 8-ի ըստ էության որոշում, §32, DCI-ն ընդդեմ Բելգիայի, վերնում հիշատակված, §102), սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանությանը (DCI-ն ընդդեմ Բելգիայի, վերնում հիշատակված, §§39, 86) և ապաստարանին (DCI-ն ընդդեմ Նիդեռլանդների, վերնում հիշատակված, §§47-48, 66; DCI-ն ընդդեմ Բելգիայի, վերնում հիշատակված, §136):

60. Այն, մասնավորապես, հիշեցնում է, որ Կողմ պետության տարածքում անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտներին կացարանից վտարումը պետք է արգելվի, քանի որ դա ծայրահեղ անօգնական իրավիճակում է դնում այդ անձանց, մասնավորապես՝ երեխաներին, ինչը հակասում է նրանց մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքին: Պետությունները պարտավոր չեն անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտներին տրամադրել 31§1 հոդվածի իմաստով այլընտրանքային կացարան (DCI-ն ընդդեմ Նիդեռլանդների, վերնում հիշատակված, §63):

61. Կոմիտեն այնուհետև կրկնում է, որ ազգային իրավիճակը չի համապատասխանում Խարտիայի 31§2 հոդվածին, եթե անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտների՝ ներառյալ երեխաների ապաստարանի իրավունքը երաշխավորված չէ, քանի դեռ նրանք գտնվում են պետության իրավագործության ներքո (Եզրակացություններ 2011թ., Ուկրաինա): Ելնելով վերը նշվածից՝ 31§2 հոդվածը կիրառվում է անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտների նկատմամբ:

ԵՄ-ի Սոցիալական իրավունքների եվրոպական հենանիշը (ՍԻԵՀ)⁶⁸, որը

67 Անօթևանների հետ աշխատող ազգային կազմակերպությունների եվրոպական ֆեդերացիան (FEANTSA) ընդդեմ Նիդեռլանդների, բողոք թիվ 86/2012, 2014 թվականի հուլիսի 2-ի ըստ էության որոշում:

68 SWD(2017) 201 վերջնական: Տե՛ս նաև Լիսաբոնի հռչակագիրը ԵՄ-ում անօթևանության դեմ պայքարի

թեև դատաիրավական տեսանկյունից պարտադիր չէ, ուղղորդում է ԵՄ համապատասխան քաղաքականությունը և կառավարման կառուցակարգերը: ՍԻԵՅ-ի 19-րդ սկզբունքի համաձայն՝

- ա կարիքավորների համար պետք է ապահովվի սոցիալական բնակարանային կամ բնակարանային ապահովման որակյալ օգնության մատչելիությունը.
- բ խոցելի անձինք իրավունք ունեն ստանալու համապատասխան օգնություն և պաշտպանություն անհիմն վտարումից.
- գ անօթևաններին պետք է տրամադրվեն համապատասխան կացարան և ծառայություններ՝ նրանց սոցիալական ներառումը խթանելու նպատակով:

Մատչելի բնակարաններ բոլորի համար ԵՄԽ-ի 31§3 հոդվածը սահմանում է.

Բնակարանի իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել՝ բնակարանի գները մատչելի դարձնելու համապատասխան ռեսուրսներ չունեցողների համար:

ՍԻԵԿ-ը պարզաբանել է, որ բնակարանը մատչելի է, երբ տնային տնտեսությունը կարող է երկարաժամկետ հիմքերով վճարել նախնական ծախսերը (վարձակալության համար դեպոզիտ, կանխավճար), ընթացիկ վարձավճարը և (կամ) բնակարանի հետ կապված մյուս ծախսերը (օրինակ՝ կոմունալ, տեխսպասարկման և կառավարման վճարները)՝ ի վիճակի լինելով պահպանել նվազագույն կենսամակարդակ՝ ըստ այն հասարակության կողմից սահմանված չափանիշների, որում գտնվում է տնային տնտեսությունը⁶⁹: Հաստատելու համար, որ համապատասխան ռեսուրսներ չունեցողներին բնակարանի գինը մատչելի դարձնելու համար միջոցներ են ձեռնարկվում, Խարտիայի Կողմ պետությունները պետք է ցույց տան, որ ամենաաղքատ դիմողների համար բնակարանի մատչելիությունը համապատասխանում է նրանց եկամտի մակարդակին⁷⁰: Կողմ պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն բնակարանների, մասնավորապես՝ սոցիալական բնակարանների տրամադրման համար, որոնք պետք է ուղղված լինեն առավել անապահով խավերին⁷¹: Սոցիալական բնակարանների հատկացման համար սպասման ժամկետը չպետք է լինի չափազանց երկար և պետք է ենթակա լինի իրավական պաշտպանության դատական միջոցների⁷²: Նման եղանակով տրամադրված բոլոր իրավունքները պետք է երաշխավորվեն առանց որևէ հիմքով խտրականության, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ հայացքներ, ազգային պատկանելությունը կամ սոցիալական ծագումը, առողջական վիճակը, ազգային փոքրամասնության պատկանելիությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակ⁷³:

Կողմ պետություններից պահանջվում է ընդունել բնակարանային նպաստների համապարփակ համակարգեր՝ բնակչության ցածր եկամուտ ունեցող և

Եվրոպական հարթակի վերաբերյալ, https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/ip_21_3044:

69 Եզրակացություններ 2003թ., Շվեդիա:

70 Անօթևանների հետ աշխատող ազգային կազմակերպությունների Եվրոպական ֆեդերացիան (FEANTSA) ընդդեմ Սլովենիայի, բողոք թիվ 53/2008, 2009 թվականի սեպտեմբերի 8-ի ըստ էության որոշում, §72:

71 Միջազգային շարժում ATD Fourth World-ն ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 33/2006, 2007 թվականի դեկտեմբերի 5-ի ըստ էության որոշում, §98-100:

72 Միջազգային շարժում ATD Fourth World-ն ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 33/2006, 2007 թվականի դեկտեմբերի 5-ի ըստ էության որոշում, §131:

73 Տե՛ս Խարտիայի «Ե» հոդվածը և Եզրակացություններ 2019թ., Թուրքիա:

անապահով հատվածին պաշտպանելու համար⁷⁴: Բնակարանային նպաստն անհատական իրավունք է. չափորոշիչներին համապատասխանող բոլոր տնային տնտեսությունները պետք է ստանան այն, իսկ մերժման դեպքում նրանց պետք է հասանելի լինեն իրավական պաշտպանության միջոցներ⁷⁵:

31-րդ հոդվածի իրականացումը և իրականացման շրջանակը

Խարտիայի Կողմ պետությունները «ընդունում են որպես իրենց քաղաքականության նպատակ, որը պետք է իրականացվի ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային բնույթի բոլոր համապատասխան միջոցներով, այն պայմանների հաստատումը, որոնց դեպքում հետևյալ իրավունքներն ու սկզբունքները կարող են արդյունավետորեն իրացվել ...»⁷⁶:

Խարտիայի վավերացման ժամանակ Կողմ պետությունները պարտավորվում են կիրառել իրենց կողմից ընդունված դրույթներն իրենց քաղաքացիների և «այլ Կողմերի քաղաքացիների նկատմամբ, որոնք օրինականորեն բնակվում են կամ կանոնավոր կերպով աշխատում են տվյալ Կողմի տարածքում» (Հավելված): Հետևաբար Խարտիայի մեջ նշված իրավունքներից նույն հիմքով, ինչպես այդ երկրի քաղաքացիները, օգտվելու համար օտարերկրյա քաղաքացիները պետք է համապատասխանեն երեք պայմանի.

1. լինել Խարտիայի կամ վերանայված Խարտիայի որևէ Կողմի քաղաքացի.
2. լինել օրինական ռեզիդենտ, այլ կերպ ասած՝ իրավունք ունենալ մուտք գործելու և բնակվելու այդ պետության տարածքում.
3. և (կամ) կանոնավոր աշխատել, այլ կերպ ասած՝ իրավունք ունենալ մուտք գործելու և աշխատելու այդ պետության տարածքում⁷⁷:

Եվրոպական սոցիալական խարտիայի 1-ին հոդվածում նշվում է, որ Խարտիայով նախատեսված պարտավորությունների կատարման միջոցները որոշվում են Կողմ պետությունների հայեցողությամբ, որոնք ազատ են օգտագործելու օրենքներով կամ կանոնակարգերով, գործատուների կամ նրանց կազմակերպությունների և աշխատողների կազմակերպությունների միջև ստորագրված համաձայնագրերով նախատեսված բոլոր մեխանիզմները, այդ երկու մեխանիզմների համակցությունը, կամ այլ համապատասխան միջոցներ:

Խարտիայի «է» հոդվածը սահմանում է, որ թեև ժողովրդավարական հասարակությունում օրենսդիր մարմինն է սկզբունքորեն սահմանում և օրինականացնում հանրային շահը՝ արդար հավասարակշռություն հաստատելով հասարակության բոլոր անդամների կարիքների միջև և, Խարտիայի համաձայն, այդ հարցում նա ունի հայեցողության որոշակի իրավունք, դա չի նշանակում, որ օրենսդիր մարմինը որոշումների կայացման հարցում ենթակա չէ որևէ սահմանափակման: Պետությունը չի կարող հրաժարվել Խարտիայի շրջանակներում ստանձնած պարտավորություններից առանց պաշտպանության այն մակարդակի ապահովման պատշաճ երաշխիքների, որը դեռևս բավարար է

74 Եզրակացություններ 2003թ., Շվեդիա, Եզրակացություններ 2019թ., Հունաստան:

75 Եզրակացություններ 2003թ., Շվեդիա:

76 Եվրոպական սոցիալական խարտիա, Թուրին, 18.X.1961թ., Մաս 1՝ <https://rm.coe.int/168006b660>:

77 Եվրոպական սոցիալական խարտիայի հավելված. Խարտիայի ըստ անձանց գործողության շրջանակը: Եվրոպական սոցիալական խարտիա, Թուրին, 18.X.1961թ.՝ <https://rm.coe.int/168006b660>:

սոցիալական հիմնական կարիքները բավարարելու համար⁷⁸:

Ազգային օրենսդիր մարմինը պետք է հավասարակշռի պետական բյուջեի մասին մտահոգությունը սոցիալական իրավունքների համարժեք պաշտպանության հրամայականի հետ⁷⁹: Խարտիայում ամրագրված իրավունքների սահմանափակումները կարող են կիրառվել միայն արձագանքելով «հրատապ սոցիալական կարիքին»⁸⁰: Սահմանափակող միջոցները ներպետական իրավունքում ներառելիս իրավական ակտերում պետք է ապահովվի հետապնդվող նպատակների և սոցիալական իրավունքներից օգտվելու տեսանկյունից դրանց բացասական հետևանքների միջև համաչափություն⁸¹:

ՍԻԵԿ-ը պարզաբանել է, որ Խարտիայի 31-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես Կողմ պետությունների համար «արդյունքի» պարտավորություն սահմանող դրույթ, այն ավելի շուտ վերաբերում է «միջոցների պարտավորությանը» (մասնավորապես՝ պատշաճ միջոցներ ձեռնարկելու): Սոցիալական խարտիայով ճանաչված իրավունքները պետք է կրեն ոչ թե զուտ տեսական, այլ գործնական բնույթ և լինեն արդյունավետ: Դա ենթադրում է, որ 31-րդ հոդվածին համապատասխանելու համար Կողմ պետությունները պետք է՝

- ա ընդունեն անհրաժեշտ իրավական, ֆինանսական և գործառական միջոցներ՝ Խարտիայով սահմանված նպատակներին հասնելու ուղղությամբ կայուն առաջընթաց ապահովելու համար.
- բ վարեն կարիքների, ռեսուրսների և արդյունքների վերաբերյալ բովանդակալից վիճակագրություն.
- գ ձեռնարկեն ընդունված ռազմավարությունների ազդեցության կանոնավոր գնահատումներ.
- դ սահմանեն ժամանակացույց և անորոշ ժամանակով չհետաձգեն յուրաքանչյուր փուլի նպատակներին հասնելու վերջնաժամկետը.
- ե մեծ ուշադրություն դարձնեն որդեգրված քաղաքականության ազդեցությանը յուրաքանչյուր կատեգորիայի շահագրգիռ անձանց, մասնավորապես՝ առավել խոցելի խմբերի վրա⁸²:

Խարտիայով սահմանված նպատակներին հասնելու ուղղությամբ կայուն առաջընթացի ապահովումը պահանջում է, որ Կողմ պետությունները ձեռնարկեն իրավական գործողություններ, բայց նաև հասանելի դարձնեն ռեսուրսները և ներդնեն գործառական ընթացակարգեր, որոնք անհրաժեշտ են սահմանված իրավունքները լիարժեք գործողության մեջ դնելու համար⁸³:

Երբ խնդրո առարկա իրավունքներից մեկն իրագործման տեսանկյունից չափազանց բարդ և ծախսատար է, Կողմ պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն ողջամիտ ժամկետում Խարտիայի նպատակներին հասնելու համար՝

78 Հունաստանի աշխատանքի ընդհանուր համադաշնությունը (GSEE) ընդդեմ Հունաստանի, բողոք թիվ 111/2014, 2017 թվականի մարտի 23-ի ըստ էության որոշում, 85:

79 Նույն տեղում:

80 Նույն տեղում, §83:

81 Նույն տեղում, §83:

82 Անօթևանների հետ աշխատող ազգային կազմակերպությունների եվրոպական ֆեդերացիան (FEANTSA) ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 39/2006, 2007 թվականի դեկտեմբերի 5-ի ըստ էության որոշում, §56:

83 Միջազգային շարժում ATD Fourth World-ն ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 33/2006, 2007 թվականի դեկտեմբերի 5-ի ըստ էության որոշում, §61:

շոշափելի առաջընթաց արձանագրելով և առավելագույնս օգտագործելով առկա ռեսուրսները (Աուտիզմ Եվրոպական ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 13/2002, 2003 թվականի նոյեմբերի 4-ի ըստ էության որոշում, §53)⁸⁴:

ՍԻԵԿ-ը նշել է, որ պետք է լինի իրատեսական ժամանակացույց.

Ժամանակացույցի առնչությամբ, որով չափազանց մտահոգված են նաև միջազգային փաստաթղթերը կարգավորող այլ մարմիններ, կարևոր է, որպեսզի սահմանվեն խելամիտ ժամկետներ, որոնցով հաշվի կառնվեն ոչ միայն վարչական սահմանափակումները, այլև հրատապ կատեգորիային դասվող խմբերի կարիքները: Ամեն դեպքում, այն նպատակների իրագործումը, որոնք իշխանությունները դրել են իրենց առջև, չի կարելի անորոշ ժամանակով հետաձգել⁸⁵:

Վիճակագրություն վարելու պահանջը հատկապես կարևոր է բնակարանի իրավունքի դեպքում՝ կապված քաղաքականության արձագանքների շրջանակի, դրանց փոխազդեցության և վերջինիս հետևանքով առաջացած անցանկալի կողմնակի ազդեցությունների հետ: Կողմ պետությունները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն այն ազդեցության վրա, որն իրենց ընտրությունները կունենան բարձր խոցելի խմբերի, ինչպես նաև այլ ազդակիր անձանց վրա՝ ներառյալ նրանց ընտանիքները, ովքեր ինստիտուցիոնալ թերությունների դեպքում կրում են ծանրագույն բեռը⁸⁶: Վիճակագրությունն օգտակար է միայն այն դեպքում, երբ հասանելի դարձած ռեսուրսները և ձեռք բերված արդյունքները կամ առաջընթացը համադրելի են բացահայտված կարիքների հետ: Իշխանության մարմինները պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեն նաև բնակարանային ապահովման քաղաքականության հետ կապված իրենց ընտրությունների ազդեցությանը՝ առավել խոցելի խմբերի վրա, այս դեպքում՝ հասարակությունից բացառված կամ աղքատության մեջ գտնվող անհատների և ընտանիքների վրա⁸⁷:

ՍԻԵԿ-ը նաև նշել է, որ 31-րդ հոդվածը պետք է դիտարկվի համապատասխան միջազգային փաստաթղթերի լույսի ներքո, որոնց վրա այն հիմնված է կամ որոնց հետ համակցությամբ այն պետք է կիրառվի: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա և Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների դաշնագրի:

84 Անթուանների հետ աշխատող ազգային կազմակերպությունների եվրոպական ֆեդերացիան (FEANTSA) ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 39/2006, 2007 թվականի դեկտեմբերի 5-ի ըստ էության որոշում, §56:

85 *ATD Fourth World-ն ընդդեմ Ֆրանսիայի*, կոլեկտիվ բողոք թիվ 33/2006, 04.02.2006թ. որոշում, §66, և կոլեկտիվ բողոք թիվ 39/2006, Անթուանների հետ աշխատող ազգային կազմակերպությունների եվրոպական ֆեդերացիան (FEANTSA) ընդդեմ Ֆրանսիայի, 04.02.2008թ. որոշում, §62:

86 Աուտիզմ Եվրոպա միջազգային ասոցիացիան ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 13/2002, 2003 թվականի նոյեմբերի 4-ի ըստ էության որոշում, §53:

87 Միջազգային շարժում *ATD Fourth World-ն ընդդեմ Ֆրանսիայի*, բողոք թիվ 33/2006, 2007 թվականի դեկտեմբերի 5-ի ըստ էության որոշում, §67:

2. Բնակարանային ապահովման գլոբալ և նվազագույն չափանիշները

Բնակարանային ապահովման նվազագույն չափանիշները սահմանվում և կիրառվում են տեղական, տարածքային և ազգային մակարդակներում: Այս չափանիշները գնահատվում են ՍԻԵԿ-ի և մոնիթորինգային այլ մարմինների կողմից՝ համապատասխան միջազգային փաստաթղթերի, իրավագիտության և համապատասխան մոնիթորինգային մարմնի մեկնաբանությունների հետ ներդաշնակեցման համար: Այդպիսով, թեև մանրամասն հրահանգիչ չափանիշներ չեն պարտադրվում, այնուամենայնիվ ընդունված չափանիշները պետք է համապատասխանեն բնակարանի սահմանված միջազգային իրավունքներին: Ի լրումն մարդու իրավունքների փաստաթղթերի, միջազգային կազմակերպությունների այլ զեկույցներով ներկայացվում են լավագույն գործելակերպերը, որոնք շատ առումներով համընկնում են բնակարանային ապահովման իրավունքների չափանիշների պահպանման հետ, թեև միշտ չէ, որ դա միանշանակ այդպես է:

«Բնակարանային ապահովման ծրագիր 2030. արդյունավետ քաղաքականություններ մատչելի բնակարանների համար ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում» վերտառությամբ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ ԵՏՀ) զեկույցում նշվում է, որ բնակարանային ապահովման իրավունքի իրացման համար համապատասխան բնակարանային ապահովման չափանիշների սահմանումն ու մոնիթորինգը բնակարանային ապահովման համակարգի կառավարման կարևոր գործիք է, որը կարող է նպաստել բնակարանային ապահովման հարցում ավելի լավ արդյունքներին⁸⁸: Լավ չափանիշների ընդունումը և կիրառումը՝ սովորաբար օրենսդրության միջոցով, կարող է նպաստել ավելի ապահով, համարժեք և մատչելի բնակարանային ապահովման արդյունքներին:

ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույցը նաև մատնանշում է, որ թեև չափանիշների սահմանումը կարևոր է, հավասարապես կարևոր է նաև համապատասխանության արդյունավետ մոնիթորինգը: Դա թույլ է տալիս քաղաքականություն մշակողներին պատկերացնել անհամապատասխանության ծավալը և տեղը, ինչպես նաև բնակարանային ապահովման այն հատվածը, որտեղ այն առաջանում է: ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույցն ընդգծում է բնակարանային ապահովման իրավունքներին առնչվող չափանիշները, որոնք ամրագրված են բնակարանի իրավունքի վերաբերյալ ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի միջազգային չափանիշներում⁸⁹ և ՄԱԿ-ի հատուկ զեկույցով՝ համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքի իրականացման ուղենիշներում⁹⁰:

Աշխարհի գրեթե բոլոր երկրները ստորագրել են Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ)՝ որոնցից մի քանիսն ուղղակիորեն կապված են բնակարանային ռազմավարությունների հետ:

88 https://unece.org/sites/default/files/2021-10/Housing2030%20study_E_web.pdf

89 <https://www.ohchr.org/en/special-procedures/sr-housing/international-standards>

90 <https://www.ohchr.org/en/special-procedures/sr-housing/guidelines-implementation-right-a-de-quate-housing>

ԿԶՆ 11. Քաղաքները դարձնել ներառական, անվտանգ, դիմակայուն և կայուն:

ԿԶՆ 11.1. Մինչև 2030 թվականը բոլորի համար հասանելի դարձնել պատշաճ, անվտանգ և մատչելի բնակարաններ և հիմնական ծառայությունները, և արդիականացնել հետնախորշերը:

ԿԶՆ 11.3. Մինչև 2030 թվականը խթանել ներառական և կայուն քաղաքաշինությունը և բնակավայրերի մասնակցային, ինտեգրված և կայուն պլանավորումն ու կառավարումը բոլոր երկրներում⁹¹:

ԿԶՆ-ները նաև ներառում են «որևէ մեկին աչքաթող չանելու» հանձնառությունը, երբ հասարակությունն առաջադիմում է և գիտակցում է, որ ԿԶՆ-ները հասարակությունում բոլորի համար են, և յուրաքանչյուրը կարող է իր ներդրումն ունենալ նրանց հաջողության մեջ⁹²:

Կայուն բնակարանային ապահովման և կառուցապատման համար ապացուցահեն քաղաքականության և որոշումների կայացման վերաբերյալ ՄԱԿ ԵՏՀ-ի ուղեցույցը (2020թ.) սահմանում է մի շարք ցուցիչներ «որևէ մեկին աչքաթող չանելու» համար, ինչպես նաև ընտրված բնակարանային ապահովման ցուցիչներ գլոբալ և տարածաշրջանային զարգացման շրջանակներում⁹³:

91 <https://sdgs.un.org/2030agenda>

92 <https://unsdg.un.org/2030-agenda/universal-values/leave-no-one-behind>

93 https://unece.org/DAM/hlm/documents/Publications/2020_Guidelines_on_evidence-based_policies.pdf

3. Սոցիալական բնակարանային ապահովման նվազագույն չափանիշների ցուցիչներ

Բնակարանային ապահովման չափանիշներ ունենալու պատճառները հիմնավորված են: Դրանք սահմանում են արժանապատվության և որակի հենանիշ՝ խուսափելու այնպիսի արդյունքից, որը համարվում է «չափանիշներին չհամապատասխանող»⁹⁴: Աշխարհի ցանկացած երկիր և տարածաշրջան ունի բնակարանային ապահովման չափանիշներ, որոնք արտացոլում են սոցիալական, մշակութային, պատմական, տնտեսական և քաղաքական զարգացումները:

2010 թվականին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) նախաձեռնեց բնակարանների և առողջապահության վերաբերյալ ուղեցույցների մշակման երկար և մանրակրկիտ գործընթաց, որի արդյունքում 2018 թվականին հրապարակեց ԱՀԿ Բնակարանային ապահովման և առողջապահական ուղեցույցները կառավարությունների և համապատասխան կազմակերպությունների համար⁹⁵: ԱՀԿ ուղեցույցները ներառում են նաև հետևյալ ոլորտները.

- փոքր բնակելի տարածք,
- չափազանց ցածր ներքին ջերմաստիճան,
- չափազանց բարձր ներքին ջերմաստիճան,
- ֆունկցիոնալ խնդիրներ ունեցող մարդկանց համար բնակարանների մատչելիություն,
- բնակարանի հարևանությամբ քայլելու և հեծանիվ վարելու ենթակառուցվածքներ:

ՍԻԵԿ-ը պարզաբանել է, որ «համապատասխան ստանդարտի բնակարանի» հասկացությունը պետք է սահմանվի օրենքով և այն վերաբերում է ոչ միայն նոր շինարարությանը, այլև բնակարանային ֆոնդին⁹⁶, ինչպես նաև վարձակալված և տնային տնտեսության սեփականությունը հանդիսացող բնակարաններին⁹⁷: «Համապատասխան ստանդարտի բնակարան» նշանակում է՝

1. սանիտարահիգիենիկ և առողջապահական տեսանկյունից անվտանգ բնակատեղ, այսինքն՝ որն ունի բոլոր հիմնական հարմարությունները, ինչպիսիք են ջուրը, ջեռուցումը, թափոնների հեռացումը, սանիտարական սարքավորումները, էլեկտրականությունը և այլն, և որտեղ վերահսկվում են հատուկ վտանգները, ինչպիսիք են կապարի կամ ասբեստի առկայությունը.

94 Levitt, D. (2010) «Բնակարանային նախագծման ձեռնարկ. Արդյունավետ գործելակերպի ուղեցույց» [The Housing Design Handbook – A Guide to Good Practice], (Լոնդոն, Ռութլեջ), էջ 125: Տե՛ս նաև Փարքեր Մորիս կոմիտե (1961) «Տներ այսօրվա և վաղվա համար» [Homes for Today and Tomorrow] (Լոնդոն, HMSO): Teige, K. (թարգմանիչ Dluhosch, E.) (2002թ. հրատարակություն, բնօրինակ հրատարակություն 1932թ.) «Նվազագույն բնակատեղ» [The Minimal Dwelling], (Քեմբրիջ, MA: MIT Press):

95 Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, «ԱՀԿ բնակարանային ապահովման և առողջապահական ուղեցույցներ»: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.who.int/publications/i/item/9789241550376>:

96 Եզրակացություններ 2003թ., Ֆրանսիա:

97 Նույն տեղում:

2. բնակատեղ, որը չափազանց մարդաշատ չէ, որի չափը պետք է համապատասխանի մարդկանց թվին և բնակատեղի տնային տնտեսության կազմին.
3. բնակատեղ օրենքով ամրագրված ապահով կացությամբ⁹⁸:

«Համապատասխանության» այս հայեցակարգը պարզաբանվել է նաև ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական իրավունքների կոմիտեի կողմից (ՄԱԿ ՏՄԻԿ), որը առանձնացրել է յոթ չափորոշիչ՝ բնակարանների համապատասխանությունը որոշելու համար.

- ա կացարանի ապահովություն՝ ներառյալ անհիմն վտարումից պաշտպանությունը, անկախ գույքի և կացության իրավունքի տեսակից (տան սեփականություն, վարձակալություն, ոչ ֆորմալ բնակեցում և այլն).
- բ ծառայությունների, նյութերի, հարմարությունների և ենթակառուցվածքների հասանելիություն՝ ներառյալ բնական և ընդհանուր ռեսուրսների մատչելիությունը, որոնք բոլորն էլ կարևոր են առողջության, անվտանգության, հարմարավետության և սնուցման համար.
- գ մատչելիություն՝ ներառյալ պաշտպանությունը վարձավճարների անհիմն բարձր մակարդակից և բարձրացումից, որպեսզի չվտանգվի կամ չխոչընդոտվի այլ կենսական կարիքների և իրավունքների ձեռքբերումը և բավարարումը.
- դ բնակելիություն՝ պաշտպանվածություն ցրտից, խոնավությունից, շոգից, անձրևից, քամուց և առողջությանն ու անվտանգությանն սպառնացող այլ վտանգներից.
- ե հասանելիություն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով վնասվելու, անբարենպաստության և խտրականության մեծ ռիսկի տակ գտնվող խմբերի և անհատների կարիքներին.
- զ աշխատանքի, բուժհաստատությունների, դպրոցների, տրանսպորտի և այլ հարմարությունների հասանելիությունն ապահովող տեղադրություն՝ հաշվի առնելով բնապահպանական նկատառումները.
- է մշակութային համարժեքություն՝ նյութերի և գործիքների օգտագործում, որոնք համարժեք կերպով ճանաչում և արտահայտում են բնակչության մշակութային ինքնությունն ու բազմազանությունը⁹⁹:

«Բնակարանային ապահովման ծրագիր 2030. արդյունավետ քաղաքականություններ մատչելի բնակարանների համար ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում» վերտառությամբ ՄԱԿ ԵՏՀ-ի ղեկույցում նշվում է, որ բնակարանային չափանիշները տարբերվում են ոչ միայն երկրից երկիր, այլև այդ երկրների բնակարանային համակարգի տարբեր սեգմենտներում: Սակայն կարևոր է ընդգծել, որ բնակարանային չափանիշներն ավելին են, քան շենքի տեխնիկական կամ էներգաարդյունավետության չափանիշները, որոնք ինքնին չափազանց կարևոր են, և ներառում են մարդու իրավունքների և բնակարանով ապահովման իրավունքի չափանիշները, որոնք ներկայումս ընդունել են ես բոլոր պետությունները: Դրանք ներառում են բնակարանների որակի, մատչելիության, գերբնակեցման և հասանելիության չափանիշները: ՄԱԿ ԵՏՀ-ի ղեկույցում բնակարանային չափանիշների այդ ամբողջական ցուցիչներն աղյուսակավորվել են: Բնակարանային կարևոր չափանիշները վերաբերում են բնակարանի որակին (ներառյալ՝ հրդեհային անվտանգությունը), մեկ բնակչի հաշվով տարածքին

98 Նույն տեղում:

99 ՄԱԿ ՏՄԻԿ, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 4. «Համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունք», ՄԱԿ փաստաթուղթ E/1992/23 (1991 թվական, պարբ. 8):

(կապված գերբնակեցման հետ), անվտանգությանը (պաշտպանություն անհիմն վտարումից), տարբեր եկամտի մակարդակով անձանց և տնային տնտեսությունների համար մատչելիությանը, տնային տնտեսությունների տարբեր խմբերի (երիտասարդներ, տարեցներ, միգրանտներ) համար մատչելիությանը և հիմնական ռեսուրսների (զբաղվածության, կրթության և հանգստի) տարածքային հասանելիությանը¹⁰⁰:

Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը մշակել է *Համապատասխան ստանդարտի բնակարանային ապահովման իրավունքի իրականացման ուղեցիկներ*, որոնք պետություններին մանրամասն ուղեցույց են տրամադրում բնակարանային չափանիշների վերաբերյալ¹⁰¹: Ընդ որում, թեև չափանիշների սահմանումը կարևոր է, նույնքան կարևոր է դրանց համապատասխանության արդյունավետ մոնիթորինգը¹⁰²:

Եկամտի և կենսապայմանների վերաբերյալ ԵՄ վիճակագրությամբ (EU-SILC) սահմանվել է բնակարանից զրկվածության ցուցիչների մի շարք, որոնք ներառում են բնակարանային բազմաթիվ չափանիշներ: Դրանք են՝

- բնակարանից զրկվածության խիստ բարձր մակարդակը,
- հոսակորուստ տանիքով, խոնավ պատերով, հատակով կամ հիմքով, փտած պատուհանների շրջանակներով կամ հատակով բնակարանում ապրող ընդհանուր բնակչության տոկոսը,
- բնակատեղում լոգասենյակ կամ ցնցուղ չունեցող ընդհանուր բնակչության տոկոսը,
- ինքնավացվող զուգարանակոնքով առանձնացված զուգարան չունեցող ընդհանուր բնակչության տոկոսը,
- բնակատեղը չափազանց մութ համարող ընդհանուր բնակչության տոկոսը,
- լոգասենյակ, ցնցուղ, կամ ինքնավացվող զուգարանակոնքով առանձնացված զուգարան չունեցող ընդհանուր բնակչության տոկոսը,
- ընդհանուր բնակչության տոկոսը, ովքեր ի վիճակի չեն փոխարինել իրենց տան մաշված կահույքը¹⁰³:

100 ՄԱԿ ԵՏՀ (2021) «Բնակարանային ապահովման ծրագիր 2030. արդյունավետ քաղաքականություններ մատչելի բնակարանների համար ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում», 22/23 էջեր: Հասանելի է հետևյալ հղումով՝ :

101 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ «Բնակարանի իրավունքի միջազգային չափանիշներ»: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.ohchr.org/en/special-procedures/sr-housing/international-standards>:

102 Appolloni, L., D'Alessandro, D. «Բնակարանային տարածքներ եվրոպական ինը երկրներում. Չափային պահանջների համեմատություն» [Housing Spaces in Nine European Countries: A Comparison of Dimensional Requirements], Int. J. Environ. Res. Public Health 2021, էջ 18, 4278, <https://doi.org/10.3390/ijerph18084278>:

103 [https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=EU_statistics_on_income_and_living_conditions_\(EU-SILC\)_methodology](https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=EU_statistics_on_income_and_living_conditions_(EU-SILC)_methodology)

Եվրոպայում կենսապայմանների վերաբերյալ Եվրաստատի (Eurostat) տարեկան զեկույցները ներկայացնում են ԵՄ-ում բնակարանային պայմանների համեմատական մակարդակը:¹⁰⁴ Եվրաստատի որակավորմամբ անձը համարվում է գերբնակեցված պայմաններում ապրող, եթե տնային տնտեսությունը չունի նվազագույն թվով սենյակներ, այն է՝

- մեկ սենյակ տնային տնտեսության համար,
- մեկ սենյակ տնային տնտեսության յուրաքանչյուր զույգի համար,
- մեկ սենյակ 18 և ավելի տարեկան յուրաքանչյուր միայնակ անձի համար,
- մեկ սենյակ 12-17 տարեկան նույն սեռի երկու անձի համար,
- մեկ սենյակ 12-17 տարեկան և նախորդ կատեգորիայում չներառված յուրաքանչյուր միայնակ անձի համար,
- մեկ սենյակ մինչև 12 տարեկան երեխաների մեկ զույգի համար¹⁰⁵:
- Հետևաբար Եվրաստատի տվյալներով՝ գերբնակեցման հիմնական գործոնը սենյակների ընդհանուր թիվն է:

ԵՄ-ում բոլոր շենքերը պետք է համապատասխանեն «Comité Européen de Normalization»-ի կողմից մշակված Եվրակողի կամ Եվրոպական չափանիշների համակարգի պահանջներին՝ ապահովելով շինարարական միասնական նորմատիվներ շենքերի կառուցվածքային նախագծման և շինարարության համար¹⁰⁶:

Համաձայն «Սոցիալական բնակարանային ապահովման ուղենիշներ. սկզբունքները և օրինակները» վերտառությամբ ՄԱԿ ԵՏՀ (2006) փաստաթղթի՝

Սոցիալական բնակարանները քաղաքային վայրերում պետք է նպաստեն բնակչության բազմազանությանը և սոցիալական համախմբվածությանը՝ ավելի մեծ բնակելի տարածքների ներառման և ընդլայնման շնորհիվ: Սոցիալական բնակարանները, հետևաբար, պետք է գտնվեն այլ բնակելի շենքերի տարածքում կամ նույնիսկ ինտեգրված լինեն նույն շենքերի կազմում:

- Սոցիալական բնակարանների չափանիշները չպետք է զիջեն տվյալ երկրում բնակարանների միջին չափանիշներին՝ խարանումը բացառելու և սոցիալական տարանջատումից խուսափելու համար:
- Բնակարանային նախագիծը պետք է նախատեսի օգտագործողների համար հարմար ընդհանուր ներքին և արտաքին տարածքներ՝ բնակիչներին սոցիալական շփման գոտիներ տրամադրելու համար¹⁰⁷:

104 https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=Living_conditions_in_Europe_-_housing#Housing_conditions

105 https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=Glossary:Overcrowding_rate

106 <https://eurocodes.jrc.ec.europa.eu/policies-standards/en-eurocodes-and-related-standards>, Տես նաև Building Performance Institute Europe (2020) «Եվրոպական շինարարական քաղաքականության ուղեցույց. հիմնական օրենսդրություն և նախաձեռնություններ», https://www.bpie.eu/wp-content/uploads/2020/08/BPIE_Guide-on-Building-Policy_Final.pdf:

107, էջ 92:

Կայուն քաղաքաշինության օրինակներից է «Նախագծման չափանիշներ նոր բնակարանների համար» փաստաթուղթը (Իռլանդիա, 2022թ.)¹⁰⁸, որն անդրադառնում է մասնավոր և սոցիալական բնակարանային ապահովման ծրագրերում բնակարանների չափերի/տարածության չափանիշներին առնչվող հարցերի շրջանակին: Դրանք ներառում են՝ բազմաբնակարան կառույցների շրջանակներում բնակարանների համակցությունը, տարբեր տեսակի բնակարանների ներքին տարածքի չափանիշները, տարածքի լայնության և բարձրության հարաբերակցությունը, առաստաղի բարձրությունը, բնակարանից դեպի աստիճաններ/վերելակ տարածության հարաբերակցությունը, պահեստային տարածքները, համագտագործման տարածքները՝ ներառյալ պատշգամբները/բակը, մեքենայի կայանատեղին և սենյակների չափերը որոշակի տեսակի սենյակների դեպքում (լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Հավելված 5-ը):

Բնակարանի մատչելիությունը

ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույցում (2021) նշվում է, որ մատչելիությունը որոշելու համար կան մի շարք եղանակներ: Մնացորդային եկամտի մոտեցումը հաշվի է առնում բնակարանային ապահովման ծախսերի վճարումից հետո տնային տնտեսության բյուջեի մնացորդի բավարարությունը: Եթե այդ մնացորդը ցածր է արժանապատիվ կենսամակարդակի համար պահանջվող գումարից, ապա բնակարանային ապահովման ծախսերը մատչելի չեն¹⁰⁹:

ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույցում առաջարկվում է, որ բնակարանների մատչելիությունը սահմանվի որպես բնակարանային ապահովման ծախսերի բեռ: Ցուցիչները հետևյալն են.

- բնակարանային ապահովման ծախսերի բեռ. բնակարանային ապահովման ընդհանուր ծախսերը որպես տնօրինվող եկամտի տոկոս.
- բնակարանային ապահովման ծախսերի գերծանրաբեռնվածության դրույքաչափ (ԲԾԳԴ). բնակչության տոկոս, որն ապրում է տնային տնտեսություններում, որոնց բնակարանային ապահովման ծախսերը գերազանցում են տնօրինվող եկամտի 40 տոկոսը.
- «աղքատության ռիսկի մակարդակը բնակարանային ապահովման ծախսերը հանելուց հետո». բնակչության տոկոս, որն ապրում է տնային տնտեսությունում, որի համարժեք (ճշգրտված տնային տնտեսության տեսակի համար) տնօրինվող եկամուտը՝ բնակարանային ապահովման ծախսերը հանած, ցածր է աղքատության շեմից՝ տնային տնտեսությունների համարժեք միջին եկամտի 60 տոկոսից.
- բնակարանային ապահովման ընդհանուր արժեքի ինքնազնադատված ծանր բեռ. բնակչության տոկոս, որն ապրում է տնային տնտեսությունում, որտեղ մատչելիության համար պատասխանատու անձը համարում է, որ բնակարանային ընդհանուր ծախսերը ծանր ֆինանսական բեռ են իր համար:

108 Իռլանդիայի կառավարություն (2022), «Քաղաքային կայուն բնակարանաշինություն. Նախագծման չափանիշներ նոր բնակարանների համար», Ուղենիշներ պլանավորման մարմինների համար՝ կազմված Բնակարանաշինության, տեղական կառավարման և մշակութային ժառանգության դեպարտամենտի կողմից: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.gov.ie/en/publication/16edd-sustainable-urban-housing-design-standards-for-new-apartments-guidelines-for-planning-authorities-2022>:

109 Geoffrey Meen, Christine Whitehead (2020), «Մատչելիության գաղափար. բնակարանային շուկաների տնտեսագիտություն» [Understanding Affordability – The Economics of Housing Markets] (Bristol University Press):

4. Լավագույն գործելակերպերը՝ ներառյալ ստանդարտ ծառայությունների գործելակերպերը, պլանավորումը, շահագործման հանձնումը, կառավարումը (սոցիալական բնակարանային կառավարումը), պահպանումը, իրավունակությունն ու մատչելիությունը, միջազգային պահանջներին համապատասխան ռազմավարություն ունենալու համար մյուս հայեցակետերը

հլրումն տեխնիկական խնդիրների, որոնք առնչվում են առաջարկվող սոցիալական բնակարանների նախագծմանը՝ ֆինանսավորման, զարգացման, պլանավորման, շահագործման, բաշխման, կառավարման, պահպանման և վարձակալների հարաբերությունների լավագույն գործելակերպերի մոդելներին համապատասխան, կան խնդիրներ, թե ինչպես սոցիալական բնակարանային ապահովումը կարող է դառնալ բնակարանաշինության ազգային ռազմավարության մի մասը: Այդ խնդիրներն առաջանում են իրավունակության, բնակարանների մատչելիության և այլ առկա բնակարանների, հատկապես մասնավոր վարձակալված բնակարանների հետ փոխկապակցվածության ոլորտներում: Կա նաև կայուն զարգացման և երկարաժամկետ սոցիալական համախմբման խնդիր: Այս առումով, սոցիալական բնակարանների տրամադրումը, փաստորեն, դառնում է բնակարանային ապահովման քաղաքականության ընդհանուր շրջանակի անբաժանելի մասը, որը պահանջում է պետական կամ դոնորների կողմից ծախսեր, ինչպես նաև մնացորդայնացման (բնակարաններ, որտեղ ապրում են միայն անապահով վիճակում գտնվողները) և սոցիալական ինտեգրման երկարաժամկետ խնդիրների լուծում՝ ներառյալ կրթության, առողջապահության և աշխատանքի հնարավորությունների հավասար մատչելիությունը: Այն հարցը, թե արդյոք սոցիալական բնակարանային ապահովումը կգործի միայն հասարակության առավել խոցելի խավերի համար՝ նրանց սեգրեգացումից խուսափելու նպատակով, թե՛ այն կկազմի սոցիալական քաղաքականության մաս՝ ուղղված նաև այն տնային տնտեսություններին, որոնք չունեն բնակարան վարձակալելու կամ շուկայական գներով ձեռք բերելու հնարավորություն, պահանջում է կարևոր քաղաքական որոշում:

«Բնակարանային ապահովման ծրագիր 2030. արդյունավետ քաղաքականություններ մատչելի բնակարանների համար ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում»¹¹⁰ վերտառությամբ ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույցը (2021) անդրադառնում է սոցիալական բնակարանների պլանավորման, նախագծման, զարգացման և կառավարման լավագույն գործելակերպերի մի շարք օրինակների: 2030 թվականի բնակարանային ապահովման ծրագիրը մեկ տարի տևողությամբ հետազոտական ջանքերի արդյունք է, որը ներառում է երկրների լավագույն գործելակերպերի մասին հարցումներ, Եվրոպայի տարբեր տարածաշրջաններում կազմակերպված թեմատիկ աշխատաժողովներ, փորձագիտական պրեզենտացիաներ և տեղեկատվական փոդքասթերի շարք: Հիմնվելով ավելի քան 50 երկրների, 100 փորձագետների և աշխատաժողովների գրեթե 1000 մասնակիցների փորձի վրա՝ զեկույցն անդրադարձել է կառավարման, հողակտորների, ֆինանսների և

110 https://unece.org/sites/default/files/2021-10/Housing2030%20study_E_web.pdf

կլիմայական չեզոք բնակարանների հետ կապված առանցքային խնդիրներին: Յուրաքանչյուր գլուխ սահմանում և ներկայացնում է օգտակար գործիքակազմ, որը կարող է հարմարեցվել ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում բնակարանների մատչելիությունը բարելավելու և կլիմայական փոփոխությունները հասցեագրելու նպատակներին¹¹¹: Նման քաղաքականություններն այլուր կրկնելու համար պետական հաստատությունները՝ ներառյալ համալսարանները, պետք է կարևոր դեր խաղան բոլոր համապատասխան շահառուների՝ քաղաքականություն մշակողների, ֆինանսիստների, շինարարների, մատակարարների և բնակիչների շրջանում հմտությունների և կարողությունների զարգացման գործում¹¹²:

Եվրոպայում կան սոցիալական բնակարաններ տրամադրողների և անօթևանների հարցերով գործակալությունների ցանցեր, որոնք ուսումնասիրում և կիսում են բնակարանային ֆոնդի կառավարման, հատկացումների և այլ վերաբերելի ոլորտների հետ կապված լավագույն գործելակերպերը: Housing Europe-ը (HE) հանրային, կոոպերատիվ և սոցիալական բնակարանների եվրոպական ֆեդերացիա է: Այն ստեղծվել է 1988 թվականին որպես 45 ազգային և տարածաշրջանային ֆեդերացիաների ցանց, որը միավորում է շուրջ 43 000 հանրային, սոցիալական և կոոպերատիվ բնակարաններ տրամադրողների՝ 25 երկրներում: Ընդհանուր առմամբ HE անդամները կառավարում են ավելի քան 25 միլիոն բնակատեղ՝ ԵՄ-ում գոյություն ունեցող բնակատեղերի մոտ 11%-ը: Սոցիալական, հանրային և կոոպերատիվ բնակարան տրամադրողների տեսլականն է ստեղծել այնպիսի եվրոպա, որը համայնքներում բոլորի համար ապահովում է սոցիալապես, տնտեսապես և էկոլոգիապես կայուն՝ համապատասխան ստանդարտի և մատչելի բնակարաններ, որտեղ բոլորը հնարավորություն ունեն օգտագործելու իրենց ողջ ներուժը¹¹³:

Կայուն սոցիալական բնակարանների նախագծման և պլանավորման լավագույն գործելակերպի օրինակներից է «Որակյալ բնակարաններ նախագծելու ձեռնարկը»¹¹⁴: Այն ամփոփում է սոցիալական բնակարանների կառուցման վայրի ընտրության լավագույն գործելակերպը և նոր զարգացումների առումով տնտեսական նկատառումները: Ձեռնարկը ներկայացնում է սոցիալական բնակարանների նախագծման, ծախսերի և ծրագրերի վերահսկման ու շենքերի պետական գնումների լավագույն գործելակերպը: Այն ուսումնասիրում է քաղաքային նախագծման և հատակագծի պլանավորման լավագույն գործելակերպերը՝ ներառյալ կայուն քաղաքաշինությունը և կայուն համայնքները, ինչպես նաև հանրային ոլորտի որակը: Բնակատեղերի նախագծմանը նվիրված գլուխը վերաբերում է տների, բնակարանների և դուպլեքսների ներքին կառուցվածքին: Ձեռնարկը ներկայացնում է նաև տարբեր տեսակի և չափերի սոցիալական բնակարանների նախագծեր և ներքին դասավորության ստանդարտ լուծումներ: Այն անդրադառնում է բնակատեղի անձեռնմխելիությանը և մատչելիությանը, շենքային համալիրների և բազմաբնակարան շենքերի պլանավորմանը: Նախագծման ձեռնարկում ներկայացված է տիպիկ սոցիալական բնակարանի

111 ՄԱԿ ԵՏՀ-ի գեկույցը (2021) «Բնակարանային ապահովման ծրագիր 2030. արդյունավետ քաղաքականություններ մատչելի բնակարանների համար ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում», էջ 2:

112 Նույն տեղում, էջ 18:

113 <https://www.housingeurope.eu/resource-1808/the-state-of-housing-in-europe-2023>

114 Իռլանդիայի կառավարություն (2022) «Նախագծման չափանիշներ նոր բնակարանների համար»: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.gov.ie/en/publication/b3e02-design-manual-for-quality-housing/>:

Նախագծման ծրագրի համար Գանտի աղյուսակը (տե՛ս Հավելված 6):

Վիեննայի մոդելը

Սոցիալական բնակարանների Վիեննայի մոդելը սկիզբ է առնում 1920 թվականներից՝ որպես երկրի սոցիալ-դեմոկրատական վարչակազմի կողմից որդեգրված մոդել: Վերջինս բնակչության զանգվածային բնակարանային ապահովումը դիտում էր որպես շատերի կարիքներին ծառայող բարձրորակ ենթակառուցվածք: Ենթադրվում էր, որ զբաղվածություն էր, ոչ էլ արտակարգ իրավիճակով պայմանավորված միջոցառում¹¹⁵: Նպատակը որպես այդպիսին բնակարանային ֆոնդի ֆինանսավորումն էր՝ բնակարանները մատչելի դարձնելու բոլորի համար, այլ ոչ թե սուբսիդավորման միջոցով անհատներին ֆինանսավորելը, ինչի դեպքում այդ գումարներն ուղղվում էին մասնավոր սեփականատերերին՝ պահանջարկի աճին համընթաց աճող վարձավճարների տեսքով:

Վիեննայի մոդելը միջազգային ճանաչում է վայելում կայուն, բարձրորակ բնակարանաշինության շարունակական ձեռքբերումների շնորհիվ՝ օգտագործելով «ծախսերի վրա հիմնված վարձավճարի» մոտեցումը, որն իրականում բնակատեղեր է ապահովում բոլորի համար: «Ծախսերի վրա հիմնված վարձավճար» հասկացությունը Քեմենի (Kemeny) սահմանում է որպես «բոլոր վարձով տրվող բնակարանները, անկախ սեփականության իրավունքից, որոնց վարձավճարները ծածկում են միայն բնակարանային ֆոնդի փաստացի կատարված ծախսերը»: Այն հիմնված է «մարման» սկզբունքի վրա, այսինքն՝ Նախորդ բնակարանային ֆոնդի համար տրված վարկերը ժամանակի ընթացքում նվազում կամ մարվում են, իսկ նոր բնակարանաշինության ծախսերը կարող են միավորվել (համասուբսիդավորվել) ըստ ընդհանուր բնակարանային ֆոնդի (կամ դրա առանձին մասերի)՝ հանգեցնելով վարձավճարների ոչ մեծ աճի¹¹⁶:

Ֆինանսավորման գերակշիռ մասը կարելի է ապահովել մասնավոր փոխառությունների միջոցով, ընդ որում ընդհանուր բնակարանային ֆոնդի կապիտալը և վճարների գումարների ապահովությունը հանգեցնում են փոխառության գծով ծախսերի նվազման: Մոդելը նախատեսում է նաև հանրային սուբսիդավորման կամ պետական օգնության տարր, անվճար կամ էժան հողատարածք, փոխառության պետական երաշխիքներ, վարկերի տոկոսների սուբսիդավորում և վարձակալների համար սուբսիդավորում՝ վարձավճարները մատչելի մակարդակի վրա պահելու համար: Սակայն ցածր համավարձավճարներին նպաստելու բանալին «մարումն է», որը նաև թույլ է տալիս հոգալ կառավարման և պահպանման ծախսերը: «Ծախսերի վրա հիմնված վարձավճարի» մեթոդը շահավետ և իսկապես մատչելի դարձնելու համար այն պետք է ապահովվի ավելի մեծ ծավալով և երկար ժամկետով: Դա պահանջում է երկարաժամկետ պլանավորում և ներդրումներ պետական/հանրային գույքում, և բացառում է վաճառքը վարձակալներին, քանի որ դա, անշուշտ, կխաթարի սխեմայի «մարման» տարրը:

¹¹⁵ <https://socialhousing.wien/policy/the-vienna-model>

¹¹⁶ Kemeny, J. (1992), «Բնակարանային և սոցիալական տեսություն» [*Housing and Social Theory*], (Լոնդոն, Ռութլեջ), էջ 34:

Մատչելի բնակարաններ կառուցելու համար քաղաքային մարմինների հետ համագործակցող մասնավոր կառուցապատողները պետք է քաղաքապետարաններին թույլ տան նոր բնակարանների շուրջ կեսը վարձակալության տալ ցածր եկամուտ ունեցող բնակիչներին, իսկ կառուցապատողը, այդ դեպքում, մնացած բնակարանները վարձակալության կտա միջին եկամուտ ունեցող բնակիչներին: Որոշ ծրագրեր նախատեսում են ապագա վարձակալների մասնակցությունը պլանավորման, նախագծման և շինարարության գործընթացին և պատրաստ են հաշվի առնել նրանց կարծիքն այն մասին, թե ինչպիսի հարմարություններ կցանկանային ունենալ շենքում:

Բոսնիա և Հերցեգովինայում սոցիալական բնակարանային ապահովման քաղաքականությունը

Սոցիալական բնակարանային ապահովման մեկ այլ մոդել, որին նպատակահարմար է անդրադառնալ, Բոսնիա և Հերցեգովինայի սոցիալական բնակարանային ապահովման քաղաքականությունն է¹¹⁷: 2012 թվականին Բոսնիա և Հերցեգովինայի, Խորվաթիայի, Չեռնոգորիայի և Սերբիայի կողմից մեկնարկել է Բնակարանային ապահովման տարածաշրջանային ծրագիրը (RHP)¹¹⁸՝ նպատակ ունենալով խոցելի փախստականներին, ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ-ներին) և վերադարձողներին առաջարկել կայուն բնակարանային ապահովման լուծումներ՝ իրենց ծագման կամ տեղահանման վայրերում: Ընդհանուր առմամբ, ի հավելումն երկրի տեղական համայնքներին ինտեգրվել ցանկացողների, Բոսնիա և Հերցեգովինայում իրենց նախապատերազմյան տները վերադառնալ ցանկացող ընտանիքներից ստացվել է RHP բնակարանային ապահովման օգնության համար 26 500 դիմում: RHP-ն հաջողությամբ ավարտվել է 2023 թվականին՝ ապահովելով Բոսնիա և Հերցեգովինայում (ԲՀ) երկարատև և կայուն բնակարանային ապահովման լուծումներ 2 778 ընտանիքի համար (մոտ 9 000 մարդ)¹¹⁹: Բոսնիա և Հերցեգովինայում RHP հիմնադրամի կողմից փախստականների և ներքին տեղահանված անձանց համար բնակարանային ապահովման լուծումների նպատակով ծախսվել է մոտ 76 միլիոն եվրո¹¹⁹:

Եվրոպայի խորհրդի զարգացման բանկի 2022 թվականի համատեղ գործառնական հաշվետվության մեջ նշված են չորս գործոնները, որոնք առանցքային են եղել ծրագրի հաջողության համար և կարող են որդեգրվել.

- Առաջին՝ կենտրոնականառավել խոցելի խավերի վրա ծրագիրը հարմարեցնել նրանց կարիքներին՝ սոցիալական ազդեցությունն առավելագույնի հասցնելու համար:
- Երկրորդ՝ ապահովել, որ շահառու երկիրը ղեկավարի իրականացումը՝ խթանելով ծրագրի նկատմամբ հանձնառությունը:
- Երրորդ՝ ներդնել աջակցության և վերահսկողության արդյունավետ համակարգ՝ առավելագույնի հասցնելու կարողությունների զարգացումը և հաշվետվողականությունը:

117 Nikolina Obradović և Mirna Jusić (2019), «Անօթևանության և բնակարանի բացառման դեմ պայքարի ազգային ռազմավարությունների թեմատիկ զեկույց. Բոսնիա և Հերցեգովինա» [*Thematic Report on National strategies to fight homelessness and housing Exclusion - Bosnia and Herzegovina*], Եվրոպական սոցիալական քաղաքականության ցանց: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ec.europa.eu/social/main.jsp?pager.offset=0&advSearchKey=ESPN_hhe2019&mode=advancedSubmit&catId=22&policyArea=0&policyAreaSub=0&country=0&year=0:

118 https://regionalhousingprogramme.org/wp-content/uploads/publications/RHP_FS_BiH_dec_2023_en.pdf

119 RHP Ֆինանսական և վիճակագրական հաշվետվություն, 2022թ.:

- Չորրորդ՝ ապահովել, որ ծրագիրը համապատասխանի դոնորների շահերին՝ շնորհիվ լավ կառավարման և բարձր տեսանելիության¹²⁰:

2023 թվականի տարեկան հաշվետվությունն արժեքավոր մանրամասներ է ներկայացրել RHP-ի կողմից իրականացված մոտեցման և իրականացված աշխատանքի վերաբերյալ¹²¹: Ծրագիրն ունեցել է շատ բարձր սոցիալական ազդեցություն՝ շնորհիվ առավել խոցելի խավերի կարիքների վրա կենտրոնանալու: Որդեգրելով կարիքների վրա հիմնված մոտեցում, որն ուղղված է առավել խոցելի փախստականներին և տեղահանվածներին՝ ծրագիրն ապահով տների տեսքով կոնկրետ օգնություն է տրամադրել նրանց, ովքեր դրա կարիքն ամենաշատն են ունեցել: Շահառուների մանրագնին ընտրության գործընթացները, հաճախ տեղական իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ և ՄԱԿ ՓԳՀ-ի (ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գործակալության) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության կողմից վերահսկողությամբ, երաշխավորել են, որ RHP-ի շահառու լինեն առավել խոցելի դասակարգված ընտանիքները:

RHP-ն շահառուներին առաջարկել է իրենց կարիքներին հարմարեցված բնակարաններ: Երկարատև տեղահանումից հետո կարիքավոր յուրաքանչյուր շահառու ընտանիքի համար ընտրության հնարավորությունը բարելավել է նրանց հետագա կյանքը և վերա/ինտեգրման հեռանկարները: Շահառուները ոչ միայն կարող էին ընտրել՝ մնալ իրենց տեղահանման վայրում, թե վերադառնալ նախկին բնակության վայր, այլև կարող էին բնակարանային ապահովման հետևյալ յոթ տարբերակներից ընտրել այն տարբերակը, որը լավագույնս համապատասխանում էր նրանց կարիքներին:

- Բնակարանների կառուցում կամ գնում
- Սեփական տների վերա/կառուցում
- Գյուղական տների գնում
- Շինանյութերի փաթեթների տրամադրում
- Հավաքովի տների կառուցում
- Տարեցների տներում տեղերի հատկացում¹²²:

120 RHP Գործառական հաշվետվություն 2022, էջ 3. <http://regionalhousingprogramme.org/wp-content/uploads/publications/annual-report/2022/index.html>:

121 Տարածաշրջանային բնակարանաշինության ծրագրի գործառական հիմնադրամ, տարեկան հաշվետվություն 2023թ.:

<file:///Users/padraickenna/Downloads/RHP-Fund-Annual-Report-2023.pdf>

122 Նույն տեղում, էջ 13:

No.	Ենթա-ծրագիր No	Ծրագրի անվանում	Կարգավիճակ	Ընդհանուր (գնահատված) արժեք (Եվրոյով)	Գրանտային գումար (Եվրոյով)	Ազգային ներդրում (Եվրոյով)
Բոսնիա և Հերցեգովինա			Նախնական	76 191 528	64 892 698	11 298 830
			Ընթացիկ	76 344 460	64 892 509	11 451 951
1.		20 ընտանիքի համար շինանյութերի տրամադրում և 146 ընտանիքի համար պատրաստի արդյունքով վերակառուցման աջակցություն	Նախնական	2 688 500	2 387 500	281 000
			Վերջնական	2 821 432	2 387 311	434 121
2.	ԲՀ2 փոփոխված	825 տնային տնտեսությունների վերադարձի և վերինտեգրման կամ տեղական ինտեգրման համար բնակարանային լուծումների տրամադրում, 198 տների նախագծում և 251 բնակարանների նախագծում/վերանայում (ֆինանսավորվել է ԲՀ6-ի շրջանակներում) և ԲՀ1-ի, ԲՀ2-ի և ԲՀ4-ի համար տեխնիկական կայունության միջոցառումներ		15 848 245	13 634 032	2 214 213
3.	ԲՀ3 փոփոխված	Փայսստականների և ՆՏԱ-ների համար բազմաբնակարան շենքերում 567 բնակարանների կառուցում		17 397 433	13 843 875	3 553 558
4.	ԲՀ4 փոփոխված	Փայսստականների և ՆՏԱ-ների վերադարձի և տեղական ինտեգրման համար 481 տների վերակառուցում/կառուցում		9 620 371	8 569 651	1 050 720
5.	ԲՀ5 փոփոխված	Տեղական ինտեգրման համար 50 ընտանեկան տների վերա/կառուցում և փայսստականների ու տեղահանված անձանց վերադարձի համար 475 ընտանեկան տների վերա/կառուցում		10 958 262	10 197 423	760 839
6.	ԲՀ6 փոփոխված	216 ընտանեկան տների վերա/կառուցում և 353 բնակարանների կառուցում բազմաբնակարան շենքերում՝ տեղահանված անձանց և վերադարձողների համար		19 698 717	16 260 217	3 438 500

5. Սոցիալական բնակարանային ապահովման ռազմավարությունը երկրի բնակարանային ապահովման ռազմավարությանն ինտեգրելու առաջարկվող մոդելներ

Բնակարանային ապահովման ընդհանուր ռազմավարություն

Բնակարանային շուկաների պետական կարգավորումը և բնակարանային ծախսերը վերահսկելու, համապատասխան չափանիշներ ապահովելու և խտրականությունը բացառելու նպատակով միջամտություններն իրականացվում են ողջ եվրոպայում, ընդ որում սոցիալական բնակարանային ապահովման ռազմավարությունը հաճախ դրա մասն է կազմում: Սոցիալական բնակարանով ապահովումը կարող է լինել վերականգնման կամ վերակառուցման ծրագրերի մի մասը, երբ զարգացմանն ուղղված երաշխավորված ներդրումները խթանում են մասնավոր ներդրումները, թեև սոցիալական խտրականությունից խուսափելու համար այդ կառուցակարգերը պետք է մանրակրկիտ պլանավորվեն:

Չեռնաբար սոցիալական բնակարանային ապահովման ռազմավարության հիմնական նպատակները պետք է ի սկզբանե հստակեցվեն՝ պարզելու, թե արդյոք դրանք լուծում են փախստականների վերաբնակեցման հետ կապված առկա խնդիրները, թե ավելի երկարաժամկետ բնակարանային ապահովման ազգային քաղաքականության մաս են՝ կարգավորող շրջանակով և ազգային/տեղական կառավարման մարմինների ու քաղաքացիական հասարակության մասնագիտական ծառայություններ մատուցողների աջակցությամբ: Սոցիալական բնակարանային ապահովման ցանկացած ռազմավարության նպատակները պայմանավորված են հանրային քաղաքականության առաջնահերթություններով¹²³:

ՄԱԿ ԵՏՀ-ի կողմից հրատարակված՝ «Արժանապատիվ, համապատասխան ստանդարտի, մատչելի և էկոլոգիապես անվտանգ բնակարանների հասանելիություն բոլորի համար»¹²⁴ Կայուն բնակարանային ապահովման մասին ՄԱԿ ԵՏՀ-ի Ժնևի խարտիան ուղեցույց է տրամադրում մի շարք ոլորտներում բնակարանային ապահովման քաղաքականության իրականացման համար, այդ թվում՝ սոցիալական ներառման և մասնակցության առումով: Բնակարանային ապահովման քաղաքականությունը և երկխոսությունը պետք է առաջնվեն՝ շեշտը դնելով մասնակցային և բանակցային քաղաքացիական ներգրավվածության, սոցիալական ներառականության, հանրային առողջապահության, թափանցիկության և էթիկական գործընթացների նկատմամբ ուշադրության վրա: Այս հարցերը պետք է հասցեագրվեն հետևյալի միջոցով.

123 Տես, օրինակ, Իռլանդիայի կառավարություն (2014) «Սոցիալական բնակարանով ապահովման ռազմավարություն. աջակցություն, մատակարարում և բարեփոխումներ»՝ <https://www.gov.ie/pdf/?file=https://assets.gov.ie/118072/424b2b97-52e3-43fa-85f4-d59dc897dc8d.pdf#page=null>. «Մեծ Մանչեսթերի բնակարանային ռազմավարություն. բնակարանային ապահովման նոր մոտեցում 2019 – 2024թթ.» [Greater Manchester Housing Strategy – Doing Housing Differently 2019 – 2024]՝ https://www.greatermanchester-ca.gov.uk/media/2165/16a_gm_housing_strategy_final.pdf:

124 ՄԱԿ-ի փաստաթուղթ (E/ECE/1478/Rev.1)՝ :

- i. Համապատասխան ստանդարտի, առողջության համար անվնաս, անվտանգ և մատչելի բնակարանների համար պետական աջակցության գործիքներ՝ ներառյալ հիմնական կոմունալ և այլ ծառայությունների հասանելիությունը, որոնք նպաստում են սոցիալական միասնությանը և սոցիալական տարբեր խմբերի, այդ թվում՝ մարգինալացված և խոցելի խմբերի ու մարդկանց բնակարանային ապահովման կարիքների բավարարմանը¹²⁵:
- ii. Բնակարանների ապահովման տարբերակների ավելացում, մասնավորապես՝ մատչելի և սոցիալական բնակարանների հասանելիության բարձրացում տարբեր գործիքների, այդ թվում՝ վարձակալության չեզոքությունը խթանելու միջոցով:
- iii. Բնակարանների պլանավորում, նախագծում, պահպանում և արդիականացում, որը նպաստում է առողջ ապրելակերպին, խթանում է դիզայնի համընդհանուր սկզբունքների իրականացումը՝ բարելավելու բնակատեղերի կիրառելիությունը բոլոր մարդկանց համար՝ անկախ տարիքից, գենդերից և հաշմանդամությունից, նպաստում է սոցիալապես խառը համայնքների ձևավորմանը:
- iv. Աջակցություն բնական և մարդածին աղետներից տուժողների համար բնակարանային ապահովման պատշաճ լուծումներին:
- v. Սոցիալական արդարությանը նպաստող՝ բնակարանային ապահովման և հողային սեփականության վերաբերյալ քաղաքականություններ:
- vi. Խորհրդակցական և ժողովրդավարական գործընթացների միջոցով մշակված՝ բնակարանային ապահովման ազգային քաղաքականություն՝ հիմնված փորձագիտական գիտելիքների, ծավալուն տվյալների հավաքագրման, վիճակագրության թափանցիկ հաշվետվությունների և բնակարանային ապահովման զարգացման հետ կապված բոլոր հարցերի վերաբերյալ լայնածավալ և ներառական հանրային բանավեճի վրա:
- vii. Հետազոտություն և գիտելիքների փոխանակում կայուն բնակարանային ապահովման բոլոր հայեցակետերի վերաբերյալ:
- viii. Արդյունավետ, հստակ և թափանցիկ կառավարում բոլոր մակարդակներում՝ ներառյալ բնակարանների հետ կապված որոշումների բողոքարկման ինստիտուցիոնալացված ընթացակարգեր (պարբ. 15):

ՏՀԶԿ-ի Բնակարանային ապահովման քաղաքականության գործիքակազմը սահմանում է բնակարանային ապահովման քաղաքականության ներառականության, արդյունավետության և կայունության գծով մի շարք ցուցիչներ, ինչպես նաև սոցիալական բնակարանների, վարձավճարների, վարձավճարների կարգավորման, հարկման, հողօգտագործման կարգավորման և հիփոթեքային ֆինանսավորման ապահովման ու կարգավորման մասով բնակարանային ապահովման քաղաքականությամբ նախատեսված ծախսային լծակները:

¹²⁵ Խոցելի խմբերի և մարդկանց սահմանումը տարբերվում է երկրից երկիր և կարող է ներառել երիտասարդներին, տարեցներին, երեխաներով մեծ ընտանիքները և միայնակ ծնողով ընտանիքները, ընտանեկան բռնության զոհերին, հաշմանդամություն ունեցող անձանց՝ ներառյալ մտավոր և (կամ) ֆիզիկական հաշմանդամությունը, ներգաղթյալներին, փախստականներին, գնչուական համայնքները և փոքրամասնությունների այլ խմբեր:

Գծապատկեր 1. Ներառականության, արդյունավետության և կայունության արդյունքների ու քաղաքականությունների գնահատման ՏՀԶԿ ցուցիչները¹²⁶



ՏՀԶԿ-ն սակայն ընդգծում է, որ քանի որ բնակարանային ապահովումը քաղաքականության բարդ ոլորտ է, արդյունքի շատ ցուցիչներ կարող են բացահայտել քաղաքականության մեկ կամ մի քանի նպատակների հետ կապված քաղաքականության մշակման թերությունները: Օրինակ՝ բնակարանների գնի և եկամուտների հարաբերակցության կայուն աճը վկայում է բնակարանների մատչելիության վատթարացման միտումի մասին, ինչը մարտահրավեր է ներառականության առումով և ազդարարում է բնակարանային շուկաների ցածր արդյունավետության մասին: Արդյունքում, հաճախ արդյունքների և քաղաքականության նպատակների միջև չկա ուղղակի համապատասխանություն, և արդյունքների ցուցիչները քաղաքականության նպատակների հետ փոխկապակցելու համար անհրաժեշտ են լրացուցիչ մոտարկումներ:

Կարևոր է գիտակցել, որ բնակարանն ակտիվների, պարտավորությունների և հարստության կուտակման և բաշխման հիմնական շարժիչ ուժն է ողջ կյանքի ընթացքում և սերունդների միջև¹²⁷: «Աղյուս առ աղյուս ավելի լավ բնակարանային ապահովման քաղաքականության կառուցում»¹²⁸ վերտառությամբ ՏՀԶԿ-ի զեկույցում (2021) նշվում է, որ բնակարանների կշիռը հարստության անհավասարության ցուցանիշում տարբեր երկրներում զգալիորեն տարբերվում է, թեև կարելի է առանձնացնել հետևյալ ընդհանուր փաստերը.

¹²⁶ <https://www.oecd-ilibrary.org/sites/8ec0f507-en/index.html?itemId=/content/component/8ec0f507-en#figure-d1e1290>. Տե՛ս նաև ՏՀԶԿ (2020), «Սոցիալական բնակարանային ապահովում. անցյալ և ապագա բնակարանային քաղաքականության անկյունքարը», ՏՀԶԿ հրատարակություն, <http://www.oecd.org/social/social-housing-policy-brief-2020.pdf>:

¹²⁷ Causa, O., N. Woloszko և D. Leite (2019), «Բնակարան, հարստության կուտակում և հարստության բաշխում. ապացույցներ և ոճավորված փաստեր» [Housing, Wealth Accumulation and Wealth Distribution: Evidence and Stylized Facts], ՏՀԶԿ-ի տնտեսագիտության դեպարտամենտի աշխատանքային փաստաթղթեր, թիվ 1588:

¹²⁸ ՏՀԶԿ (2021) զեկույց «Աղյուս առ աղյուս ավելի լավ բնակարանային ապահովման քաղաքականության կառուցում» https://www.oecd-ilibrary.org/economics/brick-by-brick_b453b043-en:

- Հարստության անհավասարությունը շատ ավելի մեծ է, քան եկամուտների անհավասարությունը, մասամբ կյանքի ցիկլի ազդեցության տակ, երբ հարստությունը կուտակվում է ժամանակի ընթացքում:
- Տան սեփականության և հարստության անհավասարության հարցում բոլոր երկրներում առկա է խիստ բացասական փոխկապակցվածություն: Տան սեփականության ցածր մակարդակ ունեցող երկրներում նկատվում է հարստության բարձր անհավասարություն, նույնիսկ եթե եկամուտների անհավասարությունը ցածր է:
- Բնակարանն ընդհանուր առմամբ չեզոքացնում է հարստության բաշխումը, քանի որ այն տնային տնտեսությունների հաշվեկշռում ամենաարժեքավոր ակտիվն է և բաշխված է ավելի հավասար, քան մյուս ակտիվները, ինչպիսիք են ֆինանսական միջոցները: Բնակարանը հարաբերական առումով հարստության շատ ավելի մեծ աղբյուր է բաշխվածության սանդղակի միջին մասում, քան վերին¹²⁹:

Հիփոթեքային շուկաների մատչելիությունը վարկային սահմանափակ հնարավորությամբ տնային տնտեսություններին տալիս է սեփական տուն ունենալու ավելի մեծ հնարավորություն, թեև պարունակում է ռիսկեր:

- Բնակարանային ապահովման հետ կապված պարտքը տնային տնտեսությունների պորտֆելում ամենակարևոր պարտավորությունն է, հատկապես երիտասարդ և բաշխման սանդղակի ստորին մասում գտնվող տանտերերի համար: ՏՀԶԿ երկրներում տնային տնտեսությունների հիփոթեքային պարտքի չափի կտրուկ տատանումներ են նկատվում՝ մոտ կեսից մինչև մեկ տասներորդից ցածր:
- Հիփոթեքային պարտքը և հնարավորություն է, և ռիսկ: Թեև այն թույլ է տալիս տնային տնտեսություններին հարստություն կուտակել, հատկապես նրանց, ովքեր փոքր սկզբնական ակտիվներ ունեն, այն կարող է տնտեսական և սոցիալական խոցելիություն առաջացնել տնային տնտեսությունների համար, հատկապես նրանց համար, ովքեր գտնվում են բաշխվածության սանդղակի ստորին հատվածում¹³⁰:

Աղյուսակ 1. Բնակարանային հարստություն. միտումներ, լծակներ և քաղաքականություն¹³¹

Միտումներ	Լծակներ	Քաղաքականություն
• Որքանով է կարևոր բնակարանը հարստության կուտակման և հարստության անհավասարության համար: • Բնակարանը հարստության հիմնական շարժիչ ուժն է, հատկապես միջին խավի համար: Բնակարանային ապահովվածությունն ավելի հավասարաչափ է բաշխված, քան մյուս ակտիվները:	• Ինչի՞ հիման վրա է որոշվում բնակարանային հարստության բաշխումը: • Տան սեփականության և բնակարանային հարստության տարբերություններն արտացոլում են պատմական և սոցիալ-տնտեսական գործոնները, ինչպիսիք են տնային տնտեսությունների կառուցվածքը՝ տարիքի և կազմի առումով, ինչպես նաև քաղաքականությունը	• Ինչպե՞ս կարող է քաղաքականությունն ազդել բնակարանային հարստության վրա: • Հիփոթեքային վարկը թույլ է տալիս տնային տնտեսություններին հարստություն կուտակել, հատկապես նրանց, ովքեր փոքր սկզբնական ակտիվներ ունեն, բայց այն կարող է նաև խոցելի տնային տնտեսություններին ենթարկել ֆինանսական ռիսկերի՝ տան գների անկման կամ եկամուտների կորստի դեպքում:

129 https://www.oecd-ilibrary.org/sites/b453b043-en/1/3/5/index.html?itemId=/content/publication/b453b043-en&_csp_=6c2144a214b333aaac200b082e70ed53&itemIGO=oecd&itemContentType=book

130 Նույն տեղում:

131 Նույն տեղում, գլուխ 5:

Թերևս այսօր քաղաքականության մշակման ամենաընդգրկուն գործիքները, որոնք հասանելի են սոցիալական բնակարանային ապահովման ռազմավարությունում (իրականում մասնաշաղկապ բնակարանային ապահովման ռազմավարությունում), սահմանված են ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույցում (2021)՝ «Բնակարանային ապահովման ծրագիր 2030. արդյունավետ քաղաքականություններ մատչելի բնակարանների համար ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում»¹³²: #Housing2030 կայքում հրապարակված այս զեկույցը¹³³ պարունակում է մանրամասն ուղղորդում՝ արդյունավետ կառավարման, հողային ռազմավարական քաղաքականության, բնակարանային ապահովման մասով ներդրումների և կլիմայի համար չեզոք ու մատչելի բնակարանների և թաղամասերի ստեղծման ակտիվ խթանման համար: Ձեկույցն ուրվագծում է քաղաքականության գործիքակազմը, որը կարող է կիրառվել բնակարանային ապահովման ռազմավարության մեջ:

Նկար 1. Գործիքներ, որոնք կարող են օգտագործվել բնակարանային ապահովման քաղաքականության մեջ¹³⁴

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՐԻՄԻՔՆԵՐ	Ռազմավարական շրջանակ		Ինստիտուտների և կարողությունների զարգացում
	Բազմաստիճան կառավարում		Բնակարանային չափանիշների սահմանում և մոնիթորինգ
	Ապացույցներ		Վերահսկողություն
	Այդ նպատակով հատուկ նախատեսված՝ սոցիալական և մատչելի բնակարան տրամադրողներ		Վարձակալների և սեփականատերերի ներգրավման շրջանակներ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՈՂՈՒՄՆԵՐ ԳՐԻՄԻՔՆԵՐ	Կարգավորող ֆինանսական հաստատություններ	Սոցիալական և մատչելի բնակարանների՝ ոչ առևտրային հիմունքներով տրամադրում	Վարձավճարների սուբսիդավորում
	Վարձավճարների սահմանում, ինդեքսավորում և կարգավորում	Միկրոֆինանսավորում	Տնային տնտեսությունների խնայողությունների օգտագործում
	Հատուկ նշանակության միջնորդներ	Համատեղ սեփական կապիտալի և ծախսերի սխեմաներ	Մատչելի բնակարանների մասով ներդրումների համար շրջանառվող միջոցներ
	Ներդրումների ուղղորդման հարկում		
ՀՈՂԱՅԻՆ ԶԱՂԱՊԱՐԱԿԱՆ ԳՐԻՄԻՔՆԵՐ	Բանկային գործարքներ հանրային հողատարածքների համար	Հանրային հողատարածքների վարձակալություն	
	Հողատարածքի կարգավորում	Հողի արժեքի հաշվառում	
	Քաղաքի և թաղամասի պլանավորում		
	Հողի օգտագործման կարգավորում և ներառական գոտիավորում		
	Հողի արժեքի հարկում		
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՐԻՄԻՔՆԵՐ	Էներգաարդյունավետությանը վերաբերող շինարարական նորմեր և կանոններ		Էներգաարդյունավետության համար քաղաքային միջավայրի կարգավորում
	Չկարգավորվող կլիմայական քաղաքականության նախաձեռնություններ		Ֆինանսական խթաններ
	Իրազեկության բարձրացում և վերապատրաստում		

132 https://unece.org/sites/default/files/2021-10/Housing2030%20study_E_web.pdf

133 <https://www.housing2030.org>

134 ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույց (2021) «Բնակարանային ապահովման ծրագիր 2030. արդյունավետ քաղաքականություններ մատչելի բնակարանների համար ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում», էջ xvii, https://unece.org/sites/default/files/2021-10/Housing2030%20study_E_web.pdf

Բնակարանային իրավունքների տեսանկյունից՝ բնակարանային ապահովման ռազմավարության մշակումը համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքի իրականացման հիմնական տարրն է: ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցը համապատասխան ստանդարտի բնակարանի՝ որպես համապատասխան կենսամակարդակի իրավունքի բաղադրիչի և այս համատեքստում խտրականության չենթարկվելու իրավունքի վերաբերյալ¹³⁵, անդրադառնում է այդ հարցին:

6. Որպես կանոն, բնակարանային ապահովման քաղաքականությունը բաղկացած է մի շարք ծրագրերից, որոնք լուծում են բնակարանային ապահովման ընթացիկ խնդիրները՝ ներառյալ անօթևանությունը, սոցիալական բնակարանների մատակարարումը կամ մասնավոր շուկայում բնակարանների մատչելիությունը: Բնակարանային ապահովման ծրագրերը հաճախ իրականացվում են մեկ մարմնի, օրենքով նախատեսված գործակալության կողմից կամ կառավարության տարբեր մակարդակներում:

7. Բնակարանային ապահովման ռազմավարությունները գործում են ավելի բարձր մակարդակում քան բնակարանային ապահովման քաղաքականությունն ու ծրագրերը, և հիմնված են ժամանակի ընթացքում պահանջվող կառուցվածքային փոփոխությունների տեսլականի վրա: Ռազմավարությունը համակարգում է օրենքների, ծրագրերի, քաղաքականության և որոշումների լայն շրջանակ՝ բնակարանային ապահովման կարիքները հասցեագրելու համար, որոնք միասին ձևավորում են բնակարանային ապահովման համակարգը: Ռազմավարության նպատակը ոչ միայն բնակարանով ապահովելն է, այլև գործող համակարգերում առկա բացերը և անհավասարությունները լուծելը: Այն հնարավորություն է տալիս գնահատելու և փոփոխելու քաղաքականություններն ու ծրագրերը՝ ապահովելու համար դրանց արդյունավետությունը և մարտահրավեր նետելու բնակարանային ապահովման համակարգերի ծախսողմների հիմքում ընկած խարանմանը, մարգինալացմանը և խտրականությանը: Բնակարանային ապահովման ռազմավարությունը պետք է ներառի կառավարության տարբեր մակարդակների և գերատեսչությունների միջև բաշխված բազմաթիվ պարտականություններ և իրավասություններ:

8. 2030 թվականի օրակարգի ներքո ստանձնած հանձնառությունները կատարելու համար բնակարանային ապահովման ռազմավարությունը պետք է ապահովի, որ ոչ ոք աչքաթող չարվի: Այլ կերպ ասած, այն պետք է նպատակաուղղվի հասարակությունը փոխելուն, որտեղ զգալի թվով մարդիկ զրկված են համապատասխան բնակարանի իրավունքից՝ ստեղծելով հասարակություն, որտեղ բոլորին մատչելի են համապատասխան ստանդարտի բնակարաններ, որտեղ բնակարանը միջոց է ապահովելու արժանապատվությունը, անվտանգությունը և ներառվածությունը կայուն համայնքներում:

Սոցիալական բնակարանային ապահովման ռազմավարությունների և բնակարանային ապահովման ռազմավարությունների մշակումը կարող է արդյունավետ միջոց լինել բնակարանային իրավունքի միջազգային չափանիշները բնակարանային ապահովման համակարգերում ներառելու համար: ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն ընդգծել է, որ բնակարանի իրավունքի աստիճանական իրացման պարտավորությունը գրեթե միշտ պահանջում է բնակարանային ապահովման ազգային ռազմավարության ընդունում: Ռազմավարությունները պետք է մշակվեն ազդակիր խմբերի հետ խորհրդակցությամբ, նախատեսեն հստակ սահմանված նպատակներ, սահմանեն հատկացվող ռեսուրսները և հստակեցնեն պարտականություններն ու իրականացման ժամկետը: Համապատասխան ստանդարտի բնակարանի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը հրապարակել

135 ՄԱԿ-ի փաստաթուղթ A/HRC/37/53, 15 հունվարի 2018թ.:

է բնակարանի իրավունքի իրացման համապարփակ ռազմավարությունների իրականացման վերաբերյալ թիվ 4 ուղենիշը՝ «Համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքի իրականացման վերաբերյալ ուղենիշներ»: Համաձայն թիվ 4 ուղենիշի՝ բնակարանի իրավունքի իրացման համապարփակ ռազմավարությունների իրականացումը նախատեսում է, որ բնակարանային ապահովման ռազմավարությունները պետք է սահմանեն պետության պարտավորությունները, որոնք պետք է հետևողականորեն իրականացվեն՝ հիմնվելով հստակ նպատակների և ժամանակացույցերի վրա՝ հասնելու նախատեսված արդյունքներին և ապահովելու բոլորի համար համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքը հնարավորինս կարճ ժամանակում: Ռազմավարությունները պետք է ապահովեն համահունչ և համակարգված քաղաքականություն բոլոր ոլորտներում, մասնավորապես՝ կառուցապատման, հողի կառավարման, հարկման և ֆինանսների, սոցիալական նպաստների և ծառայությունների ոլորտներում:¹³⁶

- ա Բնակարանային ապահովման ռազմավարությունները պետք է սահմանեն պետության պարտավորությունները, որոնք պետք է հետևողականորեն իրականացվեն՝ հիմնվելով հստակ նպատակների և ժամանակացույցերի վրա՝ հասնելու նախատեսված արդյունքներին և ապահովելու բոլորի համար համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքը հնարավորինս կարճ ժամանակում:
- բ Ռազմավարությունները պետք է ապահովեն համահունչ և համակարգված քաղաքականություն բոլոր ոլորտներում, մասնավորապես՝ կառուցապատման, հողի կառավարման, հարկման և ֆինանսների, սոցիալական նպաստների և ծառայությունների ոլորտներում:
- գ Պետությունները պետք է մշակեն հատուկ ռազմավարություններ՝ վերացնելու բնակարանային իրավունքի խոչընդոտները, ինչպիսիք են խտրականությունը, ֆինանսականացումը, շահարկումը, գիշատիչ վարկավորումը, հողազավթումը, հակամարտությունները, հարկադիր վտարումները, շրջակա միջավայրի դեգրադացումը և աղետների հանդեպ խոցելիությունը: Ընդունված ռազմավարությունները պետք է արձագանքեն առկա և առաջացող մարտահրավերներին գյուղական և հեռավոր վայրերում, ինչպիսիք են՝ տարածական անարդարությունն ու կլիմայական փոփոխությունները:
- դ Պետությունները պետք է նախատեսեն առաջընթացի անկախ մոնիթորինգ՝ նպատակների և ժամանակացույցերի իրականացման հարցում, սահմանեն ընթացակարգեր, որոնց միջոցով ազդակիր համայնքները կարող են բացահայտել համակարգային խնդիրները, որոնք ազդում են բնակարանի իրավունքի իրացման վրա, և ապահովեն արդյունավետ արձագանքներ¹³⁷:

Միգրանտների և ներքին տեղահանված անձանց համար համապատասխան բնակարանի իրավունքի վերաբերյալ թիվ 10 ուղենիշում¹³⁸ նշվում է.

- ա Պետությունները պետք է ապահովեն բոլոր ներքին տեղահանված անձանց և բոլոր միգրանտների համար առանց խտրականության բնակարանի հավասար իրավունք, փաստաթղթերի առկայությունից անկախ՝ միջազգային մարդու իրավունքներին և մարդասիրական իրավունքին

136 ՄԱԿ-ի փաստաթուղթ A/HRC/43/43, 26 դեկտեմբերի 2019թ., <https://www.ohchr.org/en/special-procedures/sr-housing/guidelines-implementation-right-adequate-housing>:

137 ՄԱԿ-ի փաստաթուղթ A/HRC/43/43, 26 դեկտեմբերի 2019թ., պարբ. 28:

138 «Միգրանտ» եզրույթն այստեղ կիրառվում է՝ չսահմանափակելով պաշտպանության այն մեխանիզմները, որոնք միջազգային իրավունքի համաձայն գործում են ոչ քաղաքացիների հատուկ իրավական կատեգորիաների համար՝ ներառյալ փախստականները, ապաստան հայցողները, քաղաքացիություն չունեցող անձինք, թրաֆիքինգի ենթարկված անձինք և աշխատանքային միգրանտները:

համապատասխան¹³⁹: Պետությունները պետք է համակարգեն միգրացիայի, ներքին տեղահանման և բնակարանային ապահովման ծրագրերը՝ ապահովելու համար համապատասխան բնակարանի իրավունքը բոլոր համատեքստերում: Միգրանտների ընդունման և մյուս կենտրոնները պետք է համապատասխանեն արժանապատվության, համապատասխանության և ընտանիքի պաշտպանության չափանիշներին, ինչպես նաև մարդու միջազգային իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի մյուս պահանջներին¹⁴⁰: Միգրանտ երեխաները չպետք է բաժանվեն ծնողներից կամ խնամակալներից, իսկ տեղահանված ընտանիքները հնարավորինս արագ վերամիավորվեն¹⁴¹:

- բ Տարբերակված վերաբերմունքը բնակարան հայցողների նկատմամբ՝ ելնելով նրանց միգրանտի կարգավիճակից, պետք է լինի ողջամիտ և համաչափ և չվնասի պետության տարածքում կամ դրա իրավագործության ներքո բոլոր մարդկանց բնակարանի իրավունքի պաշտպանությանը¹⁴²: Միգրանտի կարգավիճակի հիման վրա շտապ ապաստարանների մատչելիության հարցում խտրականությունը պետք է բացառվի, և պետությունները պետք է ձգտեն, որ բնակարան տրամադրողներին չթույլատրվի և նրանցից չապահանջվի տեղեկատվություն տրամադրել իշխանություններին, որը կարգավիճակ չստացած միգրանտներին կստիպի խուսափել իրենց և իրենց ընտանիքների համար ապաստարան հայցելուց: Բնակարան տրամադրողները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և անհատները չպետք է պատժվեն ապաստարան կամ բնակարան ապահովելու հարցում միգրանտներին աջակցելու համար¹⁴³: Անհրաժեշտության դեպքում, որքան հնարավոր է շուտ, պետք է ապահովվի ավելի երկարաժամկետ բնակարանների մատչելիություն:
- գ Միգրանտների համար պետք է գործեն արդյունավետ պաշտպանական մեխանիզմներ՝ բնակարանային իրավունքի խախտման դեպքում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման և խտրականության բացառման համար: Հատուկ պաշտպանական միջոցներ և մեխանիզմներ են պահանջվում գործատուների կողմից տրամադրված բնակարաններում ապրող աշխատանքային միգրանտների համար, որոնք տառապում են ծանր պայմաններից կամ չարաշահումներից՝ թույլ տալով նրանց տեղափոխվել համապատասխան ստանդարտի կացարան և աշխատանքի անցնել՝ անարգել օգտվելով իրենց իրավունքներից¹⁴⁴:
- դ Փախստականներին և ներքին տեղահանված անձանց, որոնք ապօրինաբար կամ կամայականորեն զրկվել են իրենց նախկին տներից, հողերից, գույքից կամ տարիանվել են բնակության վայրից, պետք է տրվի վերադարձի

139 Տե՛ս ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի թիվ 20 ընդհանուր մեկնաբանությունը, Ռասայական խտրականության վերացման կոմիտեի թիվ 30 (2004) ընդհանուր առաջարկությունը ոչ քաղաքացիների նկատմամբ խտրականության վերաբերյալ, պարբ. 32, և «Աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիան, հոդված. 43 (1) (դ): Տե՛ս նաև Գլոբալ պայմանագիր անվտանգ, կազմակերպված և կանոնավոր միգրացիայի մասին, Նպատակ 15, և Գլոբալ պայմանագիր փախստականների մասին (A/73/12 (Մաս II), պարբ. 78–79):

140 Տե՛ս ՄԱԿ ՄՀԳՀ և Գլոբալ միգրացիոն խումբ, «Գործնական ուղղորդման հիման վրա ներկայացվող սկզբունքներ և ուղենիշներ խոցելի իրավիճակներում միգրանտների՝ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ» (Ժնև), սկզբունք 11:

141 Տե՛ս Ներքին տեղահանման վերաբերյալ ուղեցուցային սկզբունքները, սկզբունք 17 ff:

142 ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտե, ընդհանուր առաջարկություն թիվ 30, պարբ. 32:

143 Սկզբունքներ և ուղենիշներ խոցելի իրավիճակներում միգրանտների՝ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ, սկզբունք 13, պարբ. 4:

144 Տե՛ս Աշխատանքի միջազգային կազմակերպության 2011 թվականի՝ տնային աշխատողների վերաբերյալ առաջարկությունը (թիվ 201), պարբ. 7:

իրավունք՝ փախստականների և տեղահանված անձանց բնակարանների և գույքի վերադարձման սկզբունքներին համապատասխան¹⁴⁵:

Համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքի իրացման համար տեղական և տարածաշրջանային կառավարությունների կարողությունների և հաշվետվողականության ապահովման վերաբերյալ թիվ 11 ուղենիշը նախատեսում է, որ երկրներից մեծ մասում տեղական և տարածքային կառավարությունները կարևոր պարտականություններ ունեն՝ կապված համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքի հետ: Դրանց թվում են սոցիալական բնակարանների և ենթակառուցվածքների ստեղծումը և կառավարումը, հողօգտագործման պլանավորումը, ոչ ֆորմալ բնակավայրերի բարելավումը և ներդրումների ներգրավմանը միտված շուկաների կարգավորումը: Անշուշտ, տեղական ինքնակառավարման մարմինները կարևոր դեր են խաղում բնակարանի իրավունքի իրականացման գործում: Նրանք առավել մոտ են ազդակիր համայնքներին և ավելի լավ կարող են մասնակցային որոշումներ կայացնել և մշակել տեղական հանգամանքներին հարմարեցված նորարարական լուծումներ¹⁴⁶:

Պետության պարտավորություններին համապատասխան և բնակարանային ապահովման ֆինանսավորմանն ուղղված բիզնեսի կարգավորումն ապահովելու մասին թիվ 12 ուղենիշում նշվում է.

Մասնավոր հատվածը կարևոր դեր է խաղում բնակարանային ապահովման համակարգերի մեծ մասում և բնակարանի իրավունքի իրականացման գործում: Ներդրողները, ձեռնարկատերերը և անհատները զարգացնում, կառուցում, վաճառում և վարձակալում են բնակարաններ: Ֆինանսական հաստատությունները տրամադրում են վարկեր: Մասնավոր տնային տնտեսությունները գնում, կառուցում կամ բարելավում են իրենց սեփական բնակարանները և կարող են դրանք վարձակալությամբ տրամադրել ուրիշներին: Բնակարանային ապահովման համակարգերում տարբեր մասնավոր դերակատարների առանձնահատուկ դերը տարբեր է, բայց պետությունը պետք է ապահովի, որ նրանց ներգրավվածության բոլոր կողմերը համահունչ լինեն պետությունների՝ բոլորի համար բնակարանի իրավունքի իրացման պարտավորություններին¹⁴⁷:

Պետությունները ոչ միայն պետք է ապահովեն, որ կառուցապատողները բնակիչներին չտեղահանեն մատչելի բնակարաններից, այլ նաև այն, որ նրանք ստեղծեն այդ անհրաժեշտ մատչելի բնակարանները, որ բնակարանները թափուր չմնան, և որ բնակարանների վարձակալությունից կամ այլ տնտեսական գործունեությունից ստացված շահույթի մի մասն ուղղվի ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար համապատասխան ստանդարտի բնակարանների մատչելիության ապահովմանը¹⁴⁸:

145 ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/Sub.2/2005/17, հավելված և գլոբալ պայմանագիր փախստականների վերաբերյալ, պարբ. 60:

146 ՄԱԿ-ի փաստաթուղթ A/HRC/43/43, 26 դեկտեմբերի 2019թ., պարբ. 59:

147 ՄԱԿ-ի փաստաթուղթ A/HRC/43/43, 26 դեկտեմբերի 2019թ., պարբ. 64:

148 UNCESCR Ընդհանուր մեկնաբանություն թիվ 24 (2017) «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրով նախատեսված՝ պետության պարտավորությունների մասին՝ գործարար գործունեության համատեքստում, պարբ. 18:

Ձեկույցներից մեկում նշվում է, որ երկրին անհրաժեշտ է պետական մակարդակով բնակարանային ապահովման քաղաքականության հիմնական շրջանակ (տես Հավելված 4), որը կներառի անօթևանության համապատասխան սահմանումները՝ ETHOS¹⁴⁹ տիպաբանությանը և մոնիթորինգի ցուցիչներին համահունչ¹⁵⁰: Հետևաբար ETHOS կատեգորիաները տարածվում են եվրոպայում անօթևանության դասակարգման ներքո բոլոր կենսապայմանների նկատմամբ:

- տանիքի բացակայություն (չունի որևէ կացարան, քնում է փողոցում),
- անօթևանություն (ունի քնելու տեղ, սակայն ժամանակավոր կացարանում կամ ապաստարանում),
- կացություն անապահով բնակատեղում (սպառնում է անօթևանության վտանգ անապահով վարձակալության, վտարման, ընտանեկան բռնության պատճառով),
- կացություն ստանդարտին չհամապատասխանող բնակատեղում (անօրինական ճամբարներում գտնվող վագոն-տնակ, ոչ պիտանի կացարան, ծայրահեղ գերբնակեցվածություն):

Անշուշտ, անօթևանության՝ պետության կողմից նախատեսված սահմանումները անօթևանության և բնակարանային բացառման եվրոպական տիպաբանության (ETHOS) ԵՄ սահմանումներին համապատասխանեցնելը կապահովի, որ անօթևանությունը չորակվի որպես թափառականություն կամ պարապություն և չպատժվի: Դա նաև կնպաստի այս ոլորտում փաստահեն քաղաքականության իրականացմանը: Շարունակական ռեսուրսներ պետք է հատկացվեն տվյալների համակարգված հավաքագրմանը և մոնիթորինգի հաշվետվություններին՝ հնարավորություն ստեղծելով հասարակության կողմից համարժեք արձագանք ձևավորել անօթևանության հարցին:

«Բնակարանային ապահովման ծրագիր 2030. արդյունավետ քաղաքականություններ մատչելի բնակարանների համար ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում»¹⁵¹ վերտառությամբ ՄԱԿ ԵՏՀ-ի ղեկույցում նշվում է, որ բնակարանային ապահովման ռազմավարությունը «չպետք է աչքաթող անի սովորական մարդկանց բնակարանային ապահովման արդյունքների բարելավման ընդհանուր նպատակը՝ ներառյալ էկոլոգիապես կայուն բնակարանային ապահովման հատվածի զարգացումը»¹⁵²: Մարդկանց կարիքների վրա հիմնված բնակարանային ապահովման ռազմավարությունը պետք է տնային տնտեսությունները դիտարկի որպես յուրովի միավորումներ՝ նմանատիպ, բայց առանձնահատուկ կարիքներով:

Քաղաքականություն մշակողները պետք է մշակեն բնակարանային ապահովման կարիքների լայն սպեկտր՝ սկսած այն տնային տնտեսություններից, որոնք հրատապ աջակցության կարիք ունեն, օրինակ՝ անօթևաններից, մինչև նրանց, ովքեր իրենց բնակարանային հարցերում պետական աջակցության կարիք չունեն:

149 Տե՛ս Հավելված 4:

150 Անօթևանության ներդաշնակեցված սահմանում վիճակագրական նպատակներով: Երբեմն կոչվում է «ETHOS Light», սա ETHOS տիպաբանության տարբերակն է, որը մշակվել է 2007 թվականին եվրոպական հանձնաժողովի ուսումնասիրության համատեքստում: Այն պրագմատիկ գործիք է անօթևանների վերաբերյալ տվյալների հավաքագրման համար, այլ ոչ թե հայեցակարգային և գործառական սահմանում, որն օգտագործվում է մի շարք քաղաքականության և գործնական նպատակների համար՝ <https://www.feantsa.org/en/toolkit/2005/04/01/ethos-typology-on-homelessness-and-housing-exclusion>:

151 https://unece.org/sites/default/files/2021-10/Housing2030%20study_E_web.pdf

152 Նույն տեղում, էջ 8:

Պետք է լավ հասկանալ, թե ինչ դեր կունենան այս սպեկտրում բնակարանային ապահովման տարբեր ձևերը, ինչպիսիք են բնակարանների սեփականությունը, մասնավոր վարձակալությունը, սոցիալական վարձակալությունը կամ կոոպերատիվները: Համապատասխան ռեսուրսներով, հմտորեն իրականացվող, երկարաժամկետ ներպետական կամ տարածքային բնակարանային ռազմավարությունը նպաստում է բնակարանային ապահովման մատչելիությանը և ներառականությանը: Մատչելի բնակարանային ապահովման նորարարական ռազմավարություններին և ծրագրերին անհրաժեշտ է արդյունավետ քաղաքական ղեկավարություն, որը կներգրավի կառավարության բոլոր մակարդակները, կնախատեսի բնակարանային ապահովման ոլորտի վերաբերյալ ամբողջական խորհրդակցություն և ծրագրերի իրականացում¹⁵³:

Ինչ վերաբերում է բնակարանային ապահովման ընդհանուր ռազմավարության ներքո սոցիալական բնակարանով ապահովման ռազմավարության տարբեր հարցերի համար պատասխանատվությանը, ապա կան բազմաթիվ մոդելներ: Դրանք սովորաբար հիմնված են տեղական, տարածքային և ազգային իշխանությունների միջև քաղաքականության գործիքների յուրաքանչյուր ասպեկտի համար իրավական կամ կառավարման/վարչական իրավասությունների բաշխման վրա: Ուստի, կարևոր է պարզաբանել, թե Նկար 2-ում ներկայացված կառավարման, ֆինանսավորման, ներդրումների, հողային քաղաքականության և կլիմայի չեզոքության ապահովման գործիքներից որոնք են հասանելի քաղաքապետարաններին, տեղական տարածքային և ազգային կառավարման մարմիններին:

ՏՀՀ-ն ուսումնասիրել է բնակարանային ապահովման քաղաքականության տարբեր գործիքների համար կառավարման մակարդակը¹⁵⁴: ՏՀՀ-ի շուրջ 20 երկրներ ունեն բնակարանային ապահովման հարցերով հատուկ նախարարություն: Այլ երկրներում բնակարանային ապահովման քաղաքականության համար պատասխանատու նախարարությունը շատ տարբեր է, ընդ որում այդ ոլորտը կարող է գտնվել էկոնոմիկայի, ֆինանսների, տնտեսական զարգացման, շրջակա միջավայրի, տարածքային զարգացման կամ սոցիալական հարցերի նախարարությունների իրավասության ներքո: Որոշ երկրներում բնակարանային ապահովման քաղաքականությունը մասնատված է մի քանի նախարարությունների միջև, քանի որ բնակարանային ապահովման քաղաքականության տարբեր հարցեր վերապահված են տարբեր նախարարությունների իրավասությանը: Օրինակ, որոշ երկրներում բնակարանով ապահովման հետ կապված հարկումը կարգավորվում է ֆինանսների նախարարության, էներգաարդյունավետության կանոնակարգերը շրջակա միջավայրի նախարարության, իսկ բնակարանային նպաստների, անօթևանության հետ կապված հարցերը՝ սոցիալական ապահովության նախարարության կողմից: Շվեդիայում բնակարանային ապահովման քաղաքականության տարբեր հարցերով իրավասու են մի շարք նախարարություններ (ֆինանսների նախարարություն, Գենդերային հավասարության և բնակարանային ապահովման նախարարություն, Զբաղվածության նախարարություն, Արդարադատության նախարարություն, Առողջապահության և սոցիալական հարցերի նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն, Մշակույթի

153 Նույն տեղում:

154 ՏՀՀ-ի զբաղվածության, աշխատանքի և սոցիալական հարցերի տնօրինություն, Սոցիալական քաղաքականության բաժին PH1.1. «ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ», <https://www.oecd.org/els/family/PH1.1.Policy%20instruments%20and%20level%20of%20governance.pdf>:

Նախարարություն, Ենթակառուցվածքների նախարարություն, Ձեռնարկատիրության և շրջակա միջավայրի նախարարություն). Նույնը՝ Չեխիայի Հանրապետությունում (Տարածքային զարգացման նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Արդյունաբերության և առևտրի նախարարություն, Ֆինանսների նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն, Գյուղատնտեսության նախարարություն, Ներքին գործերի նախարարություն): Նման բաշխվածության հիմքում բնակարանային ապահովման խնդրի բազմաթիվ հետևանքներն են ինչպես անհատների, այնպես էլ տնտեսության համար, ինչը կարող է նաև խնդիրներ առաջացնել քաղաքականության արդյունավետ համակարգման տեսանկյունից¹⁵⁵:

Բնակարանային ապահովման քաղաքականության տարբեր գործիքների համար պատասխանատու պետական կառավարման մակարդակը բարդ պատկեր է ներկայացնում: Մի շարք երկրներ ունեն բնակարանային ապահովման քաղաքականության ավելի կենտրոնացված մոտեցումներ, թեև սովորաբար ազգային ծրագրերն իրականացվում են տեղական իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ: Օրինակ՝ Բուլղարիայում, Չիլիում, Կոլումբիայում, Կոստա Ռիկայում, Չեխիայում, Էստոնիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում, Հունգարիայում, Իսլանդիայում, Իսրայելում, Իտալիայում, Ճապոնիայում, Կորեայում, Լատվիայում, Լյուքսեմբուրգում, Մալթայում, Մեքսիկայում, Նիդեռլանդներում, Լեհաստանում և Ռուսաստանի Դաշնությունում կենտրոնական կառավարությունը էական դեր է խաղում բնակարանային ապահովման քաղաքականության իրականացման գործում: Այլ երկրներում առանցքային դեր են խաղում տարածքային/երկրամասային կառավարությունները: Օրինակ՝ Ավստրիայում, Բելգիայում և Գերմանիայում բնակարանային ապահովման քաղաքականության միջոցառումների պատասխանատվությունը (օրինակ՝ սոցիալական բնակարանների տրամադրումը և տնային տնտեսություններին տուն գնելու ֆինանսական աջակցությունը) գրեթե ամբողջությամբ վերապահված է շրջաններին/երկրամասերին, թեև Գերմանիայում բնակարանային նպաստի հիմնական ծրագիրն իրականացվում է դաշնային մակարդակով:

Ավստրալիայում, Կանադայում և Միացյալ Նահանգներում դաշնային ֆինանսավորումը հասանելի է մատչելի բնակարանների հասանելիությանը աջակցելու համար գավառների/նահանգների կառավարություններին՝ օգնելու նրանց իրականացնել բնակարանային ապահովման տարբեր ծրագրեր (ներառյալ մատչելի բնակարանների զարգացումը և տնային տնտեսություններին ուղղակի աջակցությունը դրամաշնորհների և բնակարանային նպաստների միջոցով): Միացյալ Թագավորությունում (Անգլիայում, Հյուսիսային Իռլանդիայում, Շոտլանդիայում և Ուելսում) բնակարանային ապահովման քաղաքականության միջոցներն իրականացվում են հատուկ լիազորված վարչակազմի կողմից: Անգլիայի մասին տեղեկատվությունը նույնպես ներկայացված է այս ցուցիչում: Բացառություն են բնակարանի նպաստները, քանի որ դրանք սոցիալական ապահովության մի մասն են, որը փոխանցված իրավասություն չէ (բացառությամբ Հյուսիսային Իռլանդիայի) և, հետևաբար, հասանելի է Միացյալ Թագավորությունում ազգային ֆինանսավորման միջոցով և կառավարվում է տեղական իշխանությունների կողմից: Շվեյցարիայում բնակարանային ապահովման քաղաքականության միջոցառումների մեծ մասը տարբեր կանտոններում կազմակերպվում է տարբեր կերպ:

Մի շարք երկրներ, այդ թվում՝ Կանադան, Դանիան, Էստոնիան, Ֆրանսիան, Գերմանիան, Հունգարիան, Իռլանդիան, Ճապոնիան, Պորտուգալիան, Հարավային Աֆրիկան և Շվեյցարիան, նախատեսում են համատեղ պատասխանատվություն բնակարանային ապահովման ոլորտի տարբեր քաղաքականությունների համար՝ ներգրավելով ազգային, տարածքային և (կամ) քաղաքային իշխանություններին: Ապակենտրոնացման աստիճանը, քաղաքականության տարբեր միջոցներից կախված, նույնպես տարբեր է:

155 Նույն տեղում:

Սոցիալական բնակարանային ապահովման ծրագրերի իրականացումն Ավստրալիայում, Ավստրիայում, Կանադայում, Գերմանիայում, Ճապոնիայում և Իսպանիայում հիմնականում տարածքային կառավարությունների պատասխանատվության ներքո է: Բուլղարիայում, Դանիայում, Զոնգարիայում, Լիտվայում և Ռումինիայում սոցիալական վարձույթը հաճախ տրամադրվում է քաղաքապետարանների կողմից: Քաղաքապետարանները նաև կարևոր դեր են խաղում սոցիալական նոր բնակարանների զարգացմանն աջակցելու գործում՝ զեղչված գներով հող տրամադրելով: Սոցիալական բնակարանների համար համատեղ պատասխանատվություն են կրում էստոնիայի, Ֆրանսիայի, Իռլանդիայի, Կորեայի, Լատվիայի, Նիդեռլանդների, Սլովենիայի և Միացյալ Նահանգների ազգային, տարածքային և (կամ) քաղաքային իշխանությունները: Անգլիայում (Միացյալ Թագավորություն) սոցիալական բնակարանային ապահովումն ազգային կառավարության պատասխանատվության ներքո է, բացառությամբ Լոնդոնի, որտեղ այն կառավարվում է Մեծ Լոնդոնի մերիայի կողմից¹⁵⁶:

Բնակարանային ապահովման քաղաքականության համար պատասխանատվություն կրող կառավարության մակարդակի հարցի ավելի մանրամասն ուսումնասիրություն ներկայացված է Եվրոպայում սոցիալական բնակարանների վերաբերյալ Գերմանիայի վերջին զեկույցում: Այդ զեկույցը, որը հիմնված է ԵՄ-ում կատարված ուսումնասիրության վրա, անդրադառնում է հետևյալ հարցին. «Ինչպե՞ս ենք նշել ազգային/տարածքային/տեղական կառավարման մարմինները (օրինակ՝ նախարարությունները/ գերատեսչությունները/ գործակալությունները/այլ), որոնք սովորաբար պատասխանատու են բնակարանային ապահովման քաղաքականության համար:»:

156 Նույն տեղում:

Աղյուսակ Xx. Բնակարանային ապահովման քաղաքականության համար պատասխանատու կառավարության մակարդակ¹⁵⁷

Անդամ պետություն	Խումբ	Ազգային	Տարածքային	Տեղական
Մալթա	Բացառապես ազգային	4	0	0
Խորվաթիա	Ազգային գերակայություն	3	2	1
Հունաստան		5	1	1
Ավստրիա	Ազգային/տեղական	4	1	2
Բուլղարիա		4	1	3
Դանիա		8	2	6
Ֆինլանդիա		7	1	4
Ֆրանսիա		6	1	5
Իռլանդիա		6	1	3
Լատվիա		7	2	6
Նիդեռլանդներ		7	2	6
Հոլանդիա		5	1	2
Սլովակիա		7	1	4
Սլովենիա		6	1	4
Իսպանիա		5	1	6
Շվեդիա		7	0	3
Ավստրիա	Հավասարակշռված	4	6	2
Գերմանիա		7	7	3
Իտալիա		6	3	5
Պորտուգալիա		6	4	4
ՄԲԿ		6	7	5
Բելգիա	Տարածքայինացված	3	8	4
Կիպրոս	Առանց տարածքային մակարդակի	4	0	1
Չեխիայի Հանրապետություն		5	0	2
Էստոնիա		5	0	2
Հունգարիա		7	0	3
Լիտվա		4	0	2
Լյուքսեմբուրգ		6	0	2
Ռումինիա		5	0	4

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ քաղաքականությունների մի մասը կենտրոնական կառավարության պատասխանատվության ներքո է, սակայն շատ երկրներում դրանց մեծամասնությունն իրականացվում է տեղական մակարդակում:

157 Krapp, M-C., Vaché, M., Egner, B., Schulze, K. & Thomas, S. (2022) *Բնակարանային քաղաքականությունը ԵՄ-ում [Housing policies in the EU]*, (Բոնն, Շինարարության և տարածաշրջանային պլանավորման դաշնային գրասենյակին կից՝ Շենքերի, քաղաքային հարցերի և տարածքային զարգացման հետազոտությունների դաշնային ինստիտուտ), էջ 34:

6. Փախստականներին, խոցելի համայնքների մյուս ներկայացուցիչներին՝ կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցներին առնչվող հարցերի լուսաբանում

«Արժանապատիվ, համապատասխան ստանդարտի, մատչելի և էկոլոգիապես անվտանգ բնակարանների հասանելիություն բոլորի համար»¹⁵⁸ Կայուն բնակարանային ապահովման մասին ՄԱԿ ԵՏՀ-ի ժնկի խարտիան ընդգծում է համապատասխան ստանդարտի, էկոլոգիապես մաքուր, անվտանգ և մատչելի բնակարանների ստեղծման համար պետական աջակցության գործիքակազմի անհրաժեշտությունը՝ ներառյալ հիմնական կոմունալ և մյուս ծառայությունները, որոնք նպաստում են սոցիալական համախմբվածությանը, սոցիալական տարբեր խմբերի՝ ներառյալ մարզինալացված և խոցելի խմբերի ու մարդկանց բնակարանային կարիքների բավարարմանը: Խոցելի խմբերի և անհատների սահմանումը տարբերվում է երկրից երկիր և կարող է ներառել. երիտասարդներին, տարեց քաղաքացիներին, երեխաներով մեծ ընտանիքները և միայնակ ծնողով ընտանիքները, ընտանեկան բռնության զոհերին, հաշմանդամություն, այդ թվում՝ մտավոր և (կամ) ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց, ներգաղթյալներին, փախստականներին, գնչուական համայնքները և փոքրամասնությունների այլ խմբեր:

Դրանցից շատերը պաշտպանված են Հայաստանի կողմից ընդունված՝ բնակարանի իրավունքը երաշխավորող տարբեր փաստաթղթերով և արտացոլված են Եվրոպական սոցիալական խարտիայում և խտրականության դեմ միջոցներում: ՍԻԵԿ-ն առանձնացրել է հետևյալ խմբերը, որոնք հատկապես սոցիալական ծառայությունների կարիք ունեն. երեխաներ, տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, դժվար իրավիճակում հայտնված երիտասարդներ և երիտասարդ իրավախախտներ, փոքրամասնություններ (միգրանտներ, գնչուներ, փախստականներ և այլն), անօթևաններ, ալկոհոլը և թմրամիջոցները չարաշահողներ, բռնության ենթարկված կանայք և նախկին դատապարտյալներ¹⁵⁹: Ցանկը սպառնիչ չէ, քանի որ սոցիալական ապահովության ծառայությունների իրավունքը պետք է հասանելի լինի համայնքի բոլոր անհատներին և խմբերին¹⁶⁰:

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հարցերով հանձնակատարը, անդրադառնալով Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունից տուժած մարդկանց մարդու իրավունքների իրավիճակին¹⁶¹, 2024 թվականի հունվարին հայտարարել է.

Հանձնակատարի այցի ընթացքում քննարկված մեկ այլ կարևոր հարց էր առանձնապես խոցելի խմբերի վիճակը՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող

158 ՄԱԿ-ի փաստաթուղթ E/ECE/1478/Rev.1.

159 Եզրակացություններ 2009թ., 14§1 հոդվածի վերաբերյալ մեկնաբանություն:

160 Եզրակացություններ 2009թ., 14§1 հոդվածի վերաբերյալ մեկնաբանություն:

161 <https://rm.coe.int/observations-on-the-human-rights-situation-of-people-affected-by-the-c/1680ae228c>

անձինք, տարեցները, երեխաները (հատկապես առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված), խոշտանգումների ենթարկվածները, մարդկանց թրաֆիքինգի զոհերը կամ թրաֆիքինգի վտանգի տակ գտնվողները, միայնակ կանայք և ԼԳԲՏԻ անձինք: ՄԱԿ-ի Հայաստանի միջուրտային համակարգող խմբի և Հայաստանի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացված կարիքների ընթացիկ գնահատման համաձայն՝ Ղարաբաղի տարածաշրջանից տեղահանվածների թվում եղել է հաշմանդամություն ունեցող շուրջ 9 000 անձ, ինչպես նաև 65 և ավելի բարձր տարիքի 12 000 մարդ և 30 000 երեխա (այդ թվում՝ առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխաների փոքր խմբեր): Այս առումով Հանձնակատարն իր մտահոգությունն է հայտնել, որ խոցելի փախստականները կարծես ինստիտուցիոնալացված միջավայրերում հայտնվելու մեծ ռիսկի տակ էին (պարբ. 26):

Հաշմանդամություն ունեցող անձինք

Եվրոպական սոցիալական խարտիայի 15-րդ հոդվածում ասվում է.

Հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ անկախ տարիքից, նրանց հաշմանդամության բնույթից և առաջացման պատճառից, անկախության, սոցիալական ինտեգրման և համայնքի կյանքում մասնակցության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու նպատակով, Կողմերը պարտավորվում են, մասնավորապես՝...

...3. խթանել նրանց լիարժեք սոցիալական ինտեգրումը և համայնքի կյանքում մասնակցությունը՝ մասնավորապես այնպիսի միջոցներով, որոնք ներառում են հաղորդակցության և շարժունակության հետ կապված արգելքները հաղթահարելուն և տրանսպորտը, բնակատեղի, մշակութային գործունեությունն ու ազատ ժամանցը մատչելի դարձնելուն նպատակաուղղված տեխնիկական աջակցություն:

ՍԻԵԿ-ը նշել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները պետք է հաշվի առնվեն բնակարանային ապահովման քաղաքականության մեջ՝ ներառյալ համապատասխան, հանրային, սոցիալական կամ մասնավոր բավարար քանակի բնակատեղերի կառուցումը¹⁶²: Ֆինանսական աջակցություն պետք է տրամադրվի նաև գոյություն ունեցող բնակատեղերի հարմարեցման համար¹⁶³:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա

ԵՄ բոլոր 27 անդամ պետությունները, որոնք վավերացրել են Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (ՄԱԿ ՀԱԻԿ)¹⁶⁴, 4 տարվա պարբերականությամբ զեկուցում են Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեին: Կոմիտեն որոշում է զեկույցի՝ ՄԱԿ ՀԱԻԿ-ի պահանջներին համապատասխանությունը և դիտարկում անհատական բողոքները, որոնք ծագում են Կամընտիր արձանագրությունը (2006) վավերացրած պետությունում: Կոմիտեն նշել է, որ պետությունները կրում են հետևյալ պատասխանատվությունը.

162 Եզրակացություններ 2003թ., Իտալիա:

163 Եզրակացություններ 2003թ., Իտալիա:

164 Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, 2006թ.՝ <https://www.ohchr.org/EN/HRBodies/CRPD/Pages/ConventionRightsPersonsWithDisabilities.aspx>

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի բնակատեղերի բավարար քանակությունը, անկախ նրանից՝ այդ անձինք ապրում են միայնակ կամ որպես ընտանիքի անդամ, պետք է հասանելի լինի համայնքի բոլոր տարածքներում՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց ընտրության իրավունքը և դրանցից օգտվելու հնարավորությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է խոչընդոտներից զերծ նոր բնակատեղերի կառուցում և գոյություն ունեցող բնակելի կառույցների արդիականացում: Բնակատեղերը պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:¹⁶⁵

ՄԱԿ ՀԱԻԿ-ի 19-րդ հոդվածը գործում է ԵՄ Կառուցակարգված ներդրումների ֆինանսավորման կառուցակարգերի պարագայում՝ ապահովելով, որ ֆինանսավորման այդ մոտեցումը կիրառվի հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների և տարեցների համար բնակատեղերի ապահովման գծով ինստիտուցիոնալ ծառայությունների պահպանման կամ ընդլայնման համար: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների 2021-2030թթ. ԵՄ ռազմավարությունը ճանաչում է շարունակվող ապահիստիտուցիոնալացումը և խրախուսում անդամ պետություններին բնակարանային ապահովման իրենց քաղաքականություններում ներառել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների մասով մատչելիությունը՝ պլանավորելով նրանց համար մատչելի և հասանելի բնակարաններ¹⁶⁶: Հետևաբար անդամ պետությունների պարտականությունն է վերհանել և բավարարել հաշմանդամություն ունեցող բնակչության կարիքները, և իրենց երկրում բնակարանային ապահովման համակարգերը համապատասխանեցնել դրանց:

Համընդհանուր (ունիվերսալ) դիզայն

Հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների բնակարանի իրավունքի մեկ այլ հայեցակետ վերաբերում է բնակարանային ապահովման ռազմավարություններում համընդհանուր (ունիվերսալ) դիզայնի սկզբունքին¹⁶⁷: «Համընդհանուր դիզայնը» մոտեցում է, որի նպատակն է բոլորի համար մատչելի և հասանելի, ինչպես նաև բոլորի կողմից օգտագործելի դարձնել տարբեր միջավայրերի և պրոդուկտների դիզայնն ու կազմը, առավելագույնս անկախ և բնական ձևով, առանց հարմարեցման կամ մասնագիտացված դիզայնեռական լուծումների անհրաժեշտության: Համընդհանուր դիզայնի գաղափարի նպատակն է կյանքն ավելի դյուրին դարձնել բոլորի համար՝ ստեղծված միջավայրը, պրոդուկտները և հաղորդակցությունը հավասարապես մատչելի, օգտագործելի և հասկանալի դարձնելով՝ շատ քիչ լրացուցիչ ծախսերով կամ առանց դրանց: Համընդհանուր դիզայնի գաղափարը շեշտը դնում է օգտատերերի կարիքներին հարմարեցված դիզայնի վրա՝ որդեգրելով ամբողջական մոտեցում և նպատակ ունենալով բավարարել բոլոր տարիքի, չափերի և կարողությունների մարդկանց կարիքները՝ ներառյալ այն փոփոխությունները, որոնց մարդիկ ենթարկվում են իրենց կյանքի ընթացքում: Հետևաբար, համընդհանուր դիզայնը հայեցակարգ է, որը չի սահմանափակվում հաշմանդամություն ունեցող անձանց համար

165 ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 5, պարբերություն 34, 2017թ.:

166 Եվրոպական հանձնաժողով, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ռազմավարություն 2021-2030, բաժին 4, <https://ec.europa.eu/social/main.jsp?catId=738&langId=en&-pubId=8376&furtherPubs=yes>:

167 https://universaldesign.ie/uploads/publications/Introduction_2023-08-25-112718_bgwf.pdf

շենքերի ուղղակի մատչելիության ապահովմամբ, այլ ճարտարապետության, նախագծման և շրջակա միջավայրի պլանավորման անբաժանելի մասն է¹⁶⁸:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի և հասանելի բնակատեղը ՄԱԿ-ի ՀԱԻԿ-ի կարևոր տարր է, ընդ որում 9-րդ հոդվածը նպաստում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիությանը, իսկ 19-րդ հոդվածը՝ անկախ ապրելուն և համայնքում ընդգրկվելուն՝ ընտրության հավասար հնարավորությամբ: Համաձայն ՄԱԿ ՀԱԻԿ-ի՝ «համընդհանուր դիզայն» նշանակում է պրոդուկտների, միջավայրի, ծրագրերի և ծառայությունների այնպիսի նախագծում, որը թույլ կտա դրանց առավելագույնս օգտագործումը բոլոր մարդկանց կողմից¹⁶⁹:

Համընդհանուր դիզայնի միջոցով լիարժեք մասնակցության հասնելու վերաբերյալ անդամ պետություններին ուղղված՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2009)8 առաջարկության մեջ նշվում է, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել ավելի մեծ միասնության իր անդամների միջև, և որ այդ նպատակը կարող է իրականացվել, *inter alia*, հաշմանդամության քաղաքականության ոլորտում ընդհանուր կանոնների կիրառման միջոցով՝ քաղաքական, քաղաքացիական, սոցիալական, մշակութային և կրթական իրավունքների պաշտպանությունն ամրապնդելու նպատակով:

Համընդհանուր դիզայնը նաև աջակցում է ապահով (առանց բնակատեղից կտրվելու) ծերացման քաղաքականությանը: Բնակատեղերի տարբերակների առկայությունը, որոնք անվտանգ են և համապատասխանում են տարեց մարդկանց կարիքներին, թույլ է տալիս խուսափել խնամքի ոչ նախընտրելի և ավելի ծախսատար ձևերին ապավինելու անհրաժեշտությունից: Նման անցումը պետք է առաջնորդվի հանրային քաղաքականությամբ, իսկ համընդհանուր դիզայնի սկզբունքի ընդունումը պետք է պատշաճ կերպով ֆինանսավորվի և աջակցություն ստանա: Տարիքին հարմարեցված բնակատեղը բնակարանային ապահովման ծրագրերի լավագույն գործելակերպի կարևոր բաղադրիչն է¹⁷⁰:

Կանայք

Համապատասխան ստանդարտի բնակարանի հարցերով ՄԱԿ-ի հատուկ գեկուցողը նշել է, որ համապատասխան բնակատեղ ունենալու իրավունքը մարդու իրավունքների միջազգային իրավունքի համաձայն կանանց հավասարության իրավունքի կենտրոնական բաղադրիչն է¹⁷¹:

Թեև միջազգային և ներպետական օրենքներն ավելի ու ավելի են ճանաչում կանանց՝ համապատասխան ստանդարտի բնակարան ունենալու իրավունքը,

168 Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտեի ResAP(2001)1 բանաձև՝ կառուցապատված միջավայրում աշխատանքին առնչվող բոլոր մասնագիտությունների ուսումնական ծրագրերում համընդհանուր դիզայնի սկզբունքների ներդրման մասին, պարբ. 2:

169 ՄԱԿ-ի փաստաթուղթ A/HRC/28/37, Հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույն ապրելու և համայնքում ընդգրկվելու իրավունքի վերաբերյալ թեմատիկ ուսումնասիրություն:

170 <https://agefriendlyireland.ie/healthy-age-friendly-homes-programme/>

171 Կանայք և համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքը, համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքի հարցերով հատուկ գեկուցող, <https://www.ohchr.org/en/special-procedures/sr-housing/women-and-right-adequate-housing#introduction>:

այնուամենայնիվ, ի հեճուկս այդ իրավունքի ճանաչմանը, իրականում այն չափազանց հաճախ է մերժվում: Բնակարանային ապահովման ոլորտում խտրականության և անհավասարության հետևանքով շատ կանայք և աղքիկներ ապրում են անապահով, անարժանապատիվ և ոչ անվտանգ պայմաններում՝ գտնվելով անօթևանության և բռնության բարձր ռիսկի տակ: Հարկադիր վտարումները և բնակարանի իրավունքի այլ խախտումներ անհամաչափորեն են ազդում կանանց վրա և սաստկացնում գոյություն ունեցող անհավասարությունը՝ մեծապես խոչնդոտելով գենդերային հավասարությունը: Գենդերային հիմքով անհավասարության և խտրականության օրինակներ են՝

- անհավասար գույքային իրավունքները և անհիմն վտարումից պաշտպանությունը, որը բնակատեղում բնակվելու իրավունքը հաճախ պայմանավորում է ընտանեկան հարաբերություններով կամ ընտանեկան կարգավիճակով, մասնավորապես՝ ամուսնալուծության, ամուսնու մահվան դեպքերում և ժառանգության ժամանակ:
- տան սեփականության կամ վարձակալության համար տնտեսական հնարավորությունների և ֆինանսավորման խտրականությունն ու անհավասար մատչելիությունը:
- բնակարանային ապահովման և կառուցապատման պլանավորման հետ կապված մասնակցային և որոշումների կայացման գործընթացներից դուրս մնալը, ինչը հանգեցնում է նրան, որ բնակարանային պայմանները չեն բավարարում կանանց և աղքիկների կարիքները:
- կանանց և աղքիկների համար ընտանեկան և սեռական բռնության մեծ վտանգը, հատկապես, երբ այլընտրանքային ապահով բնակատեղը հասանելի չէ կամ երբ նրանք ապրում են անօթևան կյանքով:
- անվտանգ ջրի, սանիտարահիգիենիկ կամ մասնավոր կյանքի անձեռնմխելիությունն ապահովող այլ հարմարանքների բացակայությունը, այդ թվում՝ դաշտանային առողջության և ընդհանուր հիգիենայի առումով:
- կանանց անօթևանության ավելի «քողարկված» ձևերի մոնիթորինգի բացակայությունը¹⁷²:

Գենդերային խտրականությանը գումարվում են խտրականության այլ ձևեր: Օրինակ, հաշմանդամություն ունեցող կանայք ավելի անպաշտպան են ընտանեկան բռնության դեպքում, և ավելի քիչ հավանական է, որ նրանք ապաստարանի կամ այլընտրանքային կացարանի մատչելիություն կունենան: Բոլոր կանանց համար համապատասխան բնակարանի իրավունքի իրացումը պահանջում է հաշվի առնել խտրականության բոլոր շերտերը և կոնկրետ քայլեր ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ:

Հայաստանի կողմից վավերացված՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայում (Նյու Յորք, 1979 թվականի դեկտեմբերի 18)¹⁷³ նշվում է, որ «Կողմերը ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունը գյուղական շրջաններում [...] և, մասնավորապես, այդ կանանց համար ապահովում են հետևյալ իրավունքները [...] ը) օգտվելու կյանքի պատշաճ պայմաններից, մասնավորապես,

172 Նույն տեղում:

173 <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-elimination-all-forms-discrimination-against-women#%3a~%3atext=On%2018%20December%201979%2c%20the%2ctwentieth%20country%20had%20ratified%20it>

բնակարանային պայմաններից, սանիտարական ծառայություններից, էլեկտրա- և ջրամատակարարումից, ինչպես նաև տրանսպորտից և կապի միջոցներից» (հոդված 14.2): Պետությունները պարտավոր են ապահովել «ամուսինների հավասար իրավունքները գույքի սեփականության, ձեռքբերման, տիրապետման, կառավարման, դրանից ինչպես անվճար, այնպես էլ վարձով օգտվելու և տնօրինելու կապակցությամբ:» (հոդված 16.1):

Բնակատեղը նաև պետք է ապահով լինի, ինչը ներառում է կանանց և աղջիկների պաշտպանվածությունը ընտանեկան բռնությունից՝ Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին ՄԱԿ-ի հռչակագրին¹⁷⁴ համապատասխան: Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն առաջարկել է, որ պետությունները կանանց նկատմամբ բռնության դեպքում «ապահովեն ֆինանսական օգնության, ճգնաժամային կենտրոնների, ապաստարանների, թեժ գծերի և բժշկական, հոգեբանական և խորհրդատվական ծառայությունների հասանելիությունը»:

ՄԱԿ-ի հատուկ գեկուցողի կողմից համապատասխան բնակարանի իրավունքի իրականացման ուղենիշներում¹⁷⁵ նշվում է, որ.

44. Փախստականների, ապաստան հայցողների, միգրանտների, հատկապես նրանց, ովքեր չունեն փաստաթղթեր, ներքին տեղահանված անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների և երիտասարդների, բնիկ ժողովուրդների ներկայացուցիչների, կանանց, լեսբուհիների, գեյերի, բիսեքսուալների, տրանսգենդերների և ինտերսեքսների, տարեցների և ռասայական, էթնիկ և կրոնական փոքրամասնությունների տոկոսն անօթևանների, ոչ ֆորմալ կացարաններում և ստանդարտին չհամապատասխանող բնակարաններում բնակվողների շարքերում անհամաչափորեն մեծ է, և նրանք հաճախ տեղափոխվում են առավել մեկուսացված և անապահով տարածքներ: Այս խմբերը հաճախ բախվում են ինտերսեքսիոնալ խտրականության՝ իրենց բնակարանային կարգավիճակի պատճառով:

... 49. Բնակարանային ապահովման ոլորտում խտրականության և անհավասարության հետևանքով շատ կանայք և աղջիկներ ապրում են անապահով, ոչ արժանապատիվ և ոչ անվտանգ պայմաններում՝ անօթևանության և բռնության բարձր ռիսկի տակ: Նրանց նկատմամբ ուղղակի կամ անուղղակի խտրականություն դրսևորող ժառանգության մասին օրենքների, սովորույթների և ավանդույթների հետևանքով կանայք հաճախ զրկված են անշարժ գույքի և հողի նկատմամբ սեփականության իրավունքից և կարող են ենթարկվել հարկադիր վտարման վտանգի: Նրանց համար բնակարանի, հողի և գույքի մատչելիությունը, այդ թվում՝ վարկ ստանալու միջոցով, հաճախ կախված է ընտանիքի արական սեռի անդամի հետ հարաբերություններից և հաճախ վտանգվում է ամուսնալուծության կամ ամուսնու մահվան դեպքում:

50. Անբավարար բնակարանային պայմանները հատկապես բացասական ազդեցություն են ունենում կանանց և աղջիկների վրա: Օրինակ՝ հետապնդումները, ֆիզիկական հարձակումների, բռնաբարության և նույնիսկ սպանության դեպքերը հազվադեպ չեն, երբ կանայք և աղջիկները ստիպված են դուրս գալ

174 Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիր՝ ընդունված 1993 թվականի դեկտեմբերի 20-ին, <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/declaration-elimination-violence-against-women>:

175 ՄԱԿ-ի փաստաթուղթ A/HRC/43/43 26/12/2019: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://documents.un.org/doc/undoc/gen/g19/353/90/pdf/g1935390.pdf?token=wfilq9KetnnW8T2V8m&fe=true>:

տնից՝ ջուր բերելու կամ սանիտարահիգիենիկ հարմարություններից օգտվելու համար: Զուգարանի առկայության և առանձնանալու հնարավորության բացակայությունը բացասաբար է անդրադառնում կանանց և աղջիկների վրա, հատկապես դաշտանի շրջանում: Վտարումները նույնպես անհամաչափ մեծ ազդեցություն ունեն կանանց վրա, որոնք հաճախ հայտնվում են առաջնագծում՝ պաշտպանելով իրենց տները, և առնչվում են վտարման հետևանքների հետ:

51. Ընտանեկան բռնությունը կանանց անօթևանության հիմնական պատճառներից մեկն է: Հազվադեպ չեն դեպքերը, երբ բռնության ենթարկված կինը, այլ ոչ թե բռնարար տղամարդը, ստիպված է լքել տունը: Քանի որ կանայք խուսափում են փողոցում հայտնվելուց, հատկապես, երբ նրանք խնամում են երեխաներին, ավելի հավանական է, որ նրանք գտնվեն «թաքնված անօթևանների» շարքում և զրկվեն ավելի տեսանելի անօթևաններին ուղղված ծրագրերից օգտվելուց: Տանը բռնության ենթարկված կանանց համար այլընտրանքային բնակատեղի տարբերակների բացակայությունը վտանգի տակ է դնում նրանց անվտանգությունն ու կյանքը:

52. Բնակարանի իրավունքը պետք է ճանաչվի որպես կանանց իրական հավասարության իրավունքի անկյունաքար, որը պահանջում է, որ օրենքները, քաղաքականությունները և գործելակերպերը փոփոխվեն այնպես, որ դրանք չպահպանեն, այլ ավելի շուտ թեթևացնեն այն համակարգային թերությունները, որոնց հետ կանայք առնչվում են: Անհրաժեշտ է կանանց իրավագործել՝ ձևակերպելու և պահանջելու բնակարանի իրավունքն այնպիսի եղանակով, որը կանդրադառնա բնակարանի հարցում նրանց վատ փորձառությանը՝ իր բոլոր կողմերով:

Փախստականներ

Փախստականներն օգտվում են Ժնևի կոնվենցիայի և դրա արձանագրությունների պաշտպանությունից:

Ժնևի կոնվենցիայի 21-րդ հոդվածում ասվում է¹⁷⁶.

Բնակարանով ապահովելու կապակցությամբ Պայմանավորվող պետությունները, երբ հարցը կարգավորվում է օրենքներով կամ կանոնակարգերով կամ ենթակա է Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների կողմից վերահսկողության, իրենց տարածքում օրինական կարգով բնակվող փախստականներին հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք, ինչ նույն հանգամանքներում սովորաբար հատկացվում է օտարերկրացիներին:

Շարժական և անշարժ գույքի մասին կոնվենցիայի 13-րդ հոդվածում ասվում է.

Պայմանավորվող պետությունները շարժական և անշարժ գույքի ու դրան առնչվող այլ իրավունքների ձեռքբերման, ինչպես նաև վարձակալության և շարժական ու անշարժ գույքի հետ կապված այլ պայմանագրերի

176 Կոնվենցիա և Փախստականների կարգավիճակին վերաբերող 1951 թվականի արձանագրություն և 1967 թվականի Արձանագրություն: ՄԱԿ ԳԱ 1950 թվականի դեկտեմբերի 14-ի 429(V) բանաձև, հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.unhcr.org/refworld/docid/3b-00f08a27.html>: Տե՛ս նաև Եվրոպայի խորհուրդ, Գործողությունների ծրագիր Եվրոպայում միգրացիայի և ապաստանի համատեքստում խոցելի անձանց պաշտպանության վերաբերյալ (2021-2025թթ.), <https://edoc.coe.int/en/refugees/10241-council-of-europe-action-plan-on-protecting-vulnerable-persons-in-the-context-of-migration-and-asylum-in-europe-2021-2025.html>:

կապակցությամբ փախստականին հատկացնում են առավելագույն հնարավոր և ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք, քան նույն հանգամանքներում սովորաբար հատկացվում է օտարերկրացիներին:

ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի ուղենիշներում նաև նշվում է, որ փախստականների և ներքին տեղահանված անձանց համար, որոնք ապօրինաբար կամ կամայականորեն զրկվել են իրենց նախկին տներից, հողերից, գույքից կամ սովորական բնակության վայրերից, պետք է ապահովվի փախստականների և տեղահանված անձանց բնակարանների և գույքի վերադարձման սկզբունքներին համապատասխան վերադարձի իրավունք¹⁷⁷:

2015 թվականի հոկտեմբերի 5-ի Եվրոպական սոցիալական խարտիայի համաձայն¹⁷⁸ փախստականների իրավունքների վերաբերյալ ՍԻԵԿ-ի մեկնաբանության մեջ նշվում է, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է հետևյալը՝ համապատասխան կենսամակարդակի համընդհանուր իրավունքի վերաբերյալ.

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական խնամքը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար, և ունի ապահովության իրավունք գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում:

Մեկնաբանության մեջ մատնանշվում է, որ FEANTSA-ն ընդդեմ Նիդեռլանդների գործով¹⁷⁹ ՍԻԵԿ-ը որոշել է, որ ապաստարանի և այլ հրատապ սոցիալական աջակցության իրավունքը չի սահմանափակվում միայն խոցելի խմբերով, այլ տարածվում է անորոշ իրավիճակում գտնվող բոլոր անձանց վրա՝ նրանց մարդկային արժանապատվության և հիմնարար իրավունքների պաշտպանության սկզբունքին համաձայն: ՍԻԵԿ-ը գտնում է, որ որոշ սոցիալական իրավունքներ, որոնք անմիջականորեն կապված են կյանքի իրավունքի և մարդու արժանապատվության հետ, կազմում են այն իրավունքների «անքակտելի առանցքի» մաս, որոնք պաշտպանում են բոլոր մարդկանց արժանապատվությունը: Հետևաբար այդ իրավունքները պետք է երաշխավորվեն փախստականների համար և պետք է ապահովվեն բոլոր տեղահանված անձանց համար:

ՍԻԵԿ-ի մեկնաբանության մեջ վերստին նշվում է, որ փախստականները պետք է առավելագույնս օգտվեն խարտիայով երաշխավորված իրավունքներից (տե՛ս 4 Եզրակացություններ XVII-1 (2004), խարտիայի՝ ըստ անձանց շրջանակի վերաբերյալ մեկնաբանություն): Այն հիշեցնում է իր որոշումներն առ այն, որ խարտիայով նախատեսված որոշ իրավունքներ կիրառվում են փախստականների և այլ խոցելի խմբերի նկատմամբ, օրինակ՝ 17-րդ հոդված (Եզրակացություններ

177 Տե՛ս ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/Sub.2/2005/17, հավելված: Տե՛ս նաև Ներքին տեղահանման վերաբերյալ ուղեցուցային սկզբունքները, A/64/255, պարբ. 55, «խոցելի իրավիճակներում գտնվող միգրանտների մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներն ու ուղենիշները», սկզբունք 8, Գլոբալ պայմանագիր անվտանգ, կազմակերպված և կանոնավոր միգրացիայի վերաբերյալ, նպատակ 13, և գլոբալ պայմանագիր փախստականների վերաբերյալ, պարբ. 60:

178 Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/1680489511>:

179 Բողոք թիվ 86/2012, 2014 թվականի հուլիսի 2-ի ըստ էության որոշում:

2003թ., Բուլղարիա), 13-րդ հոդված (Եզրակացություններ 2013թ., Բոսնիա և Զերգեգովինա) և 31-րդ հոդված (FEANTSA-ն ընդդեմ Նիդեռլանդների, բողոք թիվ 86/2012, 2014 թվականի հուլիսի 2-ի ըստ էության որոշում): Այն հիշեցնում է, որ նախկինում ընդգծել է քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանվածությունը հարտիայի շրջանակներում (Եզրակացություններ 2013թ., քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների վերաբերյալ մեկնաբանություն): Կոմիտեն այդ հիմնավորմանն ավելացնում է հետևյալ դիտարկումները: Հավելվածը կազմում է հարտիայի անբաժանելի մասը, և հետևաբար դրա մեկնաբանությունը, հաշվի առնելով դրա առարկան և նպատակը, վստահված է Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեին: հարտիայի հավելվածում ասվում է. «2. Յուրաքանչյուր Կողմ «Փախստականների կարգավիճակի վերաբերյալ» 1951 թվականի հուլիսի 28-ին ժնկում ստորագրված Կոնվենցիայի և 1967 թվականի հունվարի 31-ի Արձանագրության համաձայն, իր տարածքում օրինականորեն բնակվող փախստականներին կտրամադրի հնարավորին չափ բարենպաստ վերաբերմունք և բոլոր դեպքերում ոչ պակաս բարենպաստ, քան սույն Կոնվենցիայի և այդ փախստականների նկատմամբ կիրառելի ցանկացած այլ գործող միջազգային փաստաթղթի համաձայն Կողմի ստանձնած պարտավորություններով նախատեսված վերաբերմունքն է:»¹⁸⁰:

Այս հարցերի վերաբերյալ լրացուցիչ մանրամասները նշված են վերևում՝ հարտիայի 16-րդ և 31-րդ հոդվածներին վերաբերող բաժնում:

Փախստականների և ապաստան հայցողների համար զուտ կացարանի տրամադրումը չպետք է մշտական բնույթ կրի, ընդ որում FEANTSA-ն ընդդեմ Ֆրանսիայի գործում ՍԻԵԿ-ն արձանագրել է.

Ինչ վերաբերում է ապաստարաններում կենցաղային պայմաններին, ապա Կոմիտեն կարծում է, որ դրանք պետք է լինեն այնպիսին, որ հնարավորություն ընձեռեն ապրելու մարդկային արժանապատվությանը համահունչ, և որ նման հաստատություններում գտնվող անձանց պետք է կանոնավոր աջակցություն ցուցաբերվի՝ օգնելու նրանց հասնել անկախության առավելագույն աստիճանի: Այն նաև կրկնում է, որ ժամանակավոր բնակատեղերի, նույնիսկ ընդունելի պայմաններով կացարանների տրամադրումը բավարար լուծում չէ, և նման պայմաններում ապրող մարդկանց համապատասխան բնակարան պետք է առաջարկվի ողջամիտ ժամկետում¹⁸¹:

ԵՄ-ում ընդունման պայմանների հրահանգը¹⁸² նպատակ ունի ապահովելու ընդունելության պայմանների ընդհանուր չափանիշները ԵՄ ողջ տարածքում:

Հրահանգը՝

- ապահովում է, որ դիմորդներին հասանելի լինի բնակարան, սնունդ, հագուստ, բուժօգնություն, կրթություն անչափահասների համար և աշխատանքի մատչելիություն (առավելագույնը 9 ամսվա ընթացքում).
- առանձնահատուկ ուշադրություն է դարձնում խոցելի անձանց, հատկապես առանց ուղեկցության անչափահասների և խոշտանգումների ենթարկված

180 2015 թվականի հոկտեմբերի 5-ի Եվրոպական սոցիալական խարտիայի համաձայն փախստականների իրավունքների վերաբերյալ ՍԻԵԿ-ի մեկնաբանություն, պարբ. 4-5:

181 Անօթևանների հետ աշխատող ազգային կազմակերպությունների եվրոպական ֆեդերացիան (FEANTSA) ընդդեմ Ֆրանսիայի, բողոք թիվ 39/2006, 2007 թվականի դեկտեմբերի 5-ի ըստ էության որոշում, §118:

182 Միջազգային պաշտպանության համար դիմորդների ընդունելության չափանիշները սահմանող՝ 2013 թվականի հունիսի 26-ի 2013/33/ԵՄ հրահանգ (փոփոխված):

անձանց: ԵՄ երկրները պետք է անհատական գնահատում անցկացնեն՝ բացահայտելու խոցելի անձանց ընդունելության հատուկ կարիքները և ապահովելու, որ խոցելի խմբերից ապաստան հայցողները կարողանան օգտվել բժշկական և հոգեբանական աջակցությունից:

- Ներառում է ապաստան հայցողների կալանավորման վերաբերյալ կանոններ և դիտարկում կալանքի այլընտրանքները հիմնարար իրավունքների լիարժեք պահպանմամբ:

Ընդունման պայմանների մասին հրահանգն ընդունելության նյութական պայմանների ապահովման առավել համարժեք եղանակն ընտրելիս դեռևս հայեցողության շրջանակ է թողնում անդամ պետություններին՝ Եվրոպական միության Հիմնարար իրավունքների խարտիային համապատասխան մարդու արժանապատվության պաշտպանությունն ապահովելու համար:

2016 թվականի սեպտեմբերին Ապաստանի աջակցության Եվրոպական գրասենյակը (EASO), որն այժմ վերանվանվել է ԵՄ ապաստանի գործակալություն, հրապարակել է Ընդունելության պայմանների վերաբերյալ EASO ուղեցույցը,¹⁸³ նկարագրելով հատուկ ընդհանուր չափանիշները, որոնք կիրառելի են ԵՄ բոլոր անդամ պետությունների ընդունելության ներպետական համակարգերի համար, և այն ցուցիչները, որոնցով պետք է գնահատվի այդ չափանիշներին համապատասխանությունը: Ուղեցույցի ընդհանուր նպատակն է աջակցել անդամ պետություններին Ընդունելության պայմանների վերաբերյալ հրահանգի հիմնական դրույթների իրականացման գործում՝ միաժամանակ ապահովելով համապատասխան կենսամակարդակ միջազգային պաշտպանության բոլոր դիմողների, այդ թվում՝ ընդունելության հատուկ կարիքներ ունեցողների համար: Առանց ուղեցույցի երեխաների վերաբերյալ ուղեցույցը բխում է երեխայի լավագույն շահի սկզբունքից:

Ընդունելության պայմանների վերաբերյալ հրահանգի (փոփոխված) 34-րդ հոդվածում կացարանների մատչելիության մասին ասվում է.

1. Միջազգային պաշտպանության շահառուները պետք է ունենան կացարանների մատչելիություն՝ առնվազն անդամ պետության տարածքում օրինական կերպով բնակվող՝ հիմնականում նույն հանգամանքներում գտնվող երրորդ երկրների քաղաքացիների համար համարժեք պայմաններով, որոնց անդամ պետությունն իր միջազգային պաշտպանությունն է տրամադրել:
2. Միջազգային պաշտպանության շահառուների տեղաբաշխման ներպետական գործելակերպերը պետք է ապահովեն միջազգային պաշտպանության շահառուների նկատմամբ հավասար վերաբերմունք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանից տարբեր վերաբերմունքն օբյեկտիվորեն հիմնավորված է: Նման ներպետական գործելակերպերը պետք է ապահովեն կացարանների մատչելիության հավասար հնարավորություններ¹⁸⁴:

183 https://euaa.europa.eu/sites/default/files/publications/EASO_Guidance_on_reception_conditions_-_operational_standards_and_indicators%5B3%5D.pdf

184 2024 թվականի ապրիլի 10-ին առաջին ընթերցմամբ ընդունված՝ Եվրոպական պառլամենտի դիրքորոշումը երրորդ երկրների քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց որպես միջազգային պաշտպանության շահառու որակելու չափանիշների, փախստականների կամ օժանդակ պաշտպանության իրավունք ունեցող անձանց միասնական կարգավիճակի և տրամադրվող պաշտպանության բովանդակության մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2024/... կանոնակարգի (ԵՄ) ընդունման նպատակով՝ փոփոխելով Խորհրդի 2003/109/ԵՀ հրահանգը և չեղյալ համարելով Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2011/95/ԵՄ հրահանգը (EP-PE_TCI-COD(2016)0223):

Անօթևանության վերաբերյալ ՍԻԵԿ-ի կողմից քննված գործի օրինակը դիտարկվում է Սոցիալական խարտիայի 31§2 հոդվածին վերաբերող բաժնում: Սակայն, շատ երկրներ սահմանում են նաև անօթևանության հաղթահարման ռազմավարություն: Այս համատեքստում օգտակար կարող է լինել անօթևանության առկա սահմանումների համապատասխանեցումը «Անօթևանության և բնակարանային բացառման եվրոպական տիպաբանության» (ETHOS) (կամ ETHOS light) սահմանումների հետ (տե՛ս Հավելվածը), որպեսզի հնարավոր լինի մարդկանց դասակարգել իրենց կենսապայմաններին համապատասխան և բավարարել անօթևան բնակչության տարբեր հատվածների կարիքները: Անօթևանությունը չպետք է դիտարկվի զուտ որպես թափառականություն կամ պարապություն և չպետք է պատժվի: Պետական ծախսումներին նպաստելու համար որոշ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել ներմուծել անօթևանության սահմանում ներառող օրենսդրություն:

Օրենսդրական կարգավորումից բացի, պլանավորման կարևոր ուղղություն է անօթևաններին աջակցություն ցուցաբերելու կարողություններով և ռեսուրսներով կազմակերպությունների զարգացումը: Այս համատեքստում FEANTSA-ի աջակցությունն անգնահատելի է:

FEANTSA-ն անօթևանների հետ աշխատող ազգային կազմակերպությունների եվրոպական ֆեդերացիան է՝ միակ եվրոպական ՀԿ-ն, որը կենտրոնացած է բացառապես անօթևանության դեմ պայքարի վրա: Կազմակերպության միակ նպատակը եվրոպայում անօթևանության վերջնական հաղթահարումն է: 1989 թվականին հիմնադրված FEANTSA-ն միավորում է ոչ առևտրային ծառայությունները, որոնք աջակցում են անօթևաններին եվրոպայում, և ընդգրկում է ավելի քան 130 անդամ կազմակերպություններ 29 երկրներից, այդ թվում՝ ԵՄ 22 անդամ պետություններից:

FEANTSA-ն աշխատում է անօթևանությանը վերջ տալու ուղղությամբ՝

- ներգրավելով մշտական երկխոսության մեջ եվրոպական կառույցների, ազգային և տարածքային կառավարությունների հետ՝ նպաստելու անօթևանության դեմ պայքարի արդյունավետ միջոցների մշակմանը և իրականացմանը,
- իրականացնելով հետազոտություններ և տվյալների հավաքագրում և տարածում՝ անօթևանության բնույթի, չափի, պատճառների և դրանց լուծումների ավելի լավ ընկալմանը նպաստելու համար,
- խթանելով և դյուրացնելով FEANTSA-ի անդամ կազմակերպությունների և համապատասխան շահագրգիռ կողմերի միջև տեղեկատվության, փորձի և լավ գործելակերպի փոխանակումը՝ անօթևանության դեմ պայքարի քաղաքականության և գործելակերպերի բարելավման նպատակով,
- բարձրացնելով հանրային իրազեկումն անօթևանության երևույթի համալիր բնույթի և անօթևանների խնդիրների բազմաշերտության վերաբերյալ¹⁸⁵:

Անօթևանության կանխարգելման և նվազեցման արդյունավետ ռազմավարություն մշակելու համար կառավարությունները պետք է ռեսուրսներ հատկացնեն տվյալների համակարգված հավաքագրման և մոնիթորինգի համար, որպեսզի կարողանան հիմնավորել հասարակության մեջ անօթևանության դեմ համարժեք արձագանքման միջոցների նախատեսումը:

185 <https://www.feantsa.org/en/about-us/what-is-feantsa>

Երկարաժամկետ անվտանգ և մատչելի բնակարանային ապահովման մատչելիությունն ընդունող երկրում փախստականների ինտեգրման հիմնական տարրն է: ՄԱԿ ՓԳՀ-ն իր ինտեգրման ձեռնարկում նշում է.

Բնակության անվտանգությունը և ընդունող երկրում իրավական հավասարությունը վերաբնակեցման վաղ շրջանում հատկապես կարևոր են: Գիտակցելով դա՝ երկրների մեծ մասը վերաբնակեցված փախստականներին տալիս է մշտական բնակության իրավունք և նույն իրավունքների ու պարտականությունների մեծ մասը, ինչ իր երկրի քաղաքացիներին:

Այս ոլորտում փախստականների խնդիրներն ու խոչընդոտները ներառում են մատչելիության խնդիրները, որոնք առաջանում են վարձակալության կամ գնման համար մատչելի բնակարանների պակասի պատճառով, ընդունող համայնքի, մասնավորապես՝ տանտերերի կողմից խտրականությունը, բաշխման սխեմաները, որոնք բացառում են ընտրության հնարավորությունը կամ նախատեսում են փախստականների տեղավորում այլ հաստատություններից հեռու գտնվող բնակարաններում, ինչպիսիք են կրթական հաստատությունները, աշխատանքի և խնամքի հաստատությունները, հատուկ կարիքների անտեսումը, ինչպիսիք են կանանց կարիքները և այլն¹⁸⁶: Փախստականների բնակարանային ապահովման գործընթացը պետք է հաշվի առնի փախստականների համայնքի որոշակի խմբերի կարիքները, ինչպիսիք են կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցները, անաշխատունակները, խնամողները և հոգեկան տրավմայի ենթարկված անձինք: Շատ դեպքերում, համապատասխան ստանդարտի բնակարանով ապահովումը ներառում է նաև օժանդակության ծառայություններ:

ՄԱԿ ՓԳՀ-ն՝ Փախստականների հարցերով գործակալությունը, հրապարակել է «Եվրոպայում միգրանտների և փախստականների բնակարանային ապահովման արդյունավետ գործելակերպերը»¹⁸⁷ փաստաթուղթը՝ ներկայացնելով արդյունավետ գործելակերպի որոշ մոդելներ: «Բնակարաններ միգրանտների և փախստականների համար ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում. մարտահրավերներն ու գործելակերպերը» ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույցը (2021) նույնպես ներկայացնում է փախստականներին բնակարաններով ապահովման օրինակներ¹⁸⁸:

Փախստականների համար բնակարանային ապահովման սխեմաների մասով կարևոր նկատառումներ են համապատասխանելիության չափորոշիչները, ինչպես օրինակ՝ արդյոք կատարվել է միջոցների կամ եկամուտների ստուգում, արդյոք առկա է համապատասխանելիության և բաշխման մասին որոշումների թափանցիկություն, արդյոք սխեմաները հավասարապես մատչելի կլինեն բոլոր փախստականների համար, ինչպիսիք են խնամողները, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցները, գործազուրկներն ու ցածր եկամուտ ունեցողները, ինչպես նաև տրավմայի ենթարկվածները: Վարկունակության չափորոշիչը կարող է առաջացնել անուղղակի խտրականություն այն անձանց նկատմամբ,

186 Տե՛ս Փախստականների և վտարանդիների հարցերով եվրոպական խորհրդի (ECRE) արդյունավետ գործելակերպի ուղեցույցը Եվրոպայում փախստականների համար՝ https://migrant-integration.ec.europa.eu/sites/default/files/2009-08/docl_9268_71079461.pdf:

187 <https://www.unhcr.org/bg/wp-content/uploads/sites/18/2020/10/Good-practices-housing-FINAL-EN.pdf>

188 https://unece.org/sites/default/files/2021-02/Housing%20for%20Migrants_compressed_0.pdf

որոնք դուրս են աշխատաշուկայից: Մատչելի բնակարան վարձակալելու հնարավորությունը, որը հասանելի է բոլոր փախստականներին, ընտրություն կտա այն անձանց, որոնք չեն կարող հաղթահարել տուն գնելու կամ կառուցելու հետ կապված բարդությունները: Տրամադրված բնակարանի տեղադրությունը որոշիչ գործոն է փախստականների ինտեգրման հարցում, օրինակ՝ հեռավորությունը դպրոցներից, զբաղվածության, սոցիալական աջակցության կենտրոններից և այլ հաստատություններից, և ծայրահեղ կարևորության ծառայություններից (տե՛ս ներքևում՝ բնակարանի տեղադրության գնահատման վերաբերյալ աղյուսակը, էջ 56): Լավագույն տարբերակի դեպքում, այդ բնակարանը պետք է կառուցվի համընդհանուր դիզայնի սկզբունքներին և ամբողջ կյանքի համար հարմարեցված չափանիշներին համապատասխան: Անհրաժեշտ է հանրային վերահսկողության միջոցով ապահովել շինարարության և կայունության (60 տարի) նվազագույն չափանիշներ:

Փախստականներին բնակարանային ապահովման վերջին մոդելներից մեկը վերաբերում է մոդուլային (գործարանային) համակարգերի միջոցով բնակարանների արագ կառուցմանը: Այն իրականացվել է Իռլանդիայում՝ արձագանքելով ուկրաինական ճգնաժամին և մարդկանց ներհոսքին՝ ԵՄ ժամանակավոր պաշտպանության հրահանգի համաձայն: Այն նպատակ ունի կարճաժամկետ կացարաններ ապահովելու 2 000 մարդու համար: Արագ կառուցվող տունը բարձրորակ բնակարան է, որը հիմնականում կառուցվում է նախատեսված վայրի տարածքից դուրս, այնուհետև առաքվում և ավարտական տեսքի է բերվում տեղում: Դա նշանակում է, որ այն կարող է տեղադրվել ավելի արագ, քան ստանդարտ կացարանը, և այդ տարածքում շինարարության ավելի քիչ ընդհատում կլինի: Տներն ունեն 60 տարվա կառուցվածքային ծառայության ժամկետ, էներգաարդյունավետության A2 մակարդակ, համապատասխանում են շինարարական նորմատիվներին և ամբողջությամբ վերջնամշակված են կրկնակի ապակեպատ դռներով և պատուհաններով: Յուրաքանչյուր տեղանք կունենա ճանապարհներ, հետիոտնային արահետներ, փողոցների լուսավորություն, համայնքային հարմարություններ՝ ներառյալ խաղահրապարակ և կանաչ տարածքներ, որոնք լիովին համահունչ են տեղական ինքնակառավարման մարմինների պլանավորման ուղեցույցին¹⁸⁹: Արագ կառուցվող տները կլինեն էներգաարդյունավետ և դիմացկուն, իսկ տեղանքները կնախագծվեն այնպես, որ բարելավվի տեղական տարածքը: Յուրաքանչյուր սխեմայի համար իրականացվում է շրջակա միջավայրի գնահատում: Տեղական ինքնակառավարման յուրաքանչյուր մարմին ունի ղեկավար կազմից հատուկ այդ նպատակով նշանակված անդամ, որի պարտականությունները ներառում են ուկրաինացի փախստականների համար բնակարանային ապահովման այս տարբերակների մշակումը: Մանրամասները հասանելի են Իռլանդիայի կառավարության կայքում¹⁹⁰:

189 Կառուցապատման ժամանակակից մեթոդներ (ԿԺՄ), Արագ կառուցվող մոդուլային տների ծրագիր, արեգենտացիա Բնակարանաշինության, տեղական կառավարման և մշակութային ժառանգության հարցերով (ՀԱԳ) կոմիտեին, 2023 թվականի մայիսի 2, https://data.oireachtas.ie/ie/oireachtas/committee/dail/33/joint_committee_on_housing_local_government_and_heritage/submissions/2023/2023-05-02_opening-statement-ciara-o-connor-state-principal-architect-and-commissioner-office-of-public-works-opw_en.pdf:

190 <https://www.gov.ie/en/publication/ef882-rapid-build-housing/>

Նկար 2. Բարձրորակ, արագ կառուցվող տան ներքին դասավորություն

Բարձրորակ, արագ կառուցվող տներն ամբողջությամբ արտադրվում են գործարանային պայմաններում և առաքվում շինհրապարակ



Օրինակելի նախատիպ

Միասնական չափանիշներ, որոնց պետք է հետևեն բոլոր արտադրողները: Ապահովվում է հավասար պայմաններ մրցույթների անցկացման համար:

Ֆինսված դիզայն՝ արտադրողների համար հստակություն ապահովելու և առաքման արագությանը նպաստելու համար:

Բազմոցը լրացուցիչ մահճակալի վերածելու հնարավորություն՝ մինչև 6 մարդ տեղավորելու համար:



Մեկտեղանոց մոդուլ

Նպատակը՝ սեփական մուտքի հասանելիություն, առանձին բնակարաններ՝ 4 հոգուց բաղկացած ընտանիքների համար (45մ2/484քառակուսի ֆուտ)

Նկար 3. Երկհարկանի արագ կառուցվող տան օրինակ



«ԵՄ-ի համար քաղաքային օրակարգ. բնակարանային ապահովման գծով գործընկերության 2018 թվականի գործողությունների ծրագրում» ներկայացված են բնակարանային ապահովման կարիքների բավարարմանն ուղղված սոցիալական և մատչելի բնակարանային լուծումների օրինակներ 30 ծրագրերում¹⁹¹: Սոցիալական բնակարանային ապահովման Իռլանդիայի խորհուրդը ներկայացնում է շուրջ 270 շահույթ չհետապնդող սոցիալական բնակարան տրամադրողների, որոնք լուծում են փախստականների, կանանց, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների բնակարանային կարիքները, խորհրդատվություն և օգնություն են առաջարկում բոլոր նրանց, ովքեր ցանկանում են իրականացնել ոչ առևտրային սոցիալական բնակարանային ծրագրեր¹⁹²:

191 <https://www.google.com/maps/d/viewer?mid=1RcxrQ2QqfgUAU9Pw3EkuIOYDyJw&hl=en&ll=-3.81666561775622e-14%2C-73.47039779708962&z=1>

192 <https://icsh.ie/icsh-members/>

7. Սոցիալական բնակարանային ապահովման նախաձեռնությունների համատեքստում զբաղվածության հնարավորությունների, կրթության, առողջապահության և սոցիալական ենթակառուցվածքների վերաբերյալ մասնագիտական գիտելիքների և պատկերացումների տրամադրում

Սոցիալական բնակարանները բազմաթիվ ուղղակի օգուտներ են տալիս դրանց բնակիչներին՝ անվտանգության, սոցիալական ներառման և առողջության ու կյանքի որակի բարձրացման առումով: Սոցիալական բնակարանների տրամադրումն արդեն իսկ ինքնին կարող է ուղղակիորեն նախատեսել աշխատանքի, կրթության, առողջապահության և սոցիալական ծառայությունների տրամադրում կամ համակարգում:

Հանրային, կոոպերատիվ և սոցիալական բնակարաններում ներդրումները զգալի արդյունք են ապահովում հասարակության համար: Սոցիալական բնակարանային ապահովման սոցիալական և տնտեսական օգուտներից են տնային տնտեսությունների գնողունակության ուղղակի աճը, քանի որ դրանք թույլ են տալիս խնայել բնակարանի հետ կապված ծախսերը, աղքատության հաղթահարումը, ավելի մատչելի գներով բնակատեղի տրամադրումը ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններին և ավելի լավ առողջապահական արդյունքների ապահովումը¹⁹³:

193 Housing Europe (2022) «Սոցիալական և մատչելի բնակարան. սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատում», հատոր 6 «Բնակարանային պայմանները ԵՄ-ում 2020թ.-ից հետո» շարքից, <https://www.housingeurope.eu/resource-1731/social-and-affordable-housing-measuring-the-socio-economic-impact>:

Նկար 4. Բնակարանային ապահովման սոցիալական և տնտեսական ցուցիչների համապատասխանեցում ազգային կատարողական ցուցիչներին¹⁹⁴




Housing First (առաջին հերթին բնակարանային ապահովումը)

Խոցելի և սոցիալապես բացառված անձանց բնակատեղ տրամադրելիս հաճախ անհրաժեշտ է բնակարանային ապահովում սոցիալական, անձնական կամ այլ օժանդակությամբ: Բնակարանով ապահովման այդ ընդհանուր մոտեցման մոդելներից մեկը «Housing First»-ն է, որը թեև կենտրոնացած է անօթևան մարդկանց վրա, սակայն նաև պատկերացում է ստեղծում այն մասին, թե ինչպես սոցիալական բնակարանները կարող են բազմաթիվ առումներով բարելավել մարդկանց կյանքը: «Housing First»-ը որպես ծառայության մոդել մշակվել է դոկտոր Սեմ Ֆեմբերիսի կողմից (Pathways to Housing՝ «Բնակարանային ապահովմանը տանող ուղիները») ԱՄՆ-ում՝ 1990-ականների սկզբին: 2000-ականներից Ֆինլանդիայի կառավարությունը ֆինանսավորել է անօթևանության նվազեցմանն ու վերացմանն ուղղված ծրագրերը՝ որդեգրելով «Housing First» սկզբունքը որպես գործող մոդել, գաղափարախոսություն և մտածելակերպ: Ի տարբերություն այլ աջակցվող բնակարանային մոդելների, «Housing First»-ում անհատներն ստիպված չեն ապացուցել, որ իրենք «պատրաստ

¹⁹⁴ Մեծ Բրիտանիայի բնակարանային ապահովման ապացուցումների համագործակցային կենտրոն (CaCHE) և Բնակարանային ասոցիացիաների բարեգործական հիմնադրամ (HACT) (2020): «Սոցիալական բնակարանների ազդեցությունը. տնտեսական, սոցիալական, առողջապահական հարցեր և բարեկեցություն», <https://hact.org.uk/sites/default/files/uploads/The%20Impact%20of%20Social%20Housing%20Report.pdf>:

են» առանձին բնակատեղ ունենալուն, կամ, որպես նախապայման, մասնակցել տարբեր բնակեցման և բուժման ծրագրերում: Վարձակալության պայմանագրի պայմաններին հետևելուց բացի նրանց վրա որևէ այլ պայման դրված չէ, ընդ որում «Housing First»-ը նախատեսված է տրամադրելու երկարաժամկետ կամ անժամկետ աջակցություն՝ նրանց կարիքների բավարարման համար:

Նկար 5. «Housing First»-ն առաջարկում է վարձակալության լիարժեք իրավունքներ՝ աջակցությամբ



«Housing First»-ի հիմնական սկզբունքներն են.

- **Բնակարանային ապահովումը մարդու իրավունք է.** բնակարանը տրամադրվում է առաջին, այլ ոչ թե վերջին հերթին, առանց որևէ ակնկալիքի, որ անօթևան մարդը, մինչև նրան տուն տրամադրելը, դրսևորի որոշակի վարքագիծ, հետևի բուժմանը, գերծ մնա թմրամիջոցներից կամ ալկոհոլից: «Housing First» սկզբունքով չի ակնկալվում, որ անօթևան մարդիկ վաստակեն իրենց բնակարան ունենալու իրավունքը կամ բնակարանում ապրելու իրավունքը:
- **Ընտրություն և վերահսկում ծառայությունից օգտվողների համար.** ծառայությունից օգտվող մարդկանց պետք է լսել և հարգել նրանց կարծիքը: «Housing First»-ի շահառուները կարող են իրական ընտրություն կատարել իրենց կյանքի և ստացած աջակցության վերաբերյալ:
- **Հեռացում բնակարանից և բուժում.** բնակարան ստանալու հնարավորությունը («Housing First» ծառայության կողմից տուն առաջարկելը) պայմանավորված չէ վարքագծի փոփոխությամբ կամ բուժման ընդունմամբ: «Housing First»-ի միջոցով տրամադրված բնակարանում ապրելն անձից չի պահանջում վարքագծի փոփոխություն կամ բուժման ընդունում: Երբ անձին վտարում են բնակատեղից կամ նա ինքն է հեռանում, աջակցությունը շարունակվում է:
- **Վերականգնողական կողմնորոշում.** ծառայությունը կենտրոնանում է անհատի ընդհանուր բարեկեցության վրա: Դա ներառում է նրա ֆիզիկական և հոգեկան առողջությունը, սոցիալական աջակցության

մակարդակը (գուգընկերոջ, ընտանիքի կամ ընկերների կողմից) և սոցիալական ինտեգրման մակարդակը, այսինքն՝ համայնքի մաս լինելը և հասարակական կյանքում ակտիվ մասնակցություն ունենալը:

- **Վնասի նվազեցում.** սկզբունք, որը հիմնված է այն գաղափարի վրա, որ թմրամիջոցների և ակոհոլի օգտագործման դադարեցումը կարող է բարդ գործընթաց լինել, և ճանաչում է, որ նախատեսված ծառայություններից օգտվելու համար վնասակար սովորություններից հրաժարվելը կամ օրգանիզմի մաքրման ծրագրերում ընդգրկվելն անօթևանների պարագայում այնքան էլ արդյունավետ չէ:
- **Ակտիվ ներգրավվածություն առանց հարկադրանքի.** կամավոր ներգրավվածության սկզբունքը «Housing First»-ի ծառայությունների շահառուների նկատմամբ կիրառվում է դրական ձևով՝ խրախուսելով նրանց հավատալ, որ վերականգնումը հնարավոր է:
- **Անձնակենտրոն պլանավորում.** նախատեսում է աջակցության և բուժման կազմակերպում անհատի համար և նրա կարիքների բավարարման հարցում: «Housing First»-ը հարմարեցվում է ծառայությունից օգտվողներին և կազմակերպվում նրանց շուրջ, այլ ոչ թե ակնկալվում է, որ նրանք հարմարվեն «Housing First» ծառայությանը:
- **Ճկուն աջակցություն այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է.** այս սկզբունքը «Housing First»-ը կտրուկ հակադրում է անօթևանների աջակցության այլ ընդունված ձևերին: «Housing First» ծրագրի իրականացնողները պարտավորվում են երկարաժամկետ աջակցություն տրամադրել՝ առանց վերջնաժամկետի սահմանման: Վերականգնումը ժամանակ է պահանջում և այդ ժամկետը տարբեր է՝ ըստ անհատական կարիքների, բնութագրերի և փորձի¹⁹⁵:

«Housing First»-ն ապացուցել է իր արդյունավետությունը՝ աջակցելու երկարատև կամ կրկնվող անօթևանության մեջ գտնվող անձանց, որոնք հաճախ զրկված են սոցիալական օգնությունից և համայնքային կապերից¹⁹⁶: Այս ապացուցված «Housing First» սկզբունքների կիրառումը բնակարանային ապահովման և անօթևանության ամբողջ համակարգում, բոլոր նրանց համար, ովքեր անօթևան են կամ անօթևան դառնալու վտանգի տակ են, մաս է կազմում այն ամենի, ինչ մենք անվանում ենք «համակարգերի փոփոխություն»: Համակարգերի փոփոխության նպատակն է շեշտադրումը (ջանքի, էներգիայի, քաղաքականության և ֆինանսական աջակցության առումով) արտակարգ իրավիճակներին արձագանքելուց ուղղել դեպի անօթևանության կանխումը, ինչպես նաև ապահովումը, որ առկա լինեն բավարար որակի և մատչելի բնակատեղեր և աջակցություն այդ բնակատեղերում ապրող մարդկանց համար:

Ինչ վերաբերում է ծախսերին, ապա «Housing First»-ի չափորոշիչներին

195 <https://housingfirsteurope.eu/what-is-hf/>

196 <https://housingfirsteurope.eu/what-is-hf/a-beginners-guide-to-housing-first/>, *Քո սեփական տունը* [A Home of Your Own], Y-Foundation, 2017 - <https://ysaatio.fi/en/housing-first-finland/a-home-of-your-own-handbook>, Kaakinen, J., Turunen, S., *Ֆիննական, բայց ոչ դեռ ավարտված* [Finnish but not yet Finished]՝ «Housing First»-ի հաջողություններն ու մարտահրավերները Ֆինլանդիայում, Անօթևանության եվրոպական ամսագիր, հատոր 15, թիվ 3, 2021թ.՝ https://www.feantsaresearch.org/public/user/Observatory/2021/EJH_15-3/Final/EJH_15-3_A2.pdf, https://housingfirsteurope.eu/assets/files/2022/02/Systems_Perspective_Policy_and_Practice_Guide.pdf. «Ինչ է Housing First-ը». տեսաշար՝ <https://housingfirsteurope.eu/guide/>:

համապատասխանող անօթևան մարդիկ եվրոպական երկրների մեծ մասում ունեն նաև սոցիալական ապահովության և բնակարանային նպաստներ ստանալու իրավունք: Հաճախ ֆինանսավորումը համակցվում է աջակցության տարբեր հոսքերի հետ, օրինակ՝ բնակարանային նպաստների, բուժման համար աջակցության և այլն: Նպաստները կարող են օգտագործվել վարձակալության և աջակցության ծախսերը ծածկելու համար: «Housing First»-ի որոշ ծրագրեր ֆինանսավորվում են հիմնադրամների կողմից և այլ նախագծերի համար նախատեսված ֆինանսավորման միջոցներով, ինչը թույլ է տալիս աշխատել այն մարդկանց հետ, որոնք չեն կարող օգտվել պետական միջոցներից¹⁹⁷:

Աջակցվող բնակարանային ապահովում

«Housing First» ծրագրի առանձնահատկություններից մեկը բնակարանային ապահովման ինտեգրումն է մի շարք անհատական, սոցիալական և այլ աջակցության ծառայությունների հետ: Աջակցություն տրամադրողը կարող է ուղղակիորեն առաջարկել այդ աջակցությունը կամ կազմակերպել այն այլ գործակալությունների միջոցով՝ մինևույն ժամանակ համակարգելով այդ աջակցությունը և ապահովելով դրա տրամադրումը: «Housing First»-ը հատուկ հարմարեցված է այն անհատների կարիքներին, որոնք զգալի օգնության կարիք ունեն անօթևանությունից հեռանալու համար: Այս մոտեցումը հատկապես շահավետ է տարբեր խմբերի, այդ թվում՝ անօթևանների և ծանր հոգեկան հիվանդություններ կամ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց, թմրամիջոցներ օգտագործող, ֆիզիկական առողջության հետ կապված խնդիրների, հաշմանդամության կամ քրոնիկ հիվանդությունների հետ բախվող անօթևանների համար:

Բարձր որակի աջակցվող բնակարանները կարող են նախագծվել և տրամադրվել՝ ապահովելու, որ վարձակալները կարողանան օգտվել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված մարդու իրավունքներից, մասնավորապես՝ 19-րդ հոդվածում ամրագրված անկախ կյանքի իրավունքից: Արդյունքում աջակցվող բնակարանով ապահովումը թույլ կտա, որ հաշմանդամություն ունեցող անձինք օգտվեն՝

1. համապատասխան որակի կենսամակարդակի և սոցիալական պաշտպանության իրավունքից,
2. ֆիզիկական և հոգեկան առողջության ամենաբարձր հասանելի չափանիշներից օգտվելու իրավունքից,
3. գործունակության իրականացման իրավունքից և անձնական ազատության և անձի անվտանգության իրավունքից,
4. անկախ ապրելու և համայնքում ընդգրկվելու իրավունքից,
5. աջակցվող բնակարանային ապահովումը կարող է համապատասխանեցվել ապահիստիտուցիոնալացման քաղաքականությանը:

Անշուշտ, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, ինչպես նաև Եվրոպական միության կանոնակարգերն ու քաղաքականությունները և ներպետական մակարդակում դրանց իրականացումը նպաստում են ապահիստիտուցիոնալացմանը, ապահովելու համար, որ

197 <https://housingfirsteurope.eu/what-is-hf/>:

սոցիալական կամ հոգեկան առողջության աջակցության կարիք ունեցող յուրաքանչյուր անձի հասանելի լինեն ծառայությունները համայնքում, այլ ոչ թե ինստիտուցիոնալ միջավայրում: Ապահովել ինստիտուցիոնալացման գործընթացը կարող է ընդգրկել այնպիսի կառույցներ, ինչպիսիք են անօթևանների ապաստարանները, ժամանակավոր կացարանները, երիտասարդների կամ պետության պաշտպանության տակ գտնվող երեխաների համար ստեղծված հաստատությունները և այլն:

Ենթակառուցվածք և բնակարանային ապահովում (տե՛ս նաև ՆՈՐ Բաժին 10-ը՝ ստորև)

Կայուն բնակարանային ապահովման զարգացումը ներկայումս անքակտելիորեն կապված է ենթակառուցվածքների, պլանավորման, զբաղվածության հնարավորությունների, տրանսպորտի, կրթության և համայնքային կառույցների զարգացման հետ: Լավ որակի կայուն բնակարանային ծրագրի հաջող նախագծումը կախված է մի շարք գործոնների հավասարակշռումից: Այնպիսի խնդիրները, ինչպիսիք են մատչելիությունը, անվտանգությունը, ապահովությունը, մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, համայնքային փոխգործակցությունը, պատշաճ ծառայությունների հասանելիությունը և բավարար տարածքի տրամադրումը, պետք է պատշաճ ձևով հաշվի առնվեն:

Լավ որակի կայուն բնակարանային ապահովման զարգացումը պետք է լինի.¹⁹⁸

1. Սոցիալապես և էկոլոգիապես ընդունելի

Բնակատեղի տեսակը, աջակցության ծառայությունները և տրամադրվող հարմարությունները պետք է համապատասխանեն բնկատեղում տեղավորված մարդկանց կարիքներին: Բնակատեղի տեսակի, չափի և բնակվելու իրավունքի ձևի համակցությունը պետք է նպաստի տարածքի սոցիալական, բնապահպանական և տնտեսական կայունությանն ուղղված քաղաքականության նպատակներին և խթանի խաղային և հանգստի ինտեգրված տարածքների զարգացումը:

2. ճարտարապետական տեսանկյունից տեղին

Սխեման պետք է ապահովի դրական կենցաղային միջավայր, որն էսթետիկ առումով հաճելի է և մասշտաբի առումով՝ մարդկային: Սխեմայի նախագիծը պետք է հաշվի առնի ծրագրի համատեքստը և համապատասխան կերպով արձագանքի դրան, որպեսզի կառուցապատումը նպաստի տարածքի զարգացմանը և հաշվի առնի մշակութային ժառանգությունը:

3. Հասանելի և հարմարեցվող

Անհրաժեշտ է ապահովել մուտքի և տեղաշարժի դյուրինությունը բոլոր բնակիչների համար՝ ներառյալ սահմանափակ շարժունակություն ունեցող մարդկանց, որպեսզի նրանք կարողանան հնարավորինս ազատ տեղաշարժվել համալիրի ներսում և շրջակայքում, մուտք գործել շենքեր և օգտվել առկա ծառայություններից և հարմարություններից:

198 Իռլանդիայի կառավարություն (2007), «Որակյալ բնակարաններ կայուն համայնքների համար»՝ <https://www.opr.ie/wp-content/uploads/2019/08/2007-Quality-Hsing-for-Sustainable-Communities-1.pdf>:

Բնակարանները պետք է նախատեսեն բնակիչների կյանքի ընթացքում նրանց փոփոխվող կարիքներին հարմարեցվելու հնարավորություն:

4. Ապահով, անվտանգ և առողջության համար անվնաս

Բնակատեղը պետք է լինի ապրելու համար ապահով և առողջության համար անվնաս վայր: Հետիոտները և հեծանվորդները պետք է կարողանան տեղաշարժվել տարածքի ներսում և շրջակայքում հեշտությամբ և ապահով կերպով: Տրանսպորտային միջոցների շրջանառության ապահովումը՝ ներառյալ սպասարկող ավտոմեքենաների համար մուտք ու ելքի ապահովումը, չպետք է խանգարեն այդ նպատակներին:

5. Մատչելի

Բնակարանի նախագիծը պետք է լինի այնպիսին, որ այն հնարավոր լինի ողջամիտ ծախսերով կառուցել, կառավարել և պահպանել՝ հաշվի առնելով կառուցապատման բնույթը:

6. Ամուր

Պետք է օգտագործվեն լավագույն հասանելի շինարարական տեխնոլոգիաները, ընդ որում՝ հիմնական կառուցվածքային տարրերը պետք է ունենան մոտավորապես վաթսուն տարվա ծառայության ժամկետ՝ առանց վթարային վերանորոգման աշխատանքների կամ փոխարինման աշխատանքների անհրաժեշտության:

7. Ռեսուրսարդյունավետ

Անհրաժեշտ է արդյունավետ օգտագործել հողը, ենթակառուցվածքները և էներգառեսուրսները: Տեղադրությունը տրանսպորտի, ծառայությունների և հարմարությունների տեսանկյունից պետք է լինի հարմար: Բնակատեղերի նախագծումը և տեղորոշումը պետք է հաշվի առնեն տեղանքի տեղագրությունը, որպեսզի վերահսկվի քամու հոսքերի բացասական ազդեցությունը և օպտիմալացվեն արևի լույսից, ցերեկային լույսից և արևային ճառագայթներից բխող առավելությունները: Օպտիմալ ձևով պետք է օգտագործել էներգիայի վերականգնվող աղբյուրները՝ նվազագույնի հասցնելով սակավ բնական ռեսուրսների սպառումը բնակարանների կառուցման, պահպանման և կառավարման գործում:

Քաղաքային բնակավայրերում բնակարանների կայուն ապահովումը նախատեսում է նաև.

- Կառուցապատման կոնսուլիդացում այն վայրերում, որտեղ հնարավոր է ինտեգրել զբաղվածության հնարավորությունները, համայնքային ծառայությունները, մանրածախ առևտուրը և հանրային տրանսպորտը:
- Բազմաֆունկցիոնալ և լավ նախագծված բարձր խտությամբ կառուցապատում, հատկապես քաղաքային կենտրոնների և հանրային տրանսպորտի հանգույցների մոտ, ինչպիսիք են երկաթուղային կայարանները:
- Հողատարածքի արդյունավետ օգտագործում միավորելով գոյություն ունեցող բնակավայրերը, հատուկ ուշադրություն դարձնելով կենտրոնական քաղաքային տարածքներում չօգտագործված հողերի

և շենքերի վերաօգտագործման ներուժին, այլ ոչ թե կանաչապատ տարածքների հաշվին կառուցապատմանը:

- Ապահովել, որ գյուղերի և փոքր քաղաքների ծայրամասերում նոր բնակարանային համալիրներն ունենան այնպիսի դիզայն, բնույթ, ծավալվածություն և դասավորություն, որը համահունչ է համապատասխան փուլում գյուղի կամ փոքր քաղաքի կառուցապատման բնույթին և ձևին:
- Կառուցապատված տարածքների լայնածավալ ընդլայնման առաջարկներ մշակելիս խուսափել էկոլոգիապես խոցելի տարածքների կառուցապատումից:
- Հատուկ ուշադրություն դարձնել բարձրորակ կենսամիջավայրի ստեղծմանը՝ քաղաքային դիզայնի մանրամասների վրա կենտրոնանալու, այդ թվում՝ երեխաների, տարեցների և հատուկ կարիքներով բնակչության համար հարմարությունների ինտեգրման միջոցով:

Կառուցապատվող տարածքի պիտանիությունը կարող է գնահատվել ըստ հետևյալ աղյուսակի:

Նկար 6. Նկատառումներ կառուցապատվող տարածքի գնահատման վերաբերյալ¹⁹⁹

Գնահատման նկատառումներ	
Ակտիվների թեստ	Կա՞ն արդյոք համյանքային գործող ռեսուրսներ, ինչպիսիք են դպրոցները և այլն, որոնք ունեն պահեստային կարողություն:
Կարողականության թեստ	Արդյո՞ք շրջակա միջավայրի պայմաններն իզոթու են կրել զարգացման ազդեցությունը, մասնավորապես ջրահեռացման և այլ հարցերում:
Տրանսպորտի թեստ	Արդյոք կա՞ն ներուժ ուժեղացնելու հանրային տրանսպորտի օգտագործումը, քայլելու և հեծանվավարելու հնարավորությունները:
Տնտեսական զարգացման թեստ	Արդյոք կա՞ն ներուժ ապահովելու բնակատեղերի գտնվելու և զբաղվածության վայրի ինտեգրումն ապահովելու համար:
Բնութագրի թեստ	Արդյո՞ք առաջարկը կուժեղացնի վայրի և բնույթի ընկալումը
Համայնքի թեստ	Արդյո՞ք առաջարկը կամրապնդի տեղական համայնքի և ծառայությունների, որոնք կարող են մատուցվել, ամբողջականությունն ու կենսունակությունը:
Ինտեգրման թեստ	Արդյո՞ք առաջարկը կօգնի հասարակության բոլոր հատվածների բնակարանային կարիքների բավարարման համալիր մոտեցման ներդրմանը:

199 Իռլանդիայի կառավարություն (2002), Իռլանդիայի ազգային տարածքային ռազմավարություն 2002-2020թթ. «Ժողովուրդ, վայրեր, ներուժ» [National Spatial Strategy for Ireland 2002-2020 – People. Places, Potential], էջ 103:

8. Սոցիալական շահույթ չհետապնդող բնակարանաշինության հայեցակարգը և նպատակները

ՏՀՀ անդամ և ոչ անդամ ԵՄ երկրներում վարձակալված սոցիալական բնակարանների թիվը գերազանցում է 28 միլիոնը և, միջին հաշվով, ընդհանուր բնակարանային ֆոնդի մոտ 6%-ը: Երկրների միջև զգալի տարբերություններ կան սոցիալական բնակարաններ տրամադրողի սահմանման, չափի, շրջանակի, թիրախային բնակչության և տեսակի միջև²⁰⁰: Սովորաբար դրանք շուկայականից ցածր գներով վարձակալված բնակատեղեր են, որոնք ընտրվում և հատկացվում են որոշակի կանոնների համաձայն, օրինակ՝ ըստ բացահայտված կարիքների կամ հերթացուցակի: Դրանք կարող են անվանվել սոցիալական կամ սուբսիդավորվող բնակարաններ (Ավստրալիա, Կանադա, Գերմանիա և Միացյալ Թագավորություն), հանրային բնակարաններ (Ավստրալիա, Միացյալ Նահանգներ), ավագանու բնակարաններ (Միացյալ Թագավորություն) կամ ընդհանուր բնակարաններ (Դանիա) և այլն:

Սոցիալական բնակարանների մեծ մասը (բայց ոչ բոլորը) ուղղված են ցածր եկամուտ ունեցող և խոցելի տնային տնտեսություններին: Շատ երկրներում սոցիալական բնակարանները նախատեսված են այն տնային տնտեսությունների համար, որոնք չեն կարող բնակարաններ գնել շուկայական գներով, թեև պատմականորեն միջտ չէ, որ այդպես է եղել, քանի որ սոցիալական բնակարանների ոլորտը տարբեր երկրներում տարբեր կերպ է զարգացել:

Սեփականատերերի շատ բարձր տոկոս ունեցող երկրներում, ինչպիսին է Հայաստանը, այսօր շահույթ չհետապնդող սոցիալական բնակարաններ քիչ են կամ ընդհանրապես բացակայում են²⁰¹: Նման երկրներում կարող են գործել որոշ բարեգործական կազմակերպություններ, որոնք ապաստան են տրամադրում առավել կարիքավորներին, սակայն պետական կամ ինստիտուցիոնալ որևէ շոշափելի ներգրավվածություն սոցիալական ոչ առևտրային կազմակերպությունների պլանավորման, զարգացման, կառավարման կամ պահպանման գործում չի նկատվում: Սոցիալական բնակարանների վերաբերյալ ՄԱԿ ԵՏՀ-ի ուղենիշները մշակվել են՝ քաղաքականություն մշակողներին հնարավորություն տալու գնահատելու սոցիալական բնակարանների տրամադրման քաղաքականության զանազան տարբերակները: Ուղենիշներն անդրադառնում են սոցիալական բնակարանների ինստիտուցիոնալ, իրավական և տնտեսական շրջանակին, ինչպես նաև սոցիալական բնակարանների նախագծման փորձին²⁰²:

«Սոցիալական բնակարան» եզրույթը կարող է տարբեր իմաստներ ունենալ:

200 ՏՀՀ (2020), «Սոցիալական բնակարանային ապահովում. նախկին և ապագա բնակարանային քաղաքականության անկյունաքար», ՏՀՀ հրատարակչություն, <http://www.oecd.org/social/social-housing-policy-brief-2020.pdf>:

201 ՄԱԿ ԵՏՀ (2004), Երկրի բնութագիրը ըստ բնակարանային ոլորտի՝ Հայաստան, Ժնև, Միավորված ազգերի կազմակերպություն:

202 ՄԱԿ ԵՏՀ (2006), Ուղենիշներ սոցիալական բնակարանային ապահովման վերաբերյալ. սկզբունքներ և օրինակներ՝ <https://unece.org/DAM/hlm/documents/Publications/guidelines.social.housing.pdf>:

հնչպես ՄԱԿ ԵՏՀ-ն նշել է, ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում բնակարանային համակարգերը մշակութային առումով առանձնահատուկ են, պայմանավորված են երկրի համատեքստով և լինում են տարբեր ձևերի:

Դրանք պատմական, մշակութային, քաղաքական և տնտեսական հանգամանքների արդյունք են: Ամենակարևորը, բնակարանային ապահովման համակարգերը ենթակա են փոփոխության և մշտական էվոլյուցիայի: Հետևաբար «սոցիալական բնակարան» եզրույթը տարբեր կերպ է մեկնաբանվում: Այդուհանդերձ, «յուրաքանչյուր երկիր ունի բնակարանային ապահովման ձևեր, որոնք ընդհանուր առմամբ նախագծված են բավարարելու այն տնային տնտեսությունների կարիքները, որոնք ի վիճակի չեն մրցակցել շուկայում՝ ընդունելի ստանդարտի բնակարանների համար» (Oxley, 2009թ., էջ 2): Սոցիալական բնակարանները, անկախ ձևից, տրամադրվում են ընդհանուր բնակարանային շուկայում գործող գներից ցածր գներով և հատկացվում են վարչական ընթացակարգերով (մանրամասների համար տե՛ս ՄԱԿ ԵՏՀ-ի 2002c, 2003a, 2005a, 2006a, Oxley 2009, CECODHAS, 2011, Braga and Palvarini, 2013): Դա նշանակում է, որ նման բնակարանների հետ կապված միշտ գոյություն ունի պետական աջակցության և սուբսիդավորման որևէ ձև: Միևնույն ժամանակ, «սոցիալական բնակարան» եզրույթի սահմանումը (և կիրառումը), բնակատեղի կարիքի սահմանումը, սոցիալական բնակարան ստանալու իրավունքը, իրավական և ինստիտուցիոնալ շրջանակները, ֆինանսավորման մեխանիզմները ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանի երկրներում զգալիորեն տարբերվում են²⁰³:

Բնակարանային կոոպերատիվներն ամբողջ աշխարհում երկար պատմություն ունեն և կարևոր բնակարանային ապահովման դեր ունեն եվրոպական բազմաթիվ երկրներում²⁰⁴: Եվրոպական զարգացման բանկի (ԵԶԲ) տնօրենների խորհուրդն արձագանքում է իր անդամ երկրների կարիքներին՝ «բնակարաններ տրամադրելով բնակչության կարիքավոր հատվածներին»²⁰⁵:

ԵՄ անդամ պետությունների՝ սոցիալական բնակարանների սահմանումը տարբեր է: Եվրոպական պառլամենտի կողմից ընդունված զեկույցներից մեկում առանձնացվում են ԵՄ անդամ պետությունների կողմից սոցիալական բնակարանների սահմանման երեք ընդհանուր տարրերը.

1. Առաքելությունը. ընդհանուր շահ:
2. Նպատակը. բարձրացնել մատչելի բնակարանների առաջարկը սոցիալական բնակարանների կառուցման, կառավարման կամ գնման միջոցով:
3. Թիրախը. թիրախային խմբերը որոշվում են ըստ սոցիալ-տնտեսական կարգավիճակի կամ խոցելիության աստիճանի:²⁰⁶
- 4.

203 ՄԱԿ ԵՏՀ (2015), *Սոցիալական բնակարաններ ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում, մոդելներ, միություններ և մարտահրավերներ*. էջ 6: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://unece.org/DAM/hlm/documents/Publications/Social_Housing_in_UNECE_region.pdf:

204 <https://www.housingeurope.eu/resource-1886/navigating-the-world-of-housing-cooperatives>

205 ԵԶԲ-ի մոտեցումը «ցածր եկամուտ ունեցող անձանց համար բնակարանային ապահովման» վերաբերյալ սահմանված է «Վարկերի և նախագծերի ֆինանսավորման ընդհանուր քաղաքականության շրջանակում» (Բանաձև 1562 (2013թ.)):

206 Եվրոպական պառլամենտ, (2013), *Սոցիալական բնակարանային ապահովումը Եվրոպայում*, Բրյուսել, IP/A/EMPL/NT/2012-07 PE 492.469, էջ 8/9: http://www.europarl.europa.eu/RegData/etudes/note/join/2013/492469/IPOL-EMPL_NT%282013%29492469_EN.pdf:

Սոցիալական բնակարանների մոդելներն ու քաղաքականությունները բնութագրվում և տարբերվում են չորս հարթություններում՝ բնակարանի տիրապետում, ծառայություններ մատուցողներ, շահառուներ և ֆինանսավորման մեխանիզմներ: Սոցիալական բնակարանային ապահովման եվրոպական մոդելը կարելի է դասակարգել որպես համընդհանուր, նպատակային, ընդհանուր կամ մնացորդային:

Աղյուսակ 3. Հատկացման հիման վրա գործող սոցիալական բնակարանային ապահովման մոդելներ²⁰⁷

Համընդհանուր մոդել	Ընդհանուր մոդել	Մնացորդային մոդել
	ՀԱՏԿԱՑՈՒՄ	
Հասանելի է ընդհանուր բնակչությանը (սոցիալական բնակարանների հերթացուցակում գրանցման դեպքում)	Խոցելի տնային տնտեսություններ Հատուկ խմբեր Որոշակի շեմից ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններ	Խոցելի տնային տնտեսություններ Հատուկ խմբեր (օրինակ՝ փախստականներ, ապաստան հայցողներ, հաշմանդամություն ունեցող անձինք, հոգեկան խանգարում ունեցող անձինք, թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձինք և այլն)
	ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ	
Ապահովել բոլորի համար համապատասխան ստանդարտի բնակարանների մատչելիություն	Արձագանքել բնակարանային շուկա մուտք գործելու խնդիրներին	Արձագանքել բնակարանային շուկայից դուրս մնացած բնակչության կարիքներին

ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույցում (2015) նշվում է, որ մնացորդային հատկացման մոդելը նպատակ ունի բնակարաններ հատկացնելու շահառուների սահմանափակ կատեգորիայի, սովորաբար առավել խոցելի տնային տնտեսություններին, որոնք մեծապես կախված են պետական նպաստներից (օրինակ՝ գործազուրկներին, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների, միայնակ ծնողներին): Եվրամիությունում «առավել խոցելի խավերի համար սոցիալական բնակարանները սովորաբար տեղական իշխանությունների կողմից ուղղակի հատկացվում են ելնելով տնային տնտեսությունների կարիքներից» (CECODHAS, 2007, էջ 15)²⁰⁸: Վարձավճարը հաշվարկվում է ծախսերի կամ եկամտի հիման վրա:

ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանի երկրների մեծ մասը կամ օգտագործում է մնացորդային սոցիալական բնակարանային մոդելը, կամ շարժվում է դեպի այն՝ իրենց քաղաքականության շրջանակներում: Միևնույն ժամանակ ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույցներում նաև նշվում է, որ այս մոդելի հիմնական առանձնահատկություններից է աղքատների կենտրոնացումը սոցիալական բնակարաններում, հատկապես այն տարածքներում, որտեղ բնակարանային շուկան թերզարգացած է:

207 ՄԱԿ ԵՏՀ (2015), *Սոցիալական բնակարաններ ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում, մոդելներ, միտումներ և մարտահրավերներ*: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://unece.org/DAM/hlm/documents/Publications/Social_Housing_in_unece_region.pdf:


208 ՄԱԿ ԵՏՀ (2015), *Սոցիալական բնակարաններ ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում, մոդելներ, միտումներ և մարտահրավերներ*, էջ 24:

Զեկույցում նաև ուշադրություն է հրավիրվում այն երկրների վրա, որտեղ սոցիալական բնակարանային ապահովման վերաբերյալ օրենսդրությունը վերջերս է ընդունվել կամ դեռևս կայացած չէ, և սոցիալական բնակարանների հատկացումը մեծապես կախված է միջազգային նվիրատվությունների և աջակցության առկայությունից: Դա նշանակում է, որ որոշ խմբեր ստանում են բնակարանային աջակցություն (օրինակ՝ փախստականները, գնչուները), քանի որ նրանք միջազգային հետաքրքրություն են ներկայացնում, մինչդեռ «տեղական» բնակչության կարիքները չեն բավարարվում ֆինանսավորման բացակայության (կամ նախատեսված չլինելու) պատճառով²⁰⁹:

Սոցիալական բնակարանային ապահովման վերաբերյալ ՏՀԶԿ զեկույցը (2020) ներկայացնում է ութ երկրներին առնչվող մի շարք օրինակներ²¹⁰: Դրանք վերաբերում են սոցիալական բնակարանների մեծ ֆոնդ ունեցող երկրներին՝ ընդհանուր բնակարանային ֆոնդի 20%-ից ավելին (Ավստրիա և Դանիա), միջին սոցիալական բնակարանային ֆոնդ ունեցող երկրներին (Ֆինլանդիա և Ֆրանսիա), փոքր սոցիալական բնակարանային ֆոնդ ունեցող երկրներին (Գերմանիա և Ավստրալիա), ինչպես նաև շատ փոքր՝ բնակելի տարածքների ընդհանուր թվի 2%-ից պակաս սոցիալական բնակարանային ֆոնդ ունեցող երկրներին (Լատվիա և Կոլումբիա): Տե՛ս ստորև՝ Հավելված 1:

Մեկ այլ մոտեցում դիտարկում է բնակարանների տրամադրումը լայն սպեկտրի երկայնքով՝ անհապաղ օգնությունից մինչև սեփականատիրոջ մասնավոր սեփականություն՝ պետական աջակցության տարբեր մակարդակներով:

Նկար 7. Սոցիալական և մատչելի բնակարանների սպեկտրը՝ բնակարանային ապահովման շարունակականություն ²¹¹




209 Նույն տեղում, էջ 25:

210 ՏՀԶԿ (2020), «Սոցիալական բնակարանային ապահովում. անցյալ և ապագա բնակարանային ապահովման քաղաքականության անկյունաքարը» [Social housing: A key part of past and future housing policy], Զբաղվածության, աշխատանքի և սոցիալական հարցերի քաղաքականության ամփոփագրեր, ՏՀԶԿ, Փարիզ, <http://oe.cd/social-housing-2020>:

211 ԵՄ քաղաքային օրակարգ (2018), Բնակարանային գործընկերության գործողությունների պլան՝ https://ec.europa.eu/futurium/en/system/files/ged/final_action_plan_euua_housing_partnership_december_2018_1.pdf

Առավել կարիքավոր խմբերին սոցիալական բնակարանների գնման սուբսիդավորում կամ օգնություն տրամադրելու եղանակներից մեկն ըստ եկամտի դեցիլների տվյալների օգտագործումն է: Եկամտի և կենսապայմանների վերաբերյալ ԵՄ վիճակագրությունը (EU-SILC) ԵՄ-ում եկամուտների բաշխման և սոցիալական ներառման համեմատության վիճակագրական աղբյուր է²¹²: Եկամտի դեցիլների վերաբերյալ տվյալները հավաքվում են տարեկան կտրվածքով և համադրվում օգնության հասանելիության և անհրաժեշտության տվյալների հետ: Եկամտի դեցիլը դասակարգված մի շարք տվյալներ հավասարապես բաժանված 10 մասերով ներկայացման քանակական մեթոդ է: Տնային տնտեսությունների եկամուտների բաշխումը աճման կարգով դասակարգելու դեպքում եկամտի դեցիլները բաժանվում են 10 հավասար մասերի: Դիտարկենք մեկ երկրի օրինակ, որտեղ բնակչության մոտավորապես 30%-ի եկամուտը բավարար չէ բնակարանների գնման սուբսիդավորման որևէ ծրագրի մասնակցելու համար:

Գծապատկեր 2. Եկամուտ և բնակարանի գնի մատչելիություն (սուբսիդավորումը ներառյալ)²¹³



Սոցիալական բնակարանային ապահովման ֆինանսավորում

Սոցիալական բնակարանային ապահովման կարևոր կողմը ֆինանսավորման մեխանիզմներն են: Բնակարանային ոլորտում ներդրումները խթանելու համար ՏՀՀԿ մի շարք երկրներ ստեղծել են շրջանառու հիմնադրամներ կամ ավելի բարդ համակարգեր, որոնք նույնպիսի ազդեցություն են թողնում՝ ֆինանսավորելով մատչելի և վարձակալվող սոցիալական բնակարանների կառուցումը: Այդ հիմնադրամները վարձակալության կամ վարկի վճարումների մի մասն ուղղում են նոր մատչելի և սոցիալական բնակարաններ կառուցելու համար: Ինչպես երևում է ստորև աղյուսակից, հատուկ ֆոնդավորման մեխանիզմի ստեղծման և գործարկման հիմնական առանձնահատկությունները ըստ երկրների զգալիորեն տարբերվում են, այդ թվում՝ ինստիտուցիոնալ կառուցվածքի, ֆինանսավորման և

212 [https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=EU_statistics_on_income_and_living_conditions_\(EU-SILC\)_methodology_-_distribution_of_income](https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=EU_statistics_on_income_and_living_conditions_(EU-SILC)_methodology_-_distribution_of_income)

213 Իռլանդիայի կառավարություն (2024), Բնակարանային ապահովման հանձնաժողովի հաշվետվություն, էջ 146: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.gov.ie/en/publication/f3551-report-of-the-housing-commission/>:

Ֆոնդավորման մեխանիզմների, կառավարման և մոնիթորինգի առումով:

Աղյուսակ 4. Շրջանառու հիմնադրամի ստեղծման և գործունեության շրջանակը՝ մատչելի և սոցիալական բնակարանների կառուցմանը ներդրումներ ուղղելու համար ²¹⁴

	Ինստիտուցիոնալ կառուցվածք	Ֆոնդավորում և ֆինանսավորում	Կառավարում և մոնիթորինգ
Շրջանակ	Լիազորող օրենսդրություն	Ներդրումային միջավայր	Միավորների կառավարում
	Բնակարանային ապահովման ազգային քաղաքականություն	Հոլոգտագործման կանոններ	Համապատասխանության չափորոշիչներ
	Ֆինանսավորման մոտեցման կառուցվածքը	Ենթակառուցվածք	Հատկացման չափորոշիչներ
Շրջանակ	Բնակարանային ապահովման գործողությունների ֆինանսավորվող շրջանակ	Ֆինանսավորման աղբյուրներ	Միավորների պահպանում
	Ֆինանսավորվող գործողությունների աշխարհագրական շրջանակ	Ֆինանսավորման աղբյուրներ	Շենքի բարելավման ֆինանսավորում
		Շրջանառու ֆինանսավորման մեխանիզմներ	
		Ֆինանսավորման սխեմայի ազդեցությունը պետական ֆինանսների վրա	
Շրջանակ	Ֆինանսավորման մեջ ներգրավված սուբյեկտներ և փորձ	Ֆինանսավորման գործիքներ	Հիմնադրամի կառավարում
		Երկարաժամկետ վարկեր	Հիմնադրամի աշխատանքի մոնիթորինգ և վերահսկողություն

ՏՀԶԿ-ի զեկույցը նաև ուսումնասիրում է ինստիտուցիոնալ խնդիրները՝ ներառյալ սոցիալական բնակարանային ապահովման հիմնադրամի կառուցվածքի, գործառնությունների և գործունեության շրջանակի վերաբերյալ որոշումները, ինչպես նաև լիազորող օրենսդրությունը, քաղաքականության միջավայրը և այդ սխեմայում ներգրավված տարբեր դերակատարները: ՏՀԶԿ երկրների օրինակներն են.

- *Դանիայի ազգային շինարարական հիմնադրամ*. Մասնագիտական, առանձնացված, ինքնակառավարվող ֆոնդավորման կառույց, որը ստեղծվել է բնակարանային ասոցիացիաների կողմից՝ շինարարության, վերանորոգման, շենքերի և շրջակայքի բարեկարգման աշխատանքների ինքնաֆինանսավորման համար: Հիմնադրամի ֆինանսները գոյանում են վարձավճարներից և բնակարանային ասոցիացիաների կողմից հիփոթեքային վարկերին ուղղված հատկացումներից:

214 ՏՀԶԿ (2023), «Աղյուս առ աղյուս (հատոր 2). Ավելի լավ բնակարանային ապահովման քաղաքականություն հեղուկփոխան դարաշրջանում», ՏՀԶԿ հրատարակություն, Փարիզ՝ <https://doi.org/10.1787/e91cb19d-en>, Աղյուսակ 1.1:

- *Ավստրիայի մատչելի և սոցիալական բնակարանային ապահովման մոդել.* Ֆոնդավորման ավստրիական մոտեցումը հիմնված է սահմանափակ շահույթով բնակարանային ասոցիացիաների ֆինանսավորման վրա, որոնք տնօրինում են շրջանառու միջոցները դաշնային, տարածքային և քաղաքային իշխանությունների վերահսկողության և կառավարման ներքո: Սահմանափակ շահույթ ունեցող բնակարանային ասոցիացիաների կողմից մշակվող նախագծերը սովորաբար ֆինանսավորվում են բազմաթիվ աղբյուրներից, այդ թվում՝ վարձակալների գումարներից, բնակարանային ասոցիացիաների սեփական կապիտալից, պետական և առևտրային վարկերից:
- *Սլովակիայի բնակարանաշինության պետական հիմնադրամ.* Հիմնադրամը ստեղծվել է բնակարանաշինության ոլորտում կառավարության առաջնահերթությունները ֆինանսավորելու համար: Հիմնադրամն անկախ սուբյեկտ է, որը վերահսկվում է տրանսպորտի և շինարարության նախարարության կողմից: Հիմնադրամն ի սկզբանե ֆինանսավորվել է բացառապես պետական բյուջեից, ներկայումս այն իր գործունեությունն իրականացնում է փոքր քանակությամբ պետական ֆինանսավորման և եվրոպական կառուցվածքային ֆինանսավորման, ինչպես նաև իր տրամադրած վարկերի մարման գումարներով:
- *Լատվիայի բնակարանների մատչելիության հիմնադրամ.* Լատվիան ստեղծել է ներդրումները դեպի մատչելի բնակարաններ ուղղորդելու ֆոնդավորման նոր սխեմա՝ ԵՄ վերականգնման և կայունության վարկային ծրագրի սկզբնական ֆինանսավորմամբ և կառավարությունից ու առևտրային փոխառություններից լրացուցիչ ռեսուրսների ներգրավման հնարավորությամբ: Առաջին փուլում հիմնադրամը մտադիր է ֆինանսավորել մայրաքաղաք Ռիգայի տարածքից դուրս նոր մատչելի վարձակալությամբ բնակարանների կառուցումը, որոնք շուկայականից ցածր վարձավճարներով կտրամադրվեն եկամտի շեմի պահանջներին բավարարող տնային տնտեսություններին:
- *Սլովենիայի բնակարանային ապահովման հիմնադրամ.* ստեղծվել է Բնակարանաշինության ազգային ծրագրի ֆինանսավորման և իրականացման համար: Բնակարանային ապահովման հիմնադրամը պետական ֆինանսների և անշարժ գույքի հիմնադրամ է, որը ցածր տոկոսադրույքներով երկարաժամկետ վարկեր է տրամադրում պետական և մասնավոր կազմակերպություններին՝ բնակարանների շահույթ չհետապնդող վարձակալության կամ սեփականատիրոջ կողմից գբաղեցրած բնակելի անշարժ գույքի ձեռքբերման, պահպանման և վերանորոգման համար: Հիմնադրամը նաև ներդրումներ է կատարում շինարարության և բնակարանաշինության նպատակով հողատարածքների հատկացման համար և աջակցում է խոցելի խմբերի համար բնակարանների կառուցմանը, վերանորոգմանը և արդիականացմանը:
- *Նիդեռլանդների մատչելի և սոցիալական բնակարանների մոդել.* Բնակարանային ասոցիացիաները մուտք ունենե՞րաշխիքային հիմնադրամ

(Սոցիալական բնակարանային երաշխիքների հիմնադրամ կամ WSW): Բնակարանային ասոցիացիաների այս համակարգը գործում է որպես «շրջանառու հիմնադրամ»՝ օգտվելով ավելի ցածր տոկոսադրույքներից՝ շնորհիվ WSW-ի և բնակարանային ասոցիացիաների կենսունակությունը պահպանելուն պատասկով փոխհամագործակցության համաձայնագրերի: Բացի այդ, Նիդեռլանդների կառավարությունը և քաղաքապետարանները հանդես են գալիս որպես բանկային վարկերի երաշխավորման «վերջին ատյան»:

2021 թվականին Եվրոպական պառլամենտի կողմից ընդունված բանաձևը վերստին ընդգծում է սոցիալական բնակարանային ապահովման կարևոր դերը ԵՄ քաղաքականության ձևավորման գործում: Պառլամենտը.

43. Ընդգծում է, որ համապատասխան քաղաքականություններն ու միջոցները, որոնք նպաստում են անհրաժեշտ թվով բնակարանների մատակարարմանը, վճարող նշանակություն ունեն բնակարանաշինության զարգացումը հավասարակշռելու և խթանելու համար՝ օգուտ բերելով ողջ հասարակությանը և ապահովելով մատչելի և բարգավաճ կենսամիջավայր բոլորի համար: Արձանագրում է, որ ձեռնարկված միջոցները պետք է լինեն կանխամտածված, կոնկրետ և նպատակաուղղված խելամիտ ժամկետներում բնակարանի իրավունքի իրագործմանը, և որ անդամ պետությունները պետք է բավարար միջոցներ հատկացնեն և առաջնահերթություն տան անբարենպաստ կենցաղային պայմաններում ապրող անապահով և մարգինալացված անձանց կամ խմբերի կարիքներին, և, ուստի, կոչ է անում անդամ պետություններին, Հանձնաժողովի աջակցությամբ, ապահովել բավարար քանակի, ստանդարտին համապատասխան և մատչելի սոցիալական բնակարաններ՝ այդ անհատների և խմբերի բնակարանային կարիքները հոգալու համար:

56. Կոչ է անում Հանձնաժողովին, անդամ պետություններին, տարածքային և տեղական իշխանություններին՝ ճանաչել, աջակցել և ֆինանսավորել համայնքի շահերով առաջնորդվող, ժողովրդավարական և համագործակցային բնակարանային ապահովման լուծումները՝ ներառյալ համայնքային հողային հիմնադրամները, որպես շուկայական և սոցիալական բնակարաններ տրամադրելու օրինական և կենսունակ միջոց²¹⁵:

Թեև Եվրամիության մակարդակով սոցիալական բնակարանների սահմանում չկա, պետական օգնության կանոնները կիրառելիս սոցիալական բնակարանները հաճախ դիտվում են որպես ընդհանուր տնտեսական շահի միտված ծառայություն: ԵՄ միասնական շուկայի քաղաքականության համատեքստում այս սահմանումը կիրառվում է սոցիալական բնակարանների նկատմամբ՝ հետևյալ կերպ.

Ձեռնարկությունները, որոնք պատասխանատու են սոցիալական ծառայությունների համար, այդ թվում՝ սոցիալական բնակարանների տրամադրումը ցածր եկամուտ ունեցող քաղաքացիներին կամ սոցիալապես անշահավետ դիրքում գտնվող խմբերին, ովքեր ցածր վճարողունակության պատճառով չեն կարողանում բնակարան ձեռք բերել շուկայական գներով, նույնպես պետք է օգտվեն սույն որոշմամբ սահմանված ծանուցման

215 Եվրոպական պառլամենտ (2021) «Ձեկույց բոլորի համար արժանապատիվ և մատչելի բնակարանների հասանելիության վերաբերյալ» (2019/2187(INI) P9_TA(2021)0020 (հունվար 2021): Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.europarl.europa.eu/doceo/document/A-9-2020-0247_EN.html:

արտոնությունից, նույնիսկ եթե փոխհատուցման գումարը գերազանցում է սույն որոշմամբ սահմանված ընդհանուր փոխհատուցման շեմը» (2012/21/ԵՄ որոշման 11-րդ կետ, 20.12.2011թ.)²¹⁶:

Հայաստանի պարագայում, կարևոր է սոցիալական բնակարանների կառուցման և կառավարման ինստիտուցիոնալ շրջանակին ուղղված միջոցների հատկացումը՝ աշխատակազմի համար կարողությունների զարգացման հետ միասին՝ տեղական ինքնակառավարման մակարդակով կամ սոցիալական բնակարանների մասնագիտացված կազմակերպությունների ստեղծման միջոցով: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս Եվրոպայում սոցիալական բնակարանային ֆոնդի կառավարման տարբեր մոտեցումները:

216 Տե՛ս 20.12.2011թ.-ի 2012/21/ԵՄ որոշման 11-րդ կետը՝ «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 106(2) հոդվածի՝ հանրային ծառայության փոխհատուցման տեսքով պետական օգնության կիրառման վերաբերյալ, որը տրվում է ընդհանուր տնտեսական հետաքրքրություն ներկայացնող ծառայությունների համար պատասխանատու ձեռնարկություններին: Տե՛ս Kenna, P. (2021), «Աջակցություն իռլանդական բնակարանային ապահովման համակարգին՝ լուծելու բնակարանային շուկայի ծախսողման խնդիրը» [Supporting the Irish housing system to address housing market failure - Cost Rental Housing and Services of General Economic Interest (SGEI)], Դուբլին, Իռլանդիայի սոցիալական բնակարանային ապահովման խորհուրդ և Բնակարանի իրավունքի, իրավունքների և քաղաքականության կենտրոն, NUI Գելվեյ՝ <http://www.nuigalway.ie/media/housinglawrightsandpolicy/files/ICSH-NUI-Galway-Report-Cost-Rental-and-SGEI-Full-Report-.pdf>:

Աղյուսակ 5. Սուբսիդավորվող/վարձակալությամբ սոցիալական բնակարաններ տրամադրող պետական մարմինները և ոչ առևտրային կազմակերպությունները²¹⁷

Անդամ պետություն	Խումբ	Ազգային	Տարածքային	Տեղական
Մալթա	Բացառապես ազգային	4	0	0
Խորվաթիա	Ազգային գերակայություն	3	2	1
Հունաստան		5	1	1
Ավստրիա	Ազգային/տեղական	4	1	2
Բուլղարիա		4	1	3
Դանիա		8	2	6
Ֆինլանդիա		7	1	4
Ֆրանսիա		6	1	5
Իռլանդիա		6	1	3
Լատվիա		7	2	6
Նիդեռլանդներ		7	2	6
Հոլանդիա		5	1	2
Սլովակիա		7	1	4
Սլովենիա		6	1	4
Իսպանիա		5	1	6
Շվեդիա		7	0	3
Ավստրիա	Հավասարակշռված	4	6	2
Գերմանիա		7	7	3
Իտալիա		6	3	5
Պորտուգալիա		6	4	4
ՄԲԳ		6	7	5
Բելգիա	Տարածքայինացված	3	8	4
Կիպրոս	Առանց տարածքային մակարդակի	4	0	1
Չեխիայի Հանրապետություն		5	0	2
Էստոնիա		5	0	2
Հունգարիա		7	0	3
Լիտվա		4	0	2
Լյուքսեմբուրգ		6	0	2
Ռումինիա		5	0	4

217 Krapp, M-C., Vaché, M., Egner, B., Schulze, K. & Thomas, S. (2022) *Բնակարանային քաղաքականությունները ԵՄ-ում [Housing policies in the EU]*, (Բոնն, Շինարարության և տարածաշրջանային պլանավորման դաշնային գրասենյակին կից՝ Շենքերի, քաղաքային հարցերի և տարածքային զարգացման հետազոտությունների դաշնային ինստիտուտ), էջ 65:

Երկրների մեծ մասում սոցիալական բնակարանային ֆոնդի կառավարման դերը ստանձնում են տեղական կամ պետական մարմինները, թեև Ավստրիայում, Ֆրանսիայում, Շվեդիայում, Նիդեռլանդներում և Մեծ Բրիտանիայում այն ստանձնում են սոցիալական բնակարանային ապահովման որոշ խոշոր կազմակերպություններ: Ճահույթ չհետապնդող կամ սոցիալական բնակարաններ տրամադրելու և կառավարելու նպատակով այդ երկրներում սահմանվել է ինստիտուցիոնալ կարգավորման շրջանակով հատուկ համակարգ: ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում այդ շահույթ չհետապնդող մարմինների գործունեությունը կարգավորվում է նրանց առաքելությունը, գործունեության ոլորտը և բիզնես վարքագիծը սահմանող օրենսդրությամբ:

Ավստրիան ունի հստակ սահմանված «ծախսերի վրա հիմնված վարձավճարի», սահմանափակ շահույթով բնակարանային ասոցիացիաների համակարգ (LPHA): Այն նախատեսում է առանձնացված ծախսային միջոցների աուդիտ, այդ թվում՝ հողի, ֆինանսավորման և կառավարման ծախսերի և մինչև 150 քմ մակերեսով բնակարանների, ինչպես նաև վարձավճարների սահմանման և ինդեքսավորման ծախսերի ծածկումն ապահովող մոտեցումների կիրառում: Մատչելի բնակարաններ կառուցելու համար պետք է հատկացվեն համապատասխան միջոցներ և գույք: Ավստրիայի կարգավորող համակարգը հիմնված է մի շարք հիմնական ներպետական օրենքների վրա, ինչպիսիք են «Սահմանափակ շահույթով բնակարանային ապահովման մասին» օրենքը, սակայն բուն բնակարանային ապահովումը տարածքային մարմինների պատասխանատվության ներքո է: Օրենսդրական շրջանակը սահմանում է սոցիալական բնակարան տրամադրողների գործառույթները և վարձավճարների սահմանման ընթացակարգերը, որոնք կազմում են բնակարանային ֆոնդի 24 տոկոսը՝ ներառելով քաղաքային բնակարանային ապահովման ընկերությունները և LPHA-ները²¹⁸: Սլովակիան ևս մեկ օրինակ է, որտեղ ոչ առևտրային սոցիալական բնակարանների ոլորտը ստեղծվել է օրենսդրական, հարկային, ֆինանսավորման, կարգավորող, ինստիտուցիոնալ և կարողությունների զարգացման մեխանիզմների միջոցով²¹⁹:

«Քաղաքային օրակարգ ԵՄ-ի համար» 2018 թվականի բնակարանային ապահովման գործընկերության գործողությունների պլանում ներկայացված է նախագծերի սոցիալական և մատչելի բնակարանային լուծումների 30 օրինակ²²⁰: Կարգավորման տեսանկյունից ուշագրավ է իռլանդական մոդելը, որտեղ գործում են մի շարք տեղական փոքր մասնագիտացված սոցիալական բնակարանային կազմակերպություններ, ինչպես նաև միջին և խոշոր կազմակերպություններ, որոնք լուծում են տարբեր խնդիրներ, ինչպիսիք են տարեցների համար ծրագրերը²²¹ և զանազան կարիքների բավարարմանը միտված ծրագրերը²²²: Ճահույթ չհետապնդող սոցիալական բնակարանային կազմակերպությունների կարգավորման համար լավագույն մոդելներից մեկը Իռլանդիայի Բնակարանային

218 <https://www.housing2030.org/project/austrian-legislation-and-auditing-of-limited-profit-housing/>

219 Տե՛ս ՄԱԿ ԵՏՀ՝ <https://www.housing2030.org/project/slovakian-state-housing-policy/>, https://www.employment.gov.sk/files/ministerstvo/ksbp_en_final_version.pdf

220 <https://www.google.com/maps/d/viewer?mid=1RcxrQ2QqfgUAU9Pw3EkuLOYDyJw&hl=en&ll=-3.81666561775622e-14%2C-73.47039779708962&z=1>

221 <https://icsh.ie/our-work/mapping-of-housing-projects-for-older-people/>

222 <https://icsh.ie/about-icsh/about-approved-housing-bodies/>

ապահովման հաստատված ծրագրերի կարգավորիչ մարմինն է (ANBRA)²²³։ Համաձայն Բնակարանային ապահովման մասին (Բնակարանային ապահովման հաստատված մարմինների կարգավորում) 2019 թվականի ակտի՝ կարգավորող մարմինը պատասխանատու է սոցիալական բնակարաններ տրամադրողների (Բնակարանային ապահովման հաստատված մարմիններ/ԲՀՄ) գրանցման համար՝ սահմանելով չափանիշներ ԲՀՄ-ների համար, որոնք ենթակա են նախարարի հաստատմանը, մոնիթորինգի ենթարկելով և գնահատելով ԲՀՄ-ների համապատասխանությունը չափանիշներին, վերահսկելով ԲՀՄ-ների գործունեությունը, անհրաժեշտության դեպքում՝ չեղարկելով նրանց գրանցումը՝ վարձակալներին պաշտպանելու²²⁴ համար, ինչպես նաև որոշ հանգամանքներում ԲՀՄ-ների գույքը պաշտպանելու համար դատարան դիմելով²²⁵։

Այսպիսով, առաջնահերթ ընտրությունն այն է, թե արդյոք սոցիալական բնակարանները պետք է կառուցվեն, տնօրինվեն և կառավարվեն տեղական իշխանության, թե՛ կարգավորվող մասնագիտացված ոչ առևտրային մարմնի կողմից։ Հայաստանի պարագայում, թերևս ամենաարագ և արդյունավետ մոտեցումը կլինի սոցիալական բնակարանային կազմակերպությունների հիմնումը, որոնք փոխըմբռնման հուշագրերի միջոցով կկարողանան լուծել տեղական ինքնակառավարման մարմինների՝ այդ ոլորտին առնչվող տարբեր խնդիրները՝ կարիքավոր մարդկանց հողի տրամադրման, ֆինանսավորման և հատկացումների պայմանագրերի կնքման միջոցով։ Այս առումով դիտարժան է Բոսնիայի շահույթ չհետապնդող բնակարանային կազմակերպությունների կողմից երկարաժամկետ վարձակալությամբ բնակարանների տրամադրման փորձը։ Նման շահույթ չհետապնդող բնակարանային մարմնի ստեղծման հարցում կարող է տրամադրվել խորհրդատվություն և աջակցություն Իռլանդիայի Սոցիալական բնակարանային ապահովման խորհրդի կողմից. մասնագիտացված գործակալություն, որը սպասարկում է 270-ից ավելի համանման մարմինների։

223 <https://www.ahbregulator.ie/>

224 Բնակարանային ապահովման մասին (Բնակարանային ապահովման հաստատված մարմինների կարգավորում) 2019 թվականի ակտ, մաս 6, գլուխ 3։

225 Նույն տեղում, գլուխ 1։

9. Փորձի փոխանակում սոցիալական բնակարանային ֆոնդի կառավարման կազմակերպությունների կառուցվածքի և գործառույթների լավագույն գործելակերպերի վերաբերյալ՝ անդրադառնալով տարբեր համայնքների և հավատարմագրված ՀԿ-ների կառավարման մոդելների տարբերություններին

«Բնակարանային ապահովման ծրագիր 2030. արդյունավետ քաղաքականություններ մատչելի բնակարանների համար ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում» ՄԱԿ ԵՏՀ-ի ղեկույցում նշվում է, որ բնակարանի իրավունքի իրացման համար համապատասխան բնակարանային ապահովման չափանիշների սահմանումն ու մոնիթորինգը բնակարանային ապահովման համակարգի կառավարման կարևոր գործիքներ են, որոնք կարող են նպաստել բնակարանային ապահովման բարձր արդյունքներին²²⁶: Ձեկույցը ներկայացնում է սոցիալական կառավարման կազմակերպությունների կառուցվածքի, գործառույթների և կառավարման մոդելների վերաբերյալ լավագույն գործելակերպերի մի շարք օրինակներ²²⁷: Լավագույն գործելակերպերի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել առցանց ռեսուրսում, պրակտիկ մասնագետների պրեզենտացիաներում, վեբինարների ծայնագրություններում և աուդիո փողքաստներում²²⁸:

Ժամանակակից սոցիալական բնակարանային համակարգերը վարձակալների մասնակցությունը դիտում են որպես կառավարման անբաժանելի տարր:²²⁹ Միջազգային մակարդակով, Վարձակալների միջազգային միության կողմից ընդունված՝ Վարձակալների խարտիան ճանաչում է, որ վարձակալների տեսակետները և մոտեցումներն ի գիտություն ընդունելը վարձակալած բնակարանների արդար և արդյունավետ կառավարման կարևորագույն կողմն է²³⁰: Այդ առումով, ՄԱԿ ԵՏՀ-ի «Housing 2030» ղեկույցը ներկայացնում է վարձակալների մասնակցության հնարավոր առավելություններն ու մարտահրավերները:

226 https://unece.org/sites/default/files/2021-10/Housing2030%20study_E_web.pdf

227 Նույն տեղում, էջ 33-46:

228 <https://www.housing2030.org>

229 Բնակարանի իրավունքի, իրավունքների և քաղաքականության կենտրոն (2022), «Վարձակալների իրավագործում. մարդու իրավունքների պաշտպանություն. Վարձակալների արդյունավետ մասնակցությունը բնակարանային ապահովման՝ տեղական մարմինների կողմից կառավարմանը [*Empowering Tenants: Protecting Human Rights - Effective Tenant Participation in the Management of Local Authority Housing*] (Գովվելի համալսարան): Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.housingagency.ie/sites/default/files/RSPs/CAN%20CHLRP%20University%20of%20Southampton%202022%20Empowering%20tenants%20protecting%20human%20rights.pdf>:

230 Վարձակալների միջազգային միություն, Վարձակալների խարտիա (IUT, 2003), Մաս VI, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.iut.nu/about-iut/the-tenants-charter/>:

Աղյուսակ 6. Վարձակալված բնակարանային ֆոնդի կառավարմանը վարձակալներին ներգրավելու վերաբերյալ հիմնավորում²³¹

Օգուտներ	Մարտահրավերներ
- Վարձակալներն իրավունք ունեն, որ իրենց հետ խորհրդակցեն իրենց բնակարաններին առնչվող որոշումների վերաբերյալ: - Վարձակալներն ունեն սեփական պատկերացումներ բնակարանների արդյունավետ կառավարման վերաբերյալ, որոնք կարող են բարելավել ծառայությունների որակը և արդյունավետությունը: - Ուժեղացնում է վարձակալած բնակարաններում ապրող տնային տնտեսությունների համայնքը և նվազեցնում սոցիալական մեկուսացումը: - Իրավագործում է վարձակալներին, բարձրացնում է նրանց վստահությունը ապագայի նկատմամբ, օգնում ձեռք բերել նոր հմտություններ: - Էժան թվային տեխնոլոգիաների, ինտերնետի և սոցիալական ցանցի օգտագործումը հեշտացնում են վարձակալների հետ խորհրդակցությունը: - Նպաստում է բնակարանների բաց, ներառական կառավարմանը:	- Կարող է հակասել վարձատուի կազմակերպության առանցքային սկզբունքներին և մշակույթին: - Կարող է անհավասարություն ստեղծել «ներսի» և «դրսի» մարդկանց, այսինքն՝ ներկայիս և ապագա վարձակալների միջև: - Լրացուցիչ պահանջներ վարձակալներին՝ հանդիպումներին մասնակցելու, փաստաթղթերի պահպանման և կառավարման պարտականությունները կատարելու համար: - Վարձակալների պահանջները կարող են խաթարել վարձակալության քաղաքականությունը, որն ապահովում է բնակարանների պահպանման, վերանորոգման համար միջոցներ և նոր բնակատեղեր: - Դժվար է ապահովել բոլոր վարձակալների, հատկապես երիտասարդների, անապահով տնային տնտեսությունների և էթնիկ փոքրամասնությունների ներգրավումը: - Կարող է կրել խորհրդանշական բնույթ և չուղեկցվել մոնիթորինգով, չունենալ կանոնակարգում և օրենսդրական բազա:

Վարձակալների մասնակցությունը կարող է կազմակերպվել տարբեր ձևերով՝ կախված թե՛ որոշումների կայացման գործընթացում վարձակալներին ներգրավելու նպատակներից, և թե՛ գործընթացին հատկացված ժամանակից և ռեսուրսներից:

231 Տե՛ս ՄԱԿ ԵՏՀ, #Housing2030, էջ 42:

Աղյուսակ 7. Վարձակալված բնակարանային ֆոնդի կառավարմանը վարձակալների և տների սեփականատերերի ներգրավման մակարդակը, նպատակները և մեթոդները ²³²

Վարձակալների ներգրավվածության մակարդակ	Վարձակալների ներգրավման նպատակներ	Իրականացման եղանակներ և մեխանիզմներ
Վարձակալների ներգրավվածության մակարդակ	Վարձակալների ներգրավման նպատակներ	Իրականացման եղանակներ և մեխանիզմներ
Խորհրդակցություն և երկխոսություն	Վարձակալների կարծիքները հավաքվում և հաշվի են առնվում որոշումներ կայացնելիս և ծառայություններ մատուցելիս:	Հանդիպումներ, առցանց հարցումներ, քննարկումներ և հետադարձ կապի հարթակներ:
Համատեղ որոշումների կայացում	Վարձակալները քվեարկում են ծառայությունների մատուցման հետ կապված հարցերի վերաբերյալ կամ համարվում են տանտեր կազմակերպությունների խորհուրդների անդամներ, ուստի տանտերերը պետք է հաշվի առնեն նրանց կարծիքը:	Վարձակալները կազմակերպված են և ունեն ներկայացուցչություն: Տանտերերի և վարձակալների միջև կնքվում են պայմանագրեր: Իրագործվում են համատեղ ռազմավարություններ և գործողությունների ծրագրեր:
Վարձակալների կառավարում	Վարձակալներն ունեն լիարժեք վերահսկողություն և ինքնուրույն որոշումներ են կայացնում վարձակալման բնակարանային ֆոնդի կառավարման վերաբերյալ:	Կառավարում վարձակալների կողմից:

Վարձակալների մասնակցության իրավական/մարդու իրավունքների վրա հիմնված արժեքավոր հենանիշը PANEL մոտեցումն է, որը կազմվել է Շոտլանդիայի մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից՝ Շոտլանդիայի սոցիալական բնակարանների խարտիայի ուսումնասիրության (2016) արդյունքում²³³:

- [P] Participation (մասնակցություն). Վարձակալները պետք է հնարավորություն ունենան ներգրավվելու իրենց իրավունքների վրա ազդող որոշումների կայացման գործընթացին:
- [A] Accountability (հաշվետվողականություն). Պետք է լինի անկախ մոնիթորինգ՝ բացահայտելու վարձակալների իրավունքների խախտումները, ինչպես նաև հատուկ միջոցներ, երբ ինչ որ բան սխալ է ընթանում:
- [N] Non-Discrimination (խտրականության բացառում). Վարձակալների և նրանց տնային տնտեսությունների նկատմամբ պետք է դրսևորվի արդարացի վերաբերմունք՝ անկախ տարիքից, գենդերից, էթնիկ պատկանելությունից, հաշմանդամությունից, կրոնից կամ համոզմունքից, սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից կամ որևէ այլ հատկանիշից:
- [E] Empowerment (իրավագործում). Վարձակալներին պետք է օգնել հասկանալու իրենց իրավունքները և լիարժեք աջակցություն տրամադրել մասնակցելու իրենց

232 Տե՛ս ՄԱԿ ԵՏՀ, #Housing2030, էջ 42:

233 Շոտլանդիայի մարդու իրավունքների հանձնաժողով, *Շոտլանդիայի սոցիալական բնակարանների խարտիայի ուսումնասիրություն, 2016թ.*:

- կյանքի վրա ազդող քաղաքականության մշակմանը և գործելակերպին:
- [L] Legality (օրինականություն). Հնարավորության դեպքում վարձակալների իրավունքները պետք է ամրագրվեն ներպետական իրավունքում:

10. Էկոլոգիապես կայուն բնակարանային լուծումներ

Կլիմայական փոփոխությունները և դրանց բացասական ազդեցությունները հաղթահարելու համար 2015 թվականին Փարիզում կայացած ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության համաժողովում (COP21) համաշխարհային առաջնորդները ստորագրեցին Փարիզի համաձայնագիրը²³⁴: Շենքերը (ներառյալ բնակարանները) սպառում են ամբողջ աշխարհում արտադրվող էներգիայի ավելի քան մեկ երրորդը, իսկ ածխածնի արտանետումների մեջ նրանց մասնաբաժինը կազմում է մոտ 50 տոկոս, ինչը զգալիորեն խթանում է կլիմայի փոփոխությունը: Կլիմայական ճգնաժամը լուծելու համար անհրաժեշտ է ամբողջությամբ անցնել կլիմայապես չեզոք կառուցապատման և կապիտալ վերանորոգման:

Բնապահպանական կայունության տեսանկյունից բնակարանային ֆոնդի զարգացման և կառավարման հարցում գոյություն ունի երեք հիմնական փուլ: Առաջինը շինարարության գործընթացում օգտագործվող էներգիան և ռեսուրսներն են, որոնք հաճախ կոչվում են մարմնավորված էներգիա կամ մարմնավորված ածխածին: Երկրորդ փուլը շենքի շարունակական շահագործումն է և կառավարումը, որի իրականացումը հիմնականում պայմանավորված է բնակիչների ապրելակերպով և կենցաղային/աշխատանքային պայմաններով: Երրորդ փուլը շենքի/տան վերջնական օգտագործման, քանդման կամ շահագործումից հանման ազդեցությունն է: Անշուշտ, բնապահպանական կայունության վրա ամենամեծ ազդեցություն ունեն տան շահագործման գործոնները՝ էլեկտրաէներգիան, ջեռուցումը, սարքավորումները, խոհարարությունը, տաք ջուրը և այլն:

Էկոլոգիապես կայուն բնակարանների առումով որոշ մոտեցումներ նպատակ ունեն նվազեցնելու շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը (քանզի դրանք ամբողջությամբ վերացնել հնարավոր չէ), մի մասն էլ միտված է ապահովելու կլիմայական չեզոք ազդեցություն:

Ինչ վերաբերում է սոցիալական բնակարանների ռազմավարությանը, որի նպատակն է մշակել կլիմայական չեզոք բնակարանային քաղաքականություն, ապա ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույցի 4-րդ գլուխը (2021 թ.)²³⁵ սահմանում է բնակարանային ֆոնդի ապաօրհանության հստակ ռազմավարություն՝ ներառական և մատչելի, ներկայացնելով այս ոլորտում եվրոպական երկրների արդյունավետ գործելակերպի մի շարք օրինակներ: ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույցը սահմանում է կլիմայական չեզոք բնակարանների կառուցմանը և վերանորոգմանը նպաստելու համար հատուկ գործիքաշար²³⁶:

Ինչ վերաբերում է շինարարական կանոնակարգերին, ապա ազգային և տեղական ինքնակառավարման մարմիններն ապահովում են շինարարության և վերանորոգման ոլորտի կարգավորող դաշտը: Էներգաարդյունավետ

234 http://unfccc.int/files/essential_background/convention/application/pdf/english_paris_agreement.pdf

235 ՄԱԿ ԵՏՀ (2021) #Housing2030 «Արդյունավետ քաղաքականություններ մատչելի բնակարանների համար ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանում», գլուխ 4: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://unece.org/sites/default/files/2021-10/Housing2030%20study_E_web.pdf:

236 ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույց (2021), Աղյուսակ 33. էջ 135:

շինարարության կանոնակարգերը կլիմայական քաղաքականության շատ հզոր գործիք են և դրանք լայնորեն կիրառվում են ամբողջ աշխարհում: Շենքի ծածկույթի (տանիքի, արտաքին պատերի, հատակասալերի (ցուրտ կլիմայական պայմաններում), պատուհանների և դռների) ջերմամեկուսացման ուղղությամբ առաջին քայլերից ի վեր, տարիների ընթացքում շինարարական կանոնակարգերի շրջանակն ընդլայնվել է՝ հաշվի առնելով նորարարական շինանյութերը և կառուցման արդի տեխնոլոգիաները (օրինակ՝ կրկնակի, իսկ ավելի ուշ՝ նաև եռակի ապակեպատ պատուհաններ, բարձր արդյունավետությամբ մեկուսիչ նյութեր, ջեռուցման, օդափոխության և արտանետվող ջերմության վերականգնմամբ օգորակման համակարգեր և այլն): Գոյություն ունեն էներգաարդյունավետ սոցիալական բնակարանների կառուցման և ֆինանսավորման օպտիմալ չափանիշների բազմաթիվ աղբյուրներ ²³⁷:

2020 թվականին ԵՄ-ն «Շենքերի էներգետիկ արդյունավետության մասին» և «Էներգաարդյունավետության մասին» հրահանգների ընդունմամբ ստեղծեց համապատասխան օրենսդրական դաշտ²³⁸: Այն խթանում է մինչև 2050 թվականին էներգաարդյունավետ և ածխաթթվայնությունից զերծ շենքերի ֆոնդի քաղաքականությունը, կայուն միջավայր է ստեղծում ներդրումային որոշումների համար և հնարավորություն է տալիս սպառողներին և գործարարներին ավելի տեղեկացված ընտրություններ կատարելու՝ էներգիա և կապիտալ խնայելու համար²³⁹: ԵՄ բոլոր անդամ պետությունները պետք է ներառեն այս փոփոխություններն իրենց իրավական կարգավորման համակարգերում:

Էկոլոգիապես կայուն բնակարանային ապահովումը ներառում է ոչ միայն շենքերը/տները, այլև դրանց օգտագործման եղանակը՝ ներառյալ ավտոտրանսպորտի մուտքի և ելքի ճանապարհները, ինչպես նաև էլեկտրաէներգիայի ամենօրյա սպառումը: Այսպիսով, էկոլոգիապես կայուն բնակարանային ապահովումը պահանջում է, որ քաղաքային տարածքները պլանավորվեն և կառուցվեն այնպես, որ խրախուսվի տարածքին համատեղելի աշխատանքի ձևերի և ապրելակերպի միաձուլումը և կանխվի ցածր խտությամբ կառուցպատման արդյունքում քաղաքների տարածքի հետագա ընդլայնումը. այդ ամենը պահանջում է պետական պլանավորում և հողօգտագործման կառավարում: Պետք է նաև խթանել երթևեկության կառավարումը, խրախուսել քայլելը, հեծանիվ վարելը և բարելավել հանրային տրանսպորտի աշխատանքը: ՄԱԿ ԵՏՀ-ի ղեկույցում ներկայացվում են կայուն բնակարանային ապահովման համատեքստում շենքերի կապիտալ վերանորոգման ոլորտի տարբեր շահառուները:

Ներկայումս մի շարք հայեցակարգերով, ինչպիսին է «15 րոպեանոց քաղաքը», առաջարկվում են էկոլոգիապես կայուն բնակարանաշինության պլանավորման տիպային օրինակներ: Դա մարդկանց հնարավորություն է տալիս հեշտությամբ


237 ՄԱԿ ԵՏՀ, Շենքերի էներգաարդյունավետության չափանիշների շրջանակային ուղենիշներ (ECE/Energy/GE.6/2017/4), ՄԱԿ ԵՏՀ-ի ղեկույց (2021), գլուխ 4. Եվրոպայում էներգախնայողական շինարարության պորտալ, <https://www.buildup.eu/en/topics>, Եվրոպայում շինարարական արդյունավետության ինստիտուտ, <https://www.bpie.eu/>:

238 Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի 2010/31/EU հրահանգ շենքերի էներգաարդյունավետության վերաբերյալ, Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010/31/EU հրահանգը փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2018 թվականի մայիսի 30-ի 2018/844 (ԵՄ) հրահանգ, և 2012/27/EU հրահանգ էներգաարդյունավետության վերաբերյալ:

239 ՄԱԿ ԵՏՀ (2021), էջ 141:

մուտք գործելու այգիներ և կանաչ տարածքներ, նպաստում է փոխգործակցությանն ու ինտեգրմանը, օգնում պայքարել մեկուսացման դեմ և ձևավորել համայնքի մաս լինելու զգացում: Խանութների և հանրային օբյեկտների ստեղծումը նպաստում է տեղական տնտեսության աճին և խրախուսում է ավտոմեքենայից օգտվելու փոխարեն քայլել կամ հեծանիվ վարել, ինչը դրական ազդեցություն է ունենում մարդկանց առողջության վրա և էկոլոգիապես ապահով միջոց է: «15 րոպեանոց քաղաք» հաջողակ ծրագրի ստեղծման առանցքային տարրերն են սոցիալական ենթակառուցվածքները, այդ թվում՝ դպրոցները և կլինիկաները, ինչպես նաև մշակութային հաստատությունները, ինչպիսիք են համայնքային ակումբները և գրադարանները: Այն ենթադրում է փոխգործակցությունը խթանող փողոցների և տարածքների նախագծում, որտեղ առաջնահերթությունը տրվում է քայլելուն և հեծանիվ վարելուն, ինչպես նաև զբոսայգիների և մանկական խաղահրապարակների կառուցում՝ բարելավելու մարդկանց առողջությունը և նպաստելու նրանց մոտ համայնքի մաս լինելու զգացումը²⁴⁰: Կառուցապատման տարածքի գնահատման տիպային օրինակի համար տե՛ս նաև վերևում՝ Նկար 6-ը:

Նկար 8. 15 րոպեանոց քաղաք



240 <https://www.burohappold.com/articles/15-minute-cities/>

Էկոլոգիապես մաքուր բնակարանների կառուցումը չափազանց մեծ ազդեցություն ունի ցածր եկամուտ ունեցող մարդկանց պարագայում հաշվի առնելով թե՛ վատ մեկուսացված տներում էլեկտրաէներգիայի մեծ ծախսը, և թե՛ էներգաարդյունավետության չափանիշներին համապատասխանելու համար հին շենքերի վերանորոգման բարձր արժեքը: Համաձայն Եվրոպայում վառելիքային աղբատության հաղթահարման և էներգաարդյունավետության ծրագրի՝ էներգետիկ աղբատության հաղթահարմանը և ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների ներքին միջավայրի որակի բարելավմանն ուղղված գործողություններն ու միջոցառումներն ունեն երեք նպատակ.

- Խոցելի տնային տնտեսությունների կողմից զբաղեցրած շենքերի էներգաարդյունավետության բարելավում՝ ներառյալ էներգիայի կառավարման և խնայողության վերաբերյալ տնային տնտեսություններին կրթելու հանձնառությունը և ջանքերը
- Տնային տնտեսությունների համար էներգետիկ ռեսուրսների գների իջեցում
- Ցածր եկամուտներով տնային տնտեսությունների ֆինանսապես ուժեղացում:

ՄԱԿ ԵՏՀ-ի (2021) զեկույցում նշվում է, որ մի շարք ուսումնասիրությունների հիման վրա էներգետիկ աղբատության հաղթահարման առավել ծախսարդյունավետ և արդյունավետ ուղիները հաճախ ամփոփվում են հետևյալ կերպ.

- Բնակելի տարածքների պարսպային կառույցների բարելավում
- Պասիվ ջեռուցման և հովացման տեխնոլոգիաներ
- Էներգիայի արտադրության տեղական հնարավորությունների դիտարկում (պրոսյումերական (արտադրող-սպառող) և վերականգնվող էներգիայի համայնքներ)
- Շենքերի ճարտարագիտական համակարգերի կատարելագործում (ջեռուցման համակարգի փոխարինում, ջերմության վերականգնման տեխնոլոգիաներ և այլն):

Կառավարությունները պետք է մանրակրկիտ ձևով մշակեն, իրականացնեն և մոնիթորինգի ենթարկեն կլիմայական քաղաքականությունը, որպեսզի շրջակա միջավայրի ոլորտում նախատեսվող առաջընթացն ավելորդ ֆինանսական բեռ չհանդիսանա ցածր եկամուտ ունեցող վարձակալների և (կամ) տների սեփականատերերի համար և չիրականացվի բնակատեղերի մատչելիության և անվտանգության հաշվին: Կլիմայական քաղաքականությունները պետք է արդյունավետ լինեն նաև հանածո վառելիքից կախվածությունը մեծացնող շուկայի խզումները թիրախավորելու և հաղթահարելու առումով: Քաղաքապետարանները և հանրային բնակարանային ասոցիացիաները առաջնային պատասխանատուներն են էներգաարդյունավետ, ածխածնի ցածր մակարդակով և մատչելի բնակարաններ ապահովելու համար: Բացի այդ, կառավարությունները պետք է շրջանակային պայմանները սահմանեն այնպես, որ պետական և մասնավոր շենքերի սեփականատերերը շահագրգռված լինեն պլանավորելու, կառուցելու, շահագործելու և պահպանելու կլիմայական և մարդու համար բարենպաստ բնակատեղեր՝ լուծումների փաթեթում ներառելով տարբեր հավելյալ բարեփոխումներ, ինչպիսիք են օրենսդրական փոփոխությունները,

ֆինանսական լծակները և տեղեկատվության ավելի արդյունավետ հանրայնացումը²⁴¹:

ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույցում (2021) սահմանվում է քաղաքականության գործիքակազմ, որը կարող է օգտագործվել կանաչ սոցիալական և մատչելի բնակատեղեր տրամադրելու համար:

- Էներգախնայման նպատակով վերանորոգման համար վարձավճարների չափից շատ բարձրացումն արգելող և վարձավճարների ողջամիտ ինդեքսավորման միջոցով ծախսերի երկարաժամկետ բաշխումն ապահովող օրենսդրության ընդունում:
- Ռազմավարական քաղաքաշինական հատակագծերում ցածր ածխածնային և մատչելի բնակարանների համար հատուկ գոտիների առանձնացում՝ գոտիավորման և կառուցապատման մանրամասն պայմաններով:
- Լիազորմարմնի կողմից գոյություն ունեցող շենքերի գնում և բարեկարգման ծրագրերի համակարգում՝ ցածր վարձավճարով սոցիալական բնակարաններ ապահովելու համար:
- Ներդրումներ ածխածնի ցածր մակարդակով սոցիալական բնակարանների կառուցման և կապիտալ վերանորոգման մեջ:
- Արտոնյալ կամ երկարաժամկետ վարկերի տրամադրում «սոցիալական շենքերի սեփականատերերին»՝ հանձնառու լինելով բնապահպանական և սոցիալական նպատակներին:
- Տանտերերի պարտադիր կամ կամավոր միավորումների ստեղծման և գրանցման հնարավորություն:
- Շենքերի սեփականատերերի, կառավարիչների և վերջնական օգտագործողների էներգաարդյունավետության կարողությունների զարգացում, ինչպիսիք են շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և ծախսերի հարաբերակցությունը, վարձակալների ներգրավման հնարավորությունները, կյանքի ցիկի ծախսերը և այլն:
- Էներգաարդյունավետության տեխնոլոգիական լուծումների մրցույթների անցկացում՝ մատչելի բնակարանների ներառմամբ:²⁴²

Կարևոր է նշելը, որ կայուն բնակարանային ապահովման վերաբերյալ այս չափանիշներից շատերն իրականացվում են գոտիավորման, պլանավորման, շինարարության և զարգացման վերահսկողության միջոցով, ինչը հաճախ ներառում է հողօգտագործման վերաբերյալ օրենսդրություն: Հողօգտագործման մասին օրենքի և բնակարանային ապահովման միջև հաճախ առկա է խնդրահարույց փոխհարաբերություն՝ որոշ դեպքերում պայմանավորված նրանով, որ բնակարանը կարող է լինել հիմնական կապիտալ ակտիվը տնային տնտեսությունների և ներդրողների համար: Մշակողները և ազդեցիկ խմբերը հաճախ ձգտում են համոզել պետական իշխանություններին օգտագործել պլանավորման կարգավորող գործիքներ՝ պաշտպանելու կամ բարձրացնելու բնակարանների կամ բնակարանային ներդրումների շուկայական արժեքը, ինչը կարող է սրել սոցիալական անհավասարությունները: Հանրային շահի տեսանկյունից՝ հողի արժեքի ֆիքսումն առաջարկում է քաղաքականության մի

241 ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույց (2021), էջ 139:

242 ՄԱԿ ԵՏՀ-ի զեկույց (2021), էջ 136/7:

շարք գործիքներ, որոնք թույլ են տալիս կառավարություններին ֆիքսել հողի արժեքի բարձրացումները, որոնք առաջանում են հանրային միջամտությունների արդյունքում, ինչպիսիք են գոտիավորումը, պլանավորումը, ենթակառուցվածքների և ծառայությունների տրամադրումը և բնակարանային պետական ներդրումների միջոցով տարածքի բարելավումը:²⁴³

Չավելված 1. Ի՞նչ է սոցիալական բնակարանային ապահովումը²⁴³

Ներդիր 1.1. Ի՞նչ է սոցիալական բնակարանը: ՏՀԶԿ երկրների¹ ընտրված օրինակներ

Սոցիալական բնակարանների մեծ ֆոնդ (ընդհանուր բնակարանային ֆոնդի առնվազն 20%-ը)

- ▶ **Ավստրիա.** Սոցիալական բնակարանային ֆոնդը (Geförderte Wohnungen), որը կոչվում է սուբսիդավորվող բնակարան կամ քաղաքային բնակարան (Gemeindewohnungen), կառավարվում է տարբեր մատակարարների կողմից, որոնք հետևում են ծախսերի վրա հիմնված վարձավճարի սահմանման միևնույն կանոններին և համապատասխանության չափորոշիչներին: Համապատասխանության չափորոշիչները հիմնված են եկամտի համեմատաբար բարձր շեմերի վրա՝ ուղղորդ հասանելի դարձնելով բոլոր տնային տնտեսությունների մոտ 80%-ին:
- ▶ **Դենմարկ.** Սոցիալական բնակարանները սահմանվում են որպես ընդհանուր բնակարաններ (almene bolig)՝ արտացոլելով դրանց տեսական նպատակը՝ տեղավորել Դանիայի բնակչության լայն շրջանակ, և տրամադրվում են ծախսերի վրա հիմնված վարձավճարներով՝ հանրային շահը ներկայացնող մի շարք բնակարանային ասոցիացիաների միջոցով:
- ▶ *Սոցիալական բնակարանների մեծ ֆոնդ ունեցող այլ երկրներ.* Նիդեռլանդներ:

Սոցիալական բնակարանների միջին ֆոնդ (ընդհանուր բնակարանային ֆոնդի 10-19%-ը)

- ▶ **Ֆինլանդիա.** կառավարության կողմից սուբսիդավորվող վարձակալական տներն առաջարկում են ծախսերի վրա հիմնված վարձավճար, մինչդեռ համապատասխանությունը տեսականորեն ունիվերսալ է, իսկ գործնականում հիմնված է սոցիալական հիմքերի և կարիքների վրա:
- ▶ **Ֆրանսիա.** Ֆրանսիայի սոցիալական բնակարանային համակարգը (Habitation à loyer modéré) ապահովում է ծախսերի վրա հիմնված վարձավճարով բնակարանների վարձակալության հնարավորություն ցածր և միջին եկամուտ ունեցող վարձակալներին: Սոցիալական միախառնման լայնածավալ և աճող նախաձեռնությունների շնորհիվ սոցիալական բնակարաններն ընդգրկում են սոցիալական լայն սպեկտր՝ համեմատաբար բարձր շեմերի եկամտի շնորհիվ (Ֆրանսիայի բնակչության մոտ 60%-ն ունի հնարավորություն): Այն ավելի ու ավելի շատ է դառնում ցածր եկամուտ ունեցող վարձակալների տուն, ինչը համահունչ է վերջին տասնամյակներում որդեգրված քաղաքականության նպատակներին:
- ▶ *Սոցիալական բնակարանների միջին ֆոնդ ունեցող այլ երկրներ.* Իսլանդիա, Իռլանդիա, Միացյալ Թագավորություն²:

Սոցիալական բնակարանների փոքր ֆոնդ (ընդհանուր բնակարանային ֆոնդի 2-9%-ը)


- ▶ **Ավստրալիա.** Սոցիալական բնակարանները սուբսիդավորվող վարձակալական բնակարաններ են, որոնք տրամադրվում են շուկայականից ցածր վարձավճարներով, սովորաբար ոչ ավելի, քան վարձակալի համախառն եկամտի 30%-ը՝ կառավարության, ոչ առևտրային կամ ոչ պետական կազմակերպությունների կողմից՝ օգնելու այն մարդկանց, ովքեր չեն գտնել հարմար բնակարան մասնավոր վարձակալության շուկայում:
- ▶ **Գերմանիա.** Թեև սոցիալական բնակարանների մոդելները Գերմանիայի տարբեր շրջաններում տարբեր են, եզրույթն ընդհանուր առմամբ վերաբերում է բնակարան տրամադրողներին պետական սուբսիդավորում տրամադրելուն, որոնք ֆիքսված ժամկետով և կարգավորվող պայմաններով բնակարաններ են տրամադրում համապատասխան տնային տնտեսություններին (Marquardt and Glasser, 2020[12]):
Սոցիալական բնակարանների փոքր ֆոնդ ունեցող այլ երկրներ. Բելգիա, Կանադա, Հունգարիա, Իտալիա, Ճապոնիա, Կորեա, Մալթա, Նոր Զելանդիա, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Սլովենիա, Շվեյցարիա, Կորեա, Թուրքիա և Միացյալ Նահանգներ:

Սոցիալական բնակարանների շատ փոքր ֆոնդ (ընդհանուր բնակարանային ֆոնդի 2%-ից պակաս)

- ▶ **Կոլումբիա.** Սոցիալական բնակարանները տրամադրվում են ինչպես վարձակալությամբ, այնպես էլ սեփականության իրավունքով՝ «Vivienda de Interés» ծրագրի միջոցով: 2019 թվականից «Semillero de propietarios» ծրագիրը տրամադրում է սոցիալական վարձով բնակարաններ սուբսիդավորվող վարձավճարներով՝ անապահով տնային տնտեսությունների համար:
- ▶ **Լատվիա.** Սոցիալական բնակարանները, որոնք շահագործվում են քաղաքապետարանների կողմից, բաց են այն տնային տնտեսությունների համար, որոնք բավարարում են նվազագույն եկամտի պահանջը: Քաղաքային բնակարանները տրամադրվում են նաև որոշ խոցելի և ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների՝ «Բնակարանի խնդիր լուծման մասին» օրենքի համաձայն:
- ▶ *Սոցիալական բնակարանների շատ փոքր ֆոնդ ունեցող այլ երկրներ.* Չեխիայի Հանրապետություն, Էստոնիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ և Իսպանիա:

Ծանոթագրություն. 1. ՏՀԶԿ և ԵՄ բոլոր երկրներում սոցիալական բնակարանների ընդհանուր նկարագրի համար տես ՏՀԶԿ ՄԲՏԸ, 4.3 ցուցիչը: Միացյալ Թագավորությունում բնակարանային քաղաքականության մասով իրավասությունները փոխանցվել են. որպես այդպիսին, Միացյալ Թագավորությունում սոցիալական բնակարանային համակարգերը որոշ առումներով տարբերվում են: Աղբյուր. ՏՀԶԿ ՄԲՏԸ, 4.3 ցուցիչ, ՏՀԶԿ QUASH 2019, Եվրոպայի բնակարանային հարցեր, Նիլսեն և Հաագերուպ (2017[13]), Սթենլոն, Ուայթեդ և Առիգոյտիա (2014 [14]):

Հավելված 2. Անօթևանության և բնակարանային բացառման եվրոպական տիպաբանություն (ETHOS Light)



Անօթևանության ներդաշնակեցված սահմանում վիճակագրական նպատակներով

Երբեմն կոչվում է «ETHOS Light», սա ETHOS տիպաբանության տարբերակն է, որը մշակվել է 2007 թվականի Եվրոպական հանձնաժողովի ուսումնասիրության համատեքստում՝ «Անօթևանության չափումը Եվրոպական միության մակարդակով»: Այն անօթևանության ներդաշնակեցված սահմանում է վիճակագրական նպատակներով: Այն պարզամտիկ գործիք է անօթևանների վերաբերյալ տվյալների հավաքագրման համար, այլ ոչ թե հայեցակարգային և գործառական սահմանում, որն օգտագործվում է քաղաքականության և գործելակերպի մասով մի շարք նպատակների համար:

ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱ		ԿԵՆՍԱԳԱՅՄԱՆՆԵՐ	
1	Դրսում բնակվող մարդիկ	1	Հանրային տարածքներ/ արտաքին վայրեր
2	Արտակարգ իրավիճակների համար կացարաններում բնակվող մարդիկ	2	Գիշերային կացարաններ
3	Անօթևանների համար կացարաններում բնակվող մարդիկ	3	Անօթևան մարդկանց համար հոսթելներ
		4	Ժամանակավոր կացարաններ
		5	Անցումային օժանդակ կացարաններ
		6	Կանանց ապաստաններ կամ փախստականների կացարաններ
4	Հաստատություններում բնակվող մարդիկ	7	Առողջապահական հաստատություններ
		8	Քրեակատարողական հիմնարկներ
5	Ոչ ավանդական կացարաններում բնակվող մարդիկ՝ բնակարանի բացակայության պատճառով	9	Շարժական տներ
		10	Ոչ ավանդական շենքեր
		11	Ժամանակավոր կառույցներ
6	Անօթևաններ, ովքեր ժամանակավոր բնակվում են բնտանիքի և բնկերների հետ ավանդական բնակարաններում (բնակարանի բացակայության պատճառով)	12	Ավանդական բնակարաններ, բայց ոչ անձի սովորական բնակության վայրը

Հավելված 3. ՏՀԶԿ-ի բնակարանային ապահովման մատչելիության միջոցներ 244

Աղյուսակ 1.1. ՏՀԶԿ և ԵՄ երկրներում մատչելիության չափման միջոցների ընտրություն

Բնակարանների մատչելիությունը գնահատելու ընդհանուր մետրիկաներ

Չափման տեսակ	Ցուցիչների օրինակներ	Առավելություններ	Սահմանափակումներ	ՏՀԶԿ տվյալներ և օրինակներ
Գին-եկամուտ հարաբերակցություն	- Տուն-գին-եկամուտ հարաբերակցություն - Վարձավճար-գին-եկամուտ հարաբերակցություն	- Համեմատաբար պարզ, ինտուիտիվ - Հիմնվում է տվյալների վրա, որոնք ընդհանուր առմամբ մատչելի են շատ երկրներում - Ցույց է տալիս, ընդհանուր մակարդակով, թե ինչպես է գների և եկամտի միջև կապը տատանվում ժամանակի ընթացքում և (կամ) շուկաներում, օրինակ՝ տարբեր երկրներում	- Չի տրամադրում բնակարանային ծախսերի բաշխման և բնակարանների մատչելիության վերաբերյալ որևէ ցուցում (օրինակ՝ ով ունի/չունի մատչելի բնակարանը) - Չի տրամադրում բնակարանի որակի որևէ ցուցում - Հաշվի չի առնում փոխառության հետ կապված ծախսերը	ՏՀԶԿ մատչելի բնակարանների տվյալների ջրեմարտակ, ցուցիչ HM 1.2
Բնակարանային ծախսեր-եկամուտ հարաբերակցություն	- Բնակարանային ծախսերի բեռ - Բնակարանային ծախսերի գեոմարտաբեռնվածություն՝ այն մակարդակ (օրինակ՝ տնային տնտեսությունների մասնաբաժինը, որոնք տնօրինվող եկամտի ավելի քան 40%-ը ծախսում են բնակարանային ծախսերի վրա)	- Համեմատաբար պարզ, ինտուիտիվ - Հիմնվում է տվյալների վրա, որոնք ընդհանուր առմամբ մատչելի են շատ երկրներում - Կարելի է տարանջատել տնային տնտեսությունների մակարդակով իրական բնակարանային ծախսերը չափելու համար	«Ծանրաբեռնվածության» շեմը սահմանվում է կամայական մակարդակով, որը սերմ է - Ֆիքսված անկախ տնային տնտեսությունների բնութագրերից կամ եկամուտների բաշխման մեջ կապը դիտելի - Չի տրամադրում բնակարանի որակի որևէ ցուցում	ՏՀԶԿ մատչելի բնակարանների տվյալների ջրեմարտակ, ցուցիչ HC 1.1 և HC 1.2
Մնացորդային եկամտի չափումներ	- Կացարանի հետ կապված աղքատություն - Բնակարանային աղքատություն	- Ընդգրկում է այն եկամտի մակարդակը, որը տնային տնտեսությանը մնացել է բնակարանային ծախսերը վճարելուց հետո՝ գնահատելու համար, թե որքանով է տնային տնտեսությունների բավարար եկամուտ մնում ոչ բնակարանային ծախսերի համար՝ բնակարանի համար վճարելուց հետո - Կարող է օգտակար լինել ցածր և միջին եկամուտ ունեցող խոցելի տնային տնտեսությունների շրջանում մատչելիության բացերը չափելու համար	- Կարող է պահանջել լրացուցիչ տվյալների հավաքում ոչ բնակարանային ծախսերի նվազագույն զանգվածի արժեքի վերաբերյալ - Կամայականություն՝ կապված այն բանի հետ, թե որն է համարվում նվազագույն եկամուտ, որն անհրաժեշտ է տնային տնտեսությանը ոչ բնակարանային ծախսերի համար - Չի տրամադրում բնակարանի որակի որևէ ցուցում (օրինակ՝ տնային տնտեսությունները ինչի՞ համար են վճարում) - Կարող է ապրուստի համար անհրաժեշտ քանակությամբ ծախսերի հետ կապված խնդիրները սխալմամբ որակել որպես բնակարանային ծախսերի հետ կապված խնդիրներ	ՏԵՄ ՏՀԶԿ (2020[9])
Բնակարանի որակի չափումներ	- Սենյակներ մեկ անձի համար - Գերբնակեցման մակարդակ - Բնակարանից գրկվածության մակարդակ	- Գերբնակեցումը կարելի է գնահատել հիմնվելով շատ պարզ (կամ ավելի բարդ) սահմանման վրա - Ապահովում է պատկերացումներ բնակարանների մատչելիության հիմնական չափումների վերաբերյալ, օրինակ՝ ինչի համար են վճարում տնային տնտեսությունները	- Սոցիալական և բնապահպանական նպատակների միջև պոտենցիալ փոխզիջումներ բնակարանի չափի հետ կապված ցուցանիշների մեկնաբանման ժամանակ - Միջերկրական/մշակութային տարբերություններ, թե որ հատկանիշներն են առավել համապատասխան բնակարանային որակը գնահատելու համար - Որակի որոշ չափումներ պահանջում են բնակարանների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ թաղամասցված տվյալներ, որոնք կարող են անհասանելի լինել	ՏՀԶԿ մատչելի բնակարանների տվյալների ջրեմարտակ, ցուցիչներ HC 2.1, HC 2.2 և HC 2.3
Բնակարանների մատչելիության սուբյեկտիվ ցուցիչներ	- Գոհունակություն լավ, մատչելի բնակարանների արկարթյունից - Բնակարանը որպես կարճաժամկետ կարևոր ինդիկ	Կարող է լրացնել բնակարանային արդյունքների մյուս չափումները և կարող է օգնել ավելի լավ հասկանալ բնակարանային բավարարվածության որոշիչ գործոնները	- Ըմբռնումներն ու անկնայիքներն այն մասին, թե ինչ է նշանակում լավ որակի մատչելի բնակարան, տարբերվում են անհատների, երկրների և մշակույթների միջև և կարող են կախված լինել սոցիալ-ժողովրդագրական բնութագրերից: - Գոհունակության մակարդակը կարող է կախված լինել երկրի ընդունչ հատուկ գործոններից՝ ներառյալ ընդհանուր տնտեսական միջավայրը և (կամ) սոցիալական պաշտպանության բարդականության մակարդակը	ՏՀԶԿ մատչելի բնակարանների տվյալների ջրեմարտակ, ցուցիչ HC 1.4

Աղբյուր. հիմնված է բազմաթիվ աղբյուրների վրա՝ (Rosenfeld, 2017[10]), (ՏՀԶԿ, 2020[11]), ՏՀԶԿ QUASH 2019, ազգային վիճակագրական գրասենյակի կայքէջ, բնակարանային հարցերով համապատասխան ազգային նախարարության/ վարչության/ գրասենյակի կայքէջեր:

244 ՏՀԶԿ (2020), Սոցիալական բնակարանային ապահովում. անցյալ և ապագա բնակարանային ապահովման քաղաքականության անկյունաքարը, Զբաղվածության, աշխատանքի և սոցիալական հարցերի քաղաքականության ամփոփագրեր, ՏՀԶԿ, Փարիզ, <http://oe.cd/social-housing-2020>:

Հավելված 4. Անօթևանության և բնակարանային բացառման եվրոպական տիպաբանություն (ETHOS)

	ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱ	ԿԵՆՍԱՊԱՊԱՅՄԱՆՆԵՐ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄ
ՀԱՅԵՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱ	1 Դրսում բնակվող մարդիկ	1.1 Հանրային տարածքներ կամ	Ապրում են փողոցներում կամ հանրային տարածքներում՝ առանց կացարանի, որը կարելի է սահմանել որպես բնակելի տարածք
	2 Արտակարգ իրավիճակների համար կացարաններում բնակվող մարդիկ	2.1 Գիշերային կացարաններ	Մարդիկ, ովքեր չունեն մշտական բնակության վայր և օգտվում են գիշերային կացարանից կամ այլ հասանելի կացարաններից
	3 Անօթևանների համար կացարաններում բնակվող մարդիկ	3.1 Անօթևան մարդկանց համար հոսթելներ 3.2 Ժամանակավոր կացարաններ 3.3 Անցումային օժանդակ կացարաններ	Այն դեպքում, երբ կացությունը ժամանակավոր է
	4 Կանանց ապաստաններում բնակվող մարդիկ	4.1 Կացարան կանանց ապաստանում	Ընտանեկան բռնությունից տուժած կանայք, երբ կացությունը ժամանակավոր բնույթ է կրում
	5 Միգրանտների համար կացարաններում բնակվող մարդիկ	5.1 Ժամանակավոր կացարաններ/ ընդունման կենտրոններ 5.2 Միգրանտ աշխատողների կացարաններ	Միգրանտներ, ովքեր գտնվում են ընդունման կամ կարճաժամկետ կացարաններում՝ իրենց միգրանտի կարգավիճակի պատճառով
	6 Մարդիկ, ովքեր ազատ են արձակվելու հաստատություններից	6.1 Քրեակատարողական հիմնարկներ 6.2 Բժշկական հաստատություններ (*) 6.3 Երեխաների հաստատություններ/տներ	Զուրկ բնակարան՝ ազատ արձակվելուց առաջ Մուրման և ավելի երկար, քան անհրաժեշտ է, բնակարանի բացակայության պատճառով Զուրկ բնակարան (օրինակ մինչև 18 տարին լրանալը)
	7 Մարդիկ, ովքեր ստանում են երկարաժամկետ աջակցություն (անօթևանության պատճառով)	7.1 Բնակելի խնամք՝ տարեց անօթևան մարդկանց համար 7.2 Օժանդակ կացարան նախկինում անօթևան մարդկանց համար	Երկարաժամկետ կացարաններ՝ նախկինում անօթևան մարդկանց համար՝ խնամքով (սովորաբար մեկ տարուց ավելի):
	8 Մարդիկ, ովքեր ապրում են անապահով կացարաններում	8.1 Ժամանակավոր կացություն ընտանիքի կամ ընկերների հետ 8.2 Օրինական ենթա/վարձակալության բացակայություն 8.3 Հողերի ապօրինի զավթում	Բնակվում են ավանդական բնակելի տարածքներում, բայց ոչ իրենց սովորական բնակության վայրում՝ բնակարանի բացակայության պատճառով: Բնակարանում կացություն՝ առանց օրինական վարձակալության
	9 Մարդիկ, ովքեր գտնվում են վտարման վտանգի տակ	9.1 Իրավական ակտերը կիրառված են (վարձակալների դեպքում) 9.2 Վերատիրապետման ակտ (սեփականատերերի դեպքում)	Երբ վտարման ակտն արդեն գործում է Երբ գրավառում վերատիրապետման իրավունք ունի
	10 Մարդիկ, ովքեր գտնվում են բռնության վտանգի տակ	10.1 Ոստիկանության կողմից արձանագրված միջադեպեր	Երբ ոստիկանությունը միջոցներ է ձեռնարկել՝ ընտանեկան բռնության գոհերի համար անվտանգ վայր ապահովելու համար
	11 Մարդիկ, ովքեր ապրում են ժամանակավոր / ոչ ավանդական բնակելի տարածքներում	11.1 Շարժական տներ 11.2 Ոչ ավանդական շենքեր 11.3 Ժամանակավոր կառույցներ	Կացարաններ, որոնք նախատեսված չեն որպես մշտական բնակության վայր Ժամանակավոր կացարան, խրճիթ կամ տնակ Ժամանակավոր կառույց, խրճիթ կամ տնակ
	12 Մարդիկ, ովքեր ապրում են ոչ պիտանի բնակելի տարածքներում	12.1 Բնակության համար ոչ պիտանի տարածքներ	Սահմանված է որպես բնակության համար ոչ պիտանի՝ ըստ ազգային օրենսդրության կամ շինարարական կանոնակարգերի
	13 Մարդիկ, ովքեր ապրում են գերբնակեցված պայմաններում	13.1 Գերբնակեցման բարձրագույն ազգային նորմ	Սահմանված է որպես հատակի մակերեսի կամ օգտագործվող սենյակների ազգային խտության չափանիշը գերազանցող

Նշում. Կարճաժամկետ կացությունը սովորաբար սահմանվում է որպես մեկ տարուց պակաս ժամկետով կացություն:
Երկարաժամկետ կացությունը սահմանվում է որպես մեկ տարուց ավելի ժամկետով կացություն:

(*) Ներառյալ թմրամոլների վերականգնողական կենտրոններ, հոգեբուժական հաստատություններ, և այլն:

Աբյուրը՝ <https://www.feantsa.org/en/toolkit/2005/04/01/ethos-typology-on-homelessness-and-housing-exclusion>
<https://www.feantsa.org/download/ethos2484215748748239888.pdf>

Հավելված 5. Նվազագույն մակերես և չափանիշներ. Իռլանդիա²⁴⁵

Բնակարանի ընդհանուր նվազագույն մակերես

Բնակարան-ստուդիա	37 քմ
Մեկ ննջասենյակ	45 քմ
Երկու ննջասենյակ (3 անձ)	63 քմ
Երկու ննջասենյակ (4 անձ)	73 քմ
Երեք ննջասենյակ	90 քմ

Հյուրասենյակի/ճաշասենյակի/խոհանոցի նվազագույն ընդհանուր մակերես և հյուրասենյակի/ճաշասենյակի նվազագույն լայնություն

Ննջասենյակների ընդհանուր մակերես

Բնակարանի տեսակ	Նվազագույն լայնություն	Նվազագույն մակերես
Բնակարան-ստուդիա	4 մ (Հյուրասենյակ/ճաշասենյակ/ննջասենյակ)	30 քմ
Մեկ ննջասենյակ	2.1 մ	7.1 քմ
Երկու ննջասենյակ (3 անձ)	2.8 մ	11.4 քմ
Երկու ննջասենյակ (4 անձ)	2.8 մ	13 քմ

Ննջասենյակների ընդհանուր մակերես

Մեկ ննջասենյակ	11.4. քմ
Երկու ննջասենյակ (3 անձ)	13 + 7.1. քմ = 20.1 քմ
Երկու ննջասենյակ (4 անձ)	11.4 + 13 քմ = 24.4 քմ
Երեք ննջասենյակ	11.4 + 13 + 7.1 քմ = 31.5 քմ

Խորդանոցային տարածքի նվազագույն մակերես

Բնակարան-ստուդիա	3 քմ
Մեկ ննջասենյակ	3 քմ
Երկու ննջասենյակ (3 անձ)	5 քմ
Երկու ննջասենյակ (4 անձ)	6 քմ
Երեք կամ ավելի ննջասենյակ	9 քմ

245 ՏՀԶԿ (2021), Կառուցում ենք՝ ավելի լավ վաղվա օրվա համար. Քաղաքականություն՝ բնակարաններն ավելի մատչելի դարձնելու համար, Զբաղվածության, աշխատանքի և սոցիալական հարցերի քաղաքականության ամփոփագրեր, ՏՀԶԿ, Փարիզ, էջ 7: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://read.oecd-ilibrary.org/view/?ref=1060_1060075-0ejk3l4u1l&title=ENG_OECD-affordable-housing-policies-brief:


Լոգասենյակի/գուգարանի ընդհանուր մակերես

Բնակարան-ստուդիա	4 քմ
Մեկ ննջասենյակ	5 քմ
Երկու ննջասենյակ (3 անձ)	6 քմ
Երկու ննջասենյակ (4 անձ)	7 քմ
Երեք ննջասենյակ	9 քմ

Շենքի ներքին և արտաքին շրջակա տարածքում հանրային հարմարությունների նվազագույն մակերես

Բնակարան-ստուդիա	4 քմ
Մեկ ննջասենյակ	5 քմ
Երկու ննջասենյակ (3 անձ)	6 քմ
Երկու ննջասենյակ (4 անձ)	7 քմ
Երեք ննջասենյակ	9 քմ

Հավելված 6. Գանտի աղյուսակ. սոցիալական բնակարանային ապահովման ծրագիր, 1-ին փուլ. շինհրապարակ²⁴⁶



Թիրախային 59 շաբաթ. Նախապայմանագրային ծրագիր ոչ բարդ Նախագծերի համար

246 Իռլանդիայի կառավարություն (2022), Բաղադրային կայուն բնակարանաշինություն. Նախագծման չափանիշներ նոր բնակարանների համար. Ուղեցույցներ պլանավորող մարմինների համար, Բնակարանաշինության, տեղական կառավարման և մշակութային ժառանգության դեպարտամենտ: 247 Իռլանդիայի կառավարություն (2022), Որակյալ բնակարանների Նախագծման ձեռնարկ [Design Manual for Quality Housing]: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.gov.ie/en/publication/b3e02-design-manual-for-quality-housing/>, բաժին 2.2.7:

Եվրոպական սոցիալական խարտիան, որն ընդունվել է 1961թ.-ին և վերանայվել 1996թ.-ին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի երկնամասակն է տնտեսական և սոցիալական իրավունքների ոլորտում: Այն երաշխավորում է մարդու իրավունքների լայն շրջանակ՝ կապված աշխատանքի, բնակարանի ապահովման, առողջապահության, կրթության, սոցիալական պաշտպանվածության և բարեկեցության հետ: Համաեվրոպական մակարդակում որևէ այլ իրավական գործիք չի տրամադրում սոցիալական իրավունքների այնպիսի ընդգրկում և լիարժեք պաշտպանություն, ինչպես նախատեսված է խարտիայով:

Ուստի խարտիան դիտարկվում է որպես Եվրոպայի սոցիալական սահմանադրություն և էական բաղադրիչ է մայրցամաքի մարդու իրավունքների կառուցման գործում:

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:



European
Social
Charter

Charte
sociale
européenne

